

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Վ. ՈՐԴՈՅԱՆ

# ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀՆԹԵՐՑԱՐԱՆ

ԱԴԻԲԵԶԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՅՆԵՐԻ 6-ԻԴ

ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1939











05 FEB 2018

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Վ. ՈՐԴՈՅԱՆ

# Հ Ա Յ Ո Ց Լ Ե Զ Վ Ի

## Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ր Ա Ն

ԱԴԻԲԵՋԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 6-րդ

ՅԵՎ,

ՌՈՒՍԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 4-րդ

ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հասնազած և Հայկական ԽՍՀ Լուստողկոմատի կողմից



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1939



А. Айрапетян, В. Ордоян  
Книга для чтения  
для не армянских школ  
Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.



11-2879697



## 1. Կ Ա Ր Դ Ա

Կարդա՛, այ իմ խելոք մանուկ,  
Կարդա՛, գրի՛ր տարին բոլոր,  
Կարդացողի խելքն է կարուկ,  
Միտքը սլայծառ ու լուսավոր:

Գիրք կարդալով դու գրքերում  
Շատ նորանոր բան կիմանաս,  
Շատ շատերից շատ բաներում  
Մտքով հեռու կսլանաս:

Դու կիմանաս ինչու մարդիկ  
Պեռք է ապրեն իրար համար,  
Ինչն է մարդկանց ցավն ու կարիք,  
Ինչ է լույսը, ինչը՝ խավար:

## 2. ՔՈ ԳՈՐԾԸ ԴՊՐՈՑՈՒՄՆ Ե

Վաղ առավոտյան Սաթիկը վազելով ներս մտավ կուլ-  
տնտեսության գրասենյակը:

— Ի՞նչ ես ուզում,— հարցրեց հորեղբայր Սիմոնը:

— Մայրիկս ուղարկեց, վոր իր փոխարեն կովերը  
կթեմ: Նա հիվանդ է:

— Կթե՞լ: Վո՛չ: Դու գնա դպրոց: Նրա փոխարեն ու-  
րիշին ենք ուղարկել:

— Յես կթե՛լ գիտեմ, հորեղբայր Սիմոն:

— Իսկ ըր փոխարեն ո՞վ պիտի սովորի: Շուտով դըպ-  
րոց գնա:

Սաթիկը դուրս յեկավ ու վազեց դպրոց:



### 3. ԴՊՐՈՑԻ ՀԱՄՓԱՆ

Ձմեռվա բուքին,  
Սառնամանիքին  
Դպրոցի ճամփան  
Դժվար է, յերկար  
Շատերի համար:

Ձվարթ դարունքին  
Յերգին ու ծաղկին  
Դպրոցի ճամփան  
Կարճ է, դուրալի  
Կարճես ավելի:

Իսկ ով սեր ունի  
Ինձ պես ուսումի,  
Դպրոցի ճամփան  
Միշտ կարճ է, սիրուն,  
Ձմեռ թե դարուն:

### 4. ԾԵՐ ԲԱՆՎՈՐԸ

Բանվոր Մինասը ծերացել էր. ել չէր աշխատում.  
Կենսաթոշակ էր ստանում:

Մի որ, յերբ ռադիոն խոսում էր, Մինասի թողը,  
պիտներ Կիմն ասաց.

— Պապի', քո գործարանի մասին են խոսում:

— Ի՞նչ են ասում, բա'լաս:

— Ասում են, վոր պլանը չեն կատարել:

— Վո՞ր ցեխը:

— Հալոցի ցեխը:

— Հալոցի՞ ցեխը:

— Այո':

Ծերունին լռեց:

Ամբողջ գիշերը նրա քունը չտարավ:

Առավոտյան վաղ Մինասը վեր կացավ ու գնաց գործարան:



ԱԹԱԲԵԿ ԽՆԿՈՅԱՆ

### 5. ԽՈՁՆ ՈՒ ԱԳՈՒՍՎԸ

Մի դարավոր կաղնու տակ  
Խոզը ագահ ու անհագ  
Այնքան կաղին զխավեց,  
Վոր ցած ընկավ ու փռվեց:  
Ջարթնեց քնից ու տակից  
Ծառը փորեց արմատից:

— Ի՞նչ էս անում, ա'յ անդետ,  
Կչորանա արևից,—

Ագռավն ասավ վերևից:

— Չորանում ե՛ չորանա,  
Ինձ ի՞նչ ոգուտ՝ զորանա,  
Միայն կաղին ունենամ,  
Ուտեմ, պառկեմ, գիրանամ:  
— Ա'յ ապերախտ կենդանի,  
Ով քեզ նման վիզ ունի,  
Իր կույր աչքով չի տեսնի,  
Վոր կաղինը հյուսթալի  
Լոկ այս ծառն է ձեզ տալի,—  
Ագռավն ասավ խոզուկին,  
Այն կախզլուխ կուզիկին:



Սեղայի մայրիկը գործով դարձոց եր յեկել: Յերբ նա վերարկուն հանում էր՝ յերեսաները տեսան, վոր նրա կրծքին Կարմիր Դրոշի շքանշան է փայլում:

— Տե՛ս ե՛ր, — զարմացած բացականչեց Զորիկը, — մորաքույրը շքանշան ունի:

— Ես շքանշանն ինչո՞ւ համար ես ստացել, պատմիր մեզ, մորաքույր, խնդրեցին յերեսաները:

— Լավ, դե՛ լսեցեք, պատմեմ:

1920 թվին դժվար եր մեր գրությունը: Դաշնակները դեռ մեր յերկրումն էին. կռվում էինք, վոր դուրս քշենք նրանց: Դիլիջանի, Շամշադինի, Լոռու բոլոր տղամարդիկ գնացել էին նրանց դեմ կռվելու: Կռվողներին մեջ կանայք ել կային, յես ել էյի:

Մի անգամ անտառում, մաուղերիստները հանկարծ հարաձկվեցին մեզ վրա: Մերոնք չփութվեցին, չզիտեյին ինչ անեն:

Յես չհամբերեցի, ճչացի:

— Մի՛ վախենաք, ընկերներ՛ը, գրո՛հ տվեք: Ու հրացանը ձեռքիս՝ առաջ վազեցի: Մերոնք սիրտ առան, «ուռա» գոռացին ու իմ հետևից գրոհ տվին:

Թշնամին փախավ:

Ա՛յ, սրա համար եմ ստացել Կարմիր Դրոշի շքանշանը:

## 7. Տ Ե Ր Ե Վ Ա Թ Ա Փ

— Ա՛յ փոքրիկներ, ա՛յ սիրուններ, — Ասավ քամին տերևներին.

Աչուսն եկավ, մոտ է ձմեռ,

Ի՞նչ եք գողում ծառի ծերին:

Վոսկի, դեղին, վառ ծիրանի

Դույններ հագեք խայտարդետ

Ու ճյուղերից ձեր մայրենի

Յեկեք ինձ հետ, փախեք ինձ հետ...

Յեկեք տանեմ հեշտ ու անթև,

Անհետ ճամփով, անհայտ տեղեր,

Չեք իմանա այսուհետև

Ել ինչ ե գող, ինչ ե ձմեռ...

Տերևները հենց լսեցին,  
Նախշուն-նախշուն դույններ հագան,  
Սվավալով տխուր յերգեր՝  
Քամու թևին թռան, փախան:

## 8. ԱՇՆԱՆ ՎԵՐՁԸ

Սարի լանջին

Մեզի միջում

Խոխոջում է

Ու տրտնջում

Ձուրը բարակ,

Ձուրը տխուր.

— Վաշ-վի՛շ, վաշ-վի՛շ,

Ո՞ւր կորան, ո՞ւր

Տերև ու խոտ,

Վարդը շաղոտ,

Սարվորն ուրախ,

Սրինգ ու խաղ:

Շուրջս դատարկ,

Շուրջս տխուր...

Վաշ-վի՛շ, վաշ-վի՛շ,

Ո՞ւր կորան, ո՞ւր...

## 9. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾ

Անդրեյն ու Ահմեդն իրար չեն ճանաչում:

Անդրեյն ապրում է Մոսկվայում: Նա աշխատում է տեքստիլ գործարանում:

Իսկ Ահմեդն ապրում է հեռո՛ւ—հեռո՛ւ Թուրքմենյա-տանում:

Նա աշխատում է բամբակի դաշտում—բամբակ է մշա-կում:

Ահմեդն ու Անդրեյն ապրում են Խորհրդային Միու-թյան զանազան տեղերում, խոսում են զանազան լեզվով:

Նրանք իրարից հեռու յեն ապրում, բայց միևնույն գործն են կատարում՝ չիթ են պատրաստում:

Ահմեդը կոլտնտեսության մեջ բամբակ է մշակում, Անդրեյն ել Մոսկվայի գործարանում բամբակից չիթ է գործում:





## ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ

### 10. ՔՍԱՆՎԵՑԻ ՅԵՐԳԸ

«Մենք կմեռնենք,  
Բայց կոմունան  
Վողջ կմնա  
Հավիտյան»:

Այսպես ասին  
Քսանվեցը  
Դահլճներին  
Այն դաժան:

Այժմ հաղար—  
Հաղար անիվ  
Գործարանում  
Դղրդում,

Հաղար—հաղար  
Տրակտորներ  
Մեր դաշտերում  
Հռնդում,

Քսանվեցի  
Յերգն են յերգում,  
Աշխարհով մեկ  
Զիլ կանչում.

«Նրանք մեռան,  
Բայց կոմունան  
Վողջ կմնա  
Հավիտյան»...

11. Բ Ո Ւ Ը

1

Շատ է պատահում, վոր հրդեհ ընկած տանը յերեխա-  
ներ են մնում: Նրանց աղատելը հնարավոր չի լինում, վո-  
րովհետև նրանք վախից թագնվում են ու լռում, ծուխն ել-  
չի թողնում, վոր յերեխան: Յերեխաներին աղատելու հա-  
մար սովորեցրած չներ կան:

Այս չներին պահում են հրչեջները, և յերբ մի տուն  
հրդեհ է ընկնում, նրանք այդ չներին ուղարկում են մա-  
նուկներին աղատելու:

Այդպիսի մի շուն կար, վորը տասերկու յերեխա յեր-  
աղատել: Այդ շան անունը Բոր էր:

2

Մի անգամ մի տուն եր վառվում: Յերբ հրչեջները յե-  
կան, մի կին վազեց նրանց մոտ և լաց լինելով ասաց, վոր-  
իք յերկու տարեկան աղջիկը մնացել է տանը: Հրչեջները  
ներս ուղարկեցին Բորին: Բորը վազեց ու չքացավ ծխի-  
մեջ: Հինգ րոպեյից հետո նա, ատամներով աղջկա չալի-  
կից բռնած, դուրս թռավ տանից: Մայրը գրկեց աղջկան  
և ուրախությունից լաց յեղավ: Աղջիկը կենդանի յեր:  
Հրչեջները փաղաքում եյին շանը և այս ու այն կողմից  
նայում, վոր տեսնեն՝ հո չի՞ վնասվել:

Բայց Բորն ուզում եր նորից ներս վազել: Հրչեջները



կարծում եյին, թե ներսն ելլի մեկը կա և բաց թողին շա-  
նը: Բոքը ներս վազեց և շուտով դուրս յեկավ մի ինչ վոր  
բան ատամներով բռնած:

Յերբ մարդիկ մոտ վազեցին ու տեսան, թե ինչ է բե-  
րել նա, ծիծաղից թուլացան:

Շան բերածը մի մեծ տիկնիկ էր:

## 12. Ճ Ա Խ Ա Ր Ա Կ

Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ,  
Մանի՛ր սպիտակ մալանչներ,  
Մանի՛ր թեկեր հաստ ու բարակ,  
Վոր յես հոգամ իմ ցավեր:

Տիգրանիկս գուլպա չունի,  
Հանդ է գնում վոտաբաց,  
Գաբրիելս չուխա չունի,  
Միշտ անում է սուգ ու լաց:

Դեռ հարս եյի, վոր դործեցի,  
Քանի կարպետ, խալիչա,  
Բայց դրանցից չուտ զրկվեցի,  
Հիմա չունեմ մի քեչա:

Կարմիր որս յերբ սևացավ՝  
Յերբ պարտք մնաց, թեև քիչ,  
Պարտատիրոջ սիրտն ել սևցավ,  
Յեկավ, տարավ ամեն ինչ:

Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ,  
Մանի՛ր սպիտակ քուլաներ,  
Մանի՛ր թեկեր հաստ ու բարակ,  
Վոր յես հոգամ իմ ցավեր:

## 13. ԻՎԱՆՆՆ

Իվանեն դաշտում աշխատում էր:

— Բարի ոք, — ասաց դյուղի տանուտերը և կանգնեց  
Իվանեյի գլխին՝ ձիավոր գլխերների հետ միասին:

— Բարեւ, — պատասխանեց Իվանեն, հազիվ գլուխը  
բարձրացնելով:

— Այս առավոտ կանչել եյի գրասենյակ, ինչո՞ւ չե-  
կար:

— Ա՛յ մարդ, աշխատանքի այս յեռուն որերին ինչ-  
պե՞ս արտա կիսատ թողած՝ գրասենյակ գալի: Մի՞թե  
չգիտես մենակ աշխատավորի վիճակը:

— Այդ իմ գործը չե: Ինձ հրամայված է և յես պար-  
տավոր եմ ճշտությամբ կատարել հրամանը:

— Ի՞նչ ես ուզում, ասածդ ի՞նչ է:

— Բավական է, ոտում եմ: Յես չեմ յեկել այստեղ  
խոսք ու զրույց անելու: Յեկել եմ քեզ ձերբակալելու և  
պրիստավին ներկայացնելու: Յեթե չհնազանդվես, տեղն  
ու տեղը կարող եմ սպանել:

— Ինչո՞ւ, վո՞ր հանցանքիս համար. ո՞ւմ ինչ վատու-  
թյուն եմ արել, ա՛յ մարդ...

— Ում ինչ վատություն ես արե՛լ... Դու կարծում ես  
մոռացվե՞ց այն բոլորը, վոր դյուղացիներին գիշեր-ցերեկ  
հուղում, զրգոում եյիր իմ դեմ, կառավարության դեմ:  
Մոռացա՞ր այդ բոլորը, հա՞, կարծում եյիր եժա՞ն կնըս-  
տեր այդ: Կարճ կտրի՛ր, վե՛ր կաց այս բոպեյիս, վե՛ր  
կաց, — դուաց տանուտերը և քացով տվեց Իվանեյի կող-  
քին:

— Վա՛յ... — կողքը բռնելով դուաց գայրացած Իվա-  
նեն և առյուծի նման վոտքի թռավ...

— Կապեցե՛ք դրա ձեռքերը, — նորից լսվեց տանուտե-  
րի կատաղած ձայնը, և յերբորդ անգամ մտրակը խա-  
ղաց...

Գլխիներն իրար անցան...

— Տո քա՛վթառ, ի՞նչ ես ուզում ինձանից, — դուաց  
Իվանեն ու հարձակվեց: Մանգաղը շողաց ողի մեջ և տա-  
նուտերը գետին փռվեց...

Գլխիները սարսափից դես ու դեն փախան:

Իվանեն ուշքի գալով՝ նայեց իր շուրջը, տեսավ իրեն




միայնակ կանգնած տանուտերի անշնչացած դիակի առաջ...

— Անպիտաններ, դոնե դիակին տեր կանգնեյիք, — փնթփնթաց Իվանեն:

Մի բոպե կանգ առավ... Նայեց հեռուները... Աղատ շունչ քաշեց...

Այդ որվանից Իվանեն հրացանը ձեռքն առնելով՝ գնաց միանալու հեղափոխականներին:



#### 14. Ճ Ա Ն Ճ Ը

Խոնարհ ու հեղ  
Մի հոգնած յեզ  
Արորն ուսին,  
Ճանճը պողին  
Մի իրիկուն  
Գալիս եր տուն:

Մին ել ճամփին  
Մի ուրիշ ճանճ  
Են նստածին  
Ասաց. «Տո՛ մանչ,  
Ես յեղան հետ  
Վո՞րտեղից եղ»:

Քիթը տնկած՝  
Ճանճը ասաց.  
— Մենք վորտեղի՞ց,  
Վարո՞ւմ եյինք,  
Վարատեղից:

#### 15. ՅԵԶԸ ՏԱՐԱՆ

Աշունն անցավ, խիստ ձմեռ յեկավ: Այս անգամ, սա-  
կայն, չքավոր Չատոյի ցավը միայն ձմեռվա խստությունը  
չէր: Նրա միակ հույս ինձոր յեղը ձեռից գնում եր: Նրա  
կյանքը թունավորվում եր պարտատիրոջ դժոխային պա-  
հանջով:

— Փո՛ղս, փո՛ղս, թե չե համ յեզդ կխլեմ, հա՛մ ուտե-  
լու հացդ ու սոված կթողնեմ...

Յեվ, չնայելով Չատոյի ու կնոջ աղաչանքներին, այ-  
նուամենայնիվ լսվում եր նույն անողորմ և ահաբեկող  
ձայնը:

— Փո՛ղս, փո՛ղս:

— Աղա՛ ջան, աղաչում ենք, յերկու շաբաթ ել համ-  
բերի, մի տեղից ճարենք, տանք:

— Անկարելի յե, փո՛ղս, վաղն առավոտյան փո՛ղս...

Չատոն ու կինը հուսահատ քաշվեցին իրենց ավերակ  
խրճիթը, վորի մի անկյունում ինձորն եր կապված: Այն-  
տեղ նրանք մնացել էին տրտմած ու քարացած:

Մարդ ու կին ամբողջ գիշերն անքուն աչքերով լու-  
սացրին:

\*\*\*

Առավոտյան տանուտերը, վաշխառուն և սրանց կամա-  
կատարները, մինը մտրակն առած, մյուսները դադանակ-  
ները՝ գնում եյին դեպի Չատոյի ողան:


Չատոն դուրս յեկավ նրանց առաջ, սիրտ արավ մեկ ել  
խնդրել, վոր խղճան իրան և մի քանի որ ժամանակ տան՝  
փողը ճարի: Բայց իզուր: Յեզը խիստ դուր եր յեկել աղա-  
յին: Նա վաղուց եր ասել, թե «ճանկս եմ գցելու»: Յեվ  
մերժեց:

Չատոյի հույսի այս վերջին թելն ել կտրվեց: Այնու-  
հետև նրա վիշտն աննկարագրելի յեր: Յերբ ավաղակա-  
խումբը ներս մտավ յեզը դուրս անելու, Չատոն ու կինը  
փաթաթվեցին իրենց ինձոր յեզանը և համբույրներով հե-  
ղեցին նրան:

Իսկ յեկողները թուղը հետ արին սյունից և յեզը դուրս  
քշեցին ողայից:

Չատոն, համարյա ցնորվելու չափ շփոթված, մի քանի  
վայրկյան կնոջ հետ միասին անհավասար դիմադրության  
փորձ արավ: Մակայն մտրակների և դադանակների հար-  
վածները հետ մղեցին նրանց և յեզը քշեցին, տարան:





ՀԱԿՈՒ ՀԱԿՈՒԹԱՆ

16. ՄԵ՛Կ ԵԼ, ՄԵ՛Կ ԵԼ

Հե՛յ, ձե՛զ մատաղ, բանվոր տղերք,  
Մե՛կ ել, մե՛կ ել, մի զա՛րկ տվեք,  
Մի զա՛րկ տվեք ցարի գահին,  
Վոր խորտակվի նա հիմնովին...

Միահամուռ մեր ուժերով,  
Հերոսների արյան գնով  
Թեև ընկավ ցարն իր գահից,  
Բայց չի ջարդված միանգամից:

Այժմ ել ցարն է մեզ աղաչում,  
Վոր խնայենք վերջին շնչում:  
Բայց, ձեզ մատաղ, բանվոր տղերք,  
Մե՛կ ել, մե՛կ ել, մի զա՛րկ տվեք...  
Մի զա՛րկ տվեք ցարի գահին,  
Վոր խորտակվի նա հիմնովին:

17. ԳԱՅԼՆ ՈՒ ԳԱՌԸ

Մի ամլիկ գառ  
Իրեն համար  
Ջուր եր խմում առվակից,  
Մեկ ել դեմի ձորակից  
Գայլն է կտրում վերևը,  
Խոսքին տալով ես ձեռ.  
— Ես ի՞նչ լրբություն,  
Ի՞նչ հանդգնություն:  
Այ դու փախչոտ,  
Վոչխարի լակոտ.  
Դու ինչի՞ տեր ես,  
Վոր գաս դնչովդ,  
Քթով-պնչովդ  
Ջուրս պղտորես:  
Բռնե՞մ դունչդ,  
Կտրի շունչդ:

— Մի՛ բարկանար, պարոն գայլ,  
Քեզնից ցած եմ քանի քայլ,  
Ենպես բան ես ասում փոր...

— Սո՛ւտ եմ ասում, ա՛յ լղպոր.  
Եդ ել չլինի հերվանը,  
Չեմ մոռացել են բանը,  
Վոր հենց եստեղ նույն ուրը  
Հայհոյեցիր իմ հորը:


— Մի տարեկան դեռ չկամ...  
— Ե՛հ, յեղբայրդ եր, անդգամ:  
— Յես մի ծին եմ մինուձար...  
— Խնամիդ եր անպատճառ,  
Կամ մեկը ձեր պիղծ ցեղից,  
Ել ժաժ չգաս քո տեղից:  
Չար շների,  
Հովիվների

11-2849691





Վոխը քեզնից յես հանեմ,  
Տես գլուխդ ինչ բերեմ...  
Ասով, հասով գառանը,  
Առավ, թռավ անտառը:



ԳԵՂԱՄ ՍՍՐՅԱՆ  
(Շխանշանակիր գրող)

## 18. Ք Ա Ր Տ Ա Շ Ն Ե Ր Ը

Այս մեր փողոցում, քարոտ փողոցում  
Կառուցում են շենք վարդապետին քարից.  
Այնտեղ ամեն ուր փայտ են սղոցում  
Ու քար են տաշում մարդիկ սրտակից:

Յեվ քարերի հետ կոփվում են նրանք,  
Տաշվում են վորպես քարերը գեմի,  
Շենքը յեղնում է, բարձրանում շարք-շարք  
Ասես ժպտում է քո առաջ հիմի:

Յեվ աղամայից սիրտս խնդում է,  
Վոր ամեն մի մարդ քարերի վրա  
Իր մկանների ուժը դնում է,  
Վոր այդ գեղեցիկ շենքը բարձրանա:

Այս մեր փողոցում, քարոտ փողոցում,  
Կառուցում են շենք վարդապետին քարից,  
Այնտեղ ամեն ուր փայտ են սղոցում  
Ու քար են տաշում մարդիկ սրտակից:

## 19. Լ Ր Տ Ե Ս Ն Ե Ր Ը

1

Խորհրդային Կարելիան գտնվում է Փինյանդական սահմանում: Այնտեղ ճահիճներ չառ կան: Մարդաչատ վայրերում ճահիճների վրա կամուրջներ են ձգված:

Մի անգամ ամռանը մի այդպիսի կամրջի վրայով մի ծերունի և մի պառավ եյին գնում:

Ծերունու հագուստը հին էր, գլխարկը ծակ, չալվարը կարկատված, գոտու փոխարեն պարանի կտոր էր կապել: Այդպես վատ էր հագնված նաև պառավը. յերկար ճիտքով կոշիկներ, պատառոտված չրջագլխատ, գլխին սև թաշկի-նակ:

Ծերունին ու պառավը մի կով եյին տանում:

Կամրջի աջ կողմում խորհրդային սահմանապահների ուղեկալն էր:

Մոտենալով ուղեկալին, ծերունին ու պառավը հաճախ այս ու այն կողմն եյին նայում:

Նրանք զգուշությամբ անցան կամուրջը, ապա ուղեկալը:

2

Այդ ժամանակ ճանապարհի կողքերին գտնված թփերի մեջ հետևյալ խոսակցությունն էր տեղի ունենում.



— Այդ պառաւմն ու ծերունին ինձ դուր չեն գալիս, — կամացուկ ասաց սահմանապահ Վասիլյեւն իր ընկերոջը՝ Սոսինկովին:

— Իսկ յես կասկածելի բան չեմ նկատում, — պատասխանեց ընկերը: — Սովորական պառավ ու ծերունի յես:

— Հապա ինչո՞ւ յես անհանգիստ այս ու այն կողմը նայում:

— Գուցե այդ քեզ թվում ե:

— Այնուամենայնիւ ստուգելը լավ կլինի, — պնդեց Վասիլյեւը:

— Ճիշտ ես ասում, — համաձայնեց Սոսինկովը:

Նրանք թիւերի միջից դուրս յեկան ու վաղեցին ծերունու և պառավի մոտ:

— Ձեռքերդ վե՛ր:

— Վորդինե՛րս, սիրելիներս, — խնդրեց ծերունին, — մեր վերջին կոպեկները տվել, մի կով ենք գնել...

— Ձեռքերդ վե՛ր:

— Կովը տուն ենք տանում, վորդիներս, թողեք: Գյուղխորհրդից թուղթ ել ունենք, — խնդրում եր ծերունին:

— Ձեռքերդ վե՛ր, թե չե կկրակեմ, — ձայն տվեց Վասիլյեւը:

Այդ ժամանակ ծերունին կովի թուղթ բաց թողեց, մի կողմ ցատկեց, գրպանից ատրճանակ հանեց:

Բայց կրակելու ժամանակ չունեցավ: Սոսինկովը հրացանի կոթով խփեց նրան, ծերունու գէնքը վայր ընկավ և սահմանապահը բռնեց նրա յերկար միրուքից: Միրուքը քնաց Սոսինկովի ձեռքին:

Վասիլյեւն արձակեց պառավի գլխի սև թաշկինակը: Պառավը յերիտասարդ տղա դարձավ:

Յերկու լրտեսներին ել տարան ուղեկալը:

Չինաստանում և Ճապոնիայում ձիերի փոխարեն կառքերին լծվում են մարդիկ, վորոնք կոչվում են ուկլչի:

Կիսամերկ և բոբիկ վոտներով ուկլչիները, լծված իրենց կառքերին, այնպես են վազում, վոր հետ չեն մնում ձիու վազքից:

Մի անգամ խորհրդային նավաստիները չինական մի քաղաքում հանդիպում են մի ուկլչու: Նա մոտենում ե խորհրդային նավաստիներին և առաջարկում իր կառքը:

— Վո՛չ, — հասկացնում են խորհրդային նավաստիները, — մենք չենք ուզում, վոր ուկլչիները մեզ քաշեն: Մեզ մոտ ուկլչիներ չկան, բոլորն ել ուրախ են ու յերջանիկ:

Ռիկչին հասկանում ե, վոր նավաստիներն ուսներ են, ուրախանում ե ու բացականում:

— Լենին վերի գուղ (Լենինը շատ լավ ե):

— Այդ գործը շատ դժվար ե քեզ համար, մանավանդ, վոր դու ծեր ես, ուրիշ արհեստով զբաղվիր, — ասում ե նավաստիներից մեկը:

— Յես մանկութունից ուկլչի յեմ, իմ պապերն ել են ուկլչի յեղել: Յեթե այս արհեստը թողնեմ, յերեխաներս քաղցից կմեռնեն: Ուրիշ գործ շատ դժվար ե գտնել:

Խորհրդային նավաստիները հաց են դնում և ուկլչու սայլակով փոխադրում նավահանգիստ:

Ռիկչուն լավ վարձատրում են և նա ուրախ-ուրախ վերադառնում ե քաղաք:

Քիչ հետո նա, մի խումբ ուկլչիների հետ, վերադառնում ե նավահանգիստ: Ռիկչիները չըջապատում են խորհրդային նավաստիներին: Նրանք իրար հետ խոսում են, ուրախանում և ծափահարում են նավաստիներին:

Յերբ նավն սկսում ե հեռանալ ափից, ուկլչիները յերկար ժամանակ ձեռները թափահարում են ու դոչում:

— Լենին վերի գուղ:

— Ռուս վերի գուղ:



Ճակատամարտը վերջացավ: Հեռվում դեռ լսվում էին թնդանոթների դղրդյունը և հաղթանակող զորքի համազարկերի ու փողերի ձայնը: Կովի դաշտում կոտորված սայլերի, թափթփված հրացանների և փշրված սրերի միջև ընկած էին սպանվածների կույտեր, մարդկանց և ձիերի դիակներ: Այդ կույտերի միջից տեղ-տեղ լսվում էին վիրավորների խոր հառաչանքներ:

Մի չորացած առվի յեղերքին, խիտ յեղինջի մեջ, իրարից վոչ հեռու պառկած էին յերկու գինվոր, յերկուսն էլ ծանր վիրավոր:

Նրանց համադգեստները տարբեր էին: Մի քանի ժամ առաջ նրանք դեռևս կատաղի թշնամիներ էին, իրար դեմ կանգնած, պատրաստ սվիններով միմյանց խողխողելու, իսկ այժմ...

Այժմ լուռ նայում էին իրար և այնպես ուղում էին խոսեն, գոնե մի բան ասեն, բայց ամիսո՛ւս, վոր իրար լեզու չէին հասկանում:

Հանկարծ ավելի յերիտասարդը, դժվարությամբ մի յերկու քայլ հազիվ սողեսող տալով, մոտեցավ իր թշնամուն և մեկնեց նրան իր գինու սրվակը, հետո աշխատեց թաշկինակով դադարեցնել նրա վերքից հոսող արյունը: Բայց փոչինչ դուրս չեկավ: Ինքն ավելի ևս թուլացավ ու պառկեց:

Յերբեմն մեկը, յերբեմն մյուսը ճիգ էին թափում մի փոքր վեր բարձրանալու, ողնություն էին կանչում, բայց նրանց կանչերին պատասխան եր տալիս միմիայն փորը ճղված մի ձիու աղեկտուր խրխինջը:

Վերջապես յերիտասարդը հոգնած և թուլացած քուն մտավ:

Վրա հասավ պարզկա գիշերը: Յուրտ քամին գալիս, փչում եր հեռավոր լեռներից: Կովի դաշտում հառաչանքներն ավելի ու ավելի էին նվազում, վիրավոր ձին էլ չեր խրխնջում:

Ավելի տարիքավոր վիրավորը կես գիշերին կրկին մի փորձ արավ նստելու, բայց իզո՛ւր. արդեն բոլորովին արնաքամ եր յեղել: Մահվան սառնությունը սկսելեր պատել նրա մարմնի անդամները: Աչք գցեց իր հարևանի վրա:

Յերիտասարդ վիրավորը քնած եր և կուչ եր յեկել գիշերվա սոսկալի ցրտից:

Պիտի սառչի,— անցավ հասակավորի մտքով,— անպատճառ պիտի սառչի. խեղճ, ինչքան ել յերիտասարդ ե:

Յերբ արշալույսի դեմ վիրավորներին հավաքող խումբը մոտեցավ նրանց, յերիտասարդը զարթեց, ուզեց բարձրանալ ու զարմացավ, վոր իր վրա մի վերարկու կար գցած: Նայեց շուրջը, նայեց հարևանին: Հարևանը մեռած եր և պառկած առանց վերարկուի: Նրա վերարկուն եր իր վրա:

Ի՛նչ չարչարանք պիտի կրած լիներ հողևարքի մեջ արնաքամ յեղած այդ մարդը, մինչև վոր կարողանար վերարկուն հանել և ծածկել մոտը պառկած վիրավորին:

Յերբ յերիտասարդին բարձրացնում էին, վոր տանեն, նա խորին հուզմունքով ու յերախտագիտությամբ նայում եր «թշնամու» տանջված ու կարկամած յերեսին ու հայացքը հեռացնել չեր կարողանում նրա կիսախուփ, մարած աչքերից:

## 22. ԱՌՅՈՒԾԸ, ԱՂՎԵՍՆ ՈՒ ԱՐՁԸ

Մի անգամ առյուծը հիվանդացավ և բոլոր կենդանիները յեկան նրան տեսության, բայց աղվեսն ուշացավ:

Արջն սկսեց բամբասել ու չարախոսել աղվեսի մասին: Հենց այդ ժամանակ աղվեսը հասավ և դռան մոտ լսեց արջի չարախոսելն իր մասին: Աղվեսը ներս ընկավ ու փուկեց առյուծի վոտքերի առջև:

Առյուծը չարացած ասաց.

— Վատ ժամանակ յեկար, գարշելի արարած, ո՞ւր եիր մինչև այժմ:

Աղվեսը պատասխանեց:

— Ո՛վ հզոր առյուծ, իզուր ես բարկանում. քո գլխովն եմ յերդվում, վոր քո հիվանդության մասին լսելով՝ յես յեղա բազմաթիվ բժիշկների և բժշկապետների մոտ, այդ պատճառով ել ուշացա: Բայց իմ չարչարանքների պտուղն այն յեղավ, վոր իմացա, թե վորն ե քո բժշկության դեղը:

Առյուծը մեղմացավ և ասաց.



— Ա՛, բարով ես յեկել, դու իմաստուն կենդանի. իսկ  
ի՞նչ ե այդ դեղը:

— Շա՛տ պետքական ու հեշտ դեղ ե, պատասխանեց  
աղվեսը: Բժշկապետներն ինձ ասացին, թե պետք ե կեն-  
դանի արջի մորթին հանել և տաք-տաք գցել առյուծի  
վրա: Մորթին հիվանդի մարմնից իսկույն կքաշի, կհանի  
ցավը:

Առյուծի հրամանով անմիջապես բռնեցին արջին և  
սկսեցին մորթին հանել:

Արջը ախ եր անում, վայ տալիս ու վռոնում սարսա-  
փելի ձայնով:

Այն ժամանակ աղվեսն ասաց նրան.

— Տեղն ե, դադեռ քեզ քիչ ե: Այդպես պետք ե վարվել  
քեզ հետ և նրանց հետ, ովքեր զուր չարախոսում են:

## 23. ՏԱՔ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Կան այնպիսի յերկրներ, վորտեղ յեղանակն ամբողջ  
տարին տաք ե: Այդ յերկրի անտառներում կան շատ մեծ-  
մեծ ծառեր: Այդ ծառերի պտուղներն ել մեծ-մեծ են: Ամ-  
բողջ տարին ծառերը ծածկված են տերեւներով:

Անտառներում ապրում են տեսակ-տեսակ թռչուններ  
և կենդանիներ. թուփակ, փիղ, կապիկ, առյուծ, վագր:

Բայց այդ յերկրներում կան տեղեր, վորտեղ տարիներ-  
բով անձրև չի գալիս: Այդպիսի տեղերում վոչինչ չի ա-  
ճում՝ վոչ խոտ, վոչ ծառ:

Այդպիսի տեղերը կոչվում են անապատ, վորտեղ  
միայն ավազ ե ու ավազ:

## 24. Յ Ե Ղ Ե Վ Ն Ի Ն

Աճել եր մի  
Ծեր յեղենի  
Մեծ բացատի մերկ լանջին,  
Ականջ եր նա դնում քամու

Յեվ փոթորկի հառաչին:  
Շուրջը տրտում,  
Սառույց ու ձյուն,  
Մենակ եր նա բացատում,  
Վորտեղ միայն  
Վախկոտ, սոված  
Նապաստակն եր թռչկոտում:  
Այժմ, ահա,  
Կանգնած ե նա  
Տաք, ընդարձակ դահլիճում,  
Ուր յերջանիկ  
Մանուկների  
Ուրախ ձայներն են հնչում:  
Հագել ե, տե՛ս,  
Շորեր պես-պես,  
Դարձել սիրուն տոնածառ,  
Շուրջը ուրախ,  
Յերգ ու ծիծաղ,  
Յերջանկություն անսպառ:

## 25. Ծ Ի Տ Ը

Ձմռան մի ցուրտ առավոտ  
Ծիտը թռավ ծախ մոտ,  
Ասաց՝ ծիտիկ,  
Իմ լավ քուրիկ,  
Վո՛չ թռչում ես, վո՛չ յերգում,  
Ի՞նչ ես անվերջ յերազում:  
Ասաց. — գարուն եմ ուզում,  
Վազող առուն եմ ուզում,  
Կանաչ մարգեր եմ ուզում,  
Գարնան յերգեր եմ ուզում:  
Ուզում եմ յես ծիլ ու խոտ,  
Գարնան յերկինք, մաքուր ող,  
Արտե՛ր, արտե՛ր, չող ու չաղ,  
Կարմիր վարդեր, յերգ ու տաղ:



Հեռու հյուսիսում ե ապրում փոքրիկ Իկվան՝ եսկիմոս տղան:

Նա զարթնեց ձյունե տանը:

Տան մեջտեղը, մի ամանի մեջ, վառվում եր շնաձկան ճարպը:

Կրակը լուսավորում եր ու տաքացնում:

Իկվան դուրս յեկավ արջի մորթուց, վորի մեջ քնած եր: Նա հագավ մորթե շորերը:

Շունն ել զարթնեց և Իկվայի մոտ վազեց:

Նրանք տանից դուրս յեկան:

Դուրսը մութն եր ու ցուրտ:

Ձմռանն այստեղ մի քանի ամիս շարունակ արեւը դուրս չի գալիս, իսկ ամռանը՝ մի քանի ամիս մայր չի մտնում:

Այստեղ ծառեր չկան:

— Արի՛, կերակուրը պատրաստ ե, — ձայն տվեց մայրը:

Իկվան, նախաճաշելուց հետո, գրգրեց վերցրեց և ուրիշ աշակերտների հետ նստեց շներ լծած սահնակը և գնաց մոտիկ գյուղի գլորոցը՝ սովորելու:

## 27. ՍՈՒՏ ԽՈՍԵԼԸ ԶԶՎԵԼԻ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ Ե

Մի անգամ, յերբ Վոլոդյան ութ տարեկան եր, հայրը, մեծ յերեսխաների հետ միասին, նրան Կազան քաղաքը տարավ, վորտեղից պետք ե գնային Կոկուչկինո գյուղը, հորաքրոջ մոտ:

Կազանում, հորաքրոջ տանը, յերեսխաների հետ խաղալու ժամանակ, Վոլոդյան անդգուշաբար դիպչում ե փոքրիկ սեղանին, վորի վրայի ապակե ջրամանը վայր ե ընկնում և ջարդ ու փշուր լինում:

Ներս ե մտնում հորաքույրն ու հարցնում.

— Ո՞վ ջարդեց ջրամանը, յերեսխանե՛ր:

— Յես չե՛մ արել, յես չե՛մ արել—ասում ե նրանցից ամեն մեկը:

— Յես չե՛մ արել—ասաց նաև Վոլոդյան:

Այդպիսով դուրս յեկավ, վոր ջրամանն ինքն իրեն ե ջարդվել:

Անցավ յերկու, թե յերեք ամիս: Վոլոդյան վաղուց արդեն Կոկուչկինոյից վերադարձել եր և նորից ապրում եր Սիմբիրսկում:

Մի անգամ յերեկոյան, յերբ մայրը մոտեցավ Վոլոդյայի մահճակալին, նա հանկարծ լաց յեղավ:

— Յես Աննա հորաքրոջը խաբեցի, — ասաց Վոլոդյան հեկեկալով, — ջրամանը յես եյի կոտրել:

Մայրը հանգստացնում ե նրան, ասելով, վոր կգրի Աննա հորաքրոջը և հորաքույրը կների նրան:

Վոլոդյան դրանով ցույց տվեց, վոր սուտ խոսելը նրա համար զգվելի յե:

## 28. ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՄԻ ԱՆԳԱՄ ԻՆՁ ՊԱՏԱՀԵՑ ԿՐԵՄԼՈՒՄ

Կա՞ արդյոք մի մարդ յերկրի յերեսին, Լսած չլինի Կրեմլի մասին:

Գիտեն, վոր բարձր են աշտարակները,

Այնտեղ ապրում են բոլշևիկները,

Բայց ինչ մի անգամ պատահեց Կրեմլում,

Վոչ վոք չի լսել յերբեք աշխարհում:

Մի անգամ բահով նախշեր քաշելով,

Մի աղջիկ անցնում եր Կրեմլի բակով:

Պոտն եր կանաչել, որը արևոտ,

Վտակն եր ճչում Կրեմլի պատի մոտ:

Յերկու ճնճղուկ լայն բակի միջում,

Բռնելով գետնից մի փոքրիկ մրջյուն,

Այդ մրջյնի համար իրար հետ կռվում,

Կտցում են իրար, անվերջ ճվճվում:

Իսկ խեղճ մրջյունը՝ մի քիչ դեպի աջ,

Մի քիչ դեպի ձախ, մի քիչ ել առաջ,

Անցավ ու գնաց, մտավ քարի տակ,

Նայում եր աղջիկը, խնդում շարունակ:

Հենց այդ ժամանակ Լենինը յեկավ,



Ուրախ աղջկան հասավ, մոտեցավ:  
 Նա ել ծիծաղեց, աչքը կկոցեց,  
 Հետո աղջկա ականջին թեքվեց,  
 Ականջին թեքվեց, բան ասաց նրան,  
 Աղջիկն ել բարձր տվեց պատասխան.  
 — Բա ո՞ւմ հետ վազեմ, յեղբայրս ե տկար:  
 Նայեց Լենինը բալին, աղջկան,  
 Ժպտաց, աջ ձեռքը դեպի նա մեկնեց.  
 — Մինչև դարպասը վազենք դու և յես,—  
 Ասաց և ուզեց նա շարունակել,  
 Բայց աղջիկն իսկույն սկսեց վազել:  
 Ծտերը փախան, բաշխուղը գցեց,  
 Փոսերի միջով դեպի վեր վազեց:  
 Լենինն ել վազեց, ինչքան ուժ տվավ,  
 Բայց աղջիկը շուտ դարպասին հասավ:  
 Հասավ ու կանգնեց, սկսեց ծիծաղել,  
 — Լենինը ջրով չի կարող անցնել:  
 Լենինն ել հասավ, բաշխուղը տվեց,  
 Բարձր ծիծաղեց և այսպես խոսեց.  
 — Այժմ միայն հինգ տարեկան ես դեռ,  
 Սակայն մեծերից կարող ես անցնել,  
 Մի տարուց հետո հաղթող կլինես,  
 Չես կորցնի բաշխուղ և վոչ վերարկու:—  
 Ասաց ու սրբեց յերեսը նա իր,—  
 Աճի՛ր, իսկական բուշեիկ դարձիր:  
 Լենինը գնաց:  
 Խոտն եր կանաչել, որը արևոտ,  
 Վտակն եր ճչում Կրեմլի պատի մոտ:  
 Աղջիկն ել գնաց:  
 Յերջանիկ եր նա ամբողջ Կրեմլում,  
 Յերջանիկ նաև ամբողջ աշխարհում:



ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉ ԼԵՆԻՆ

29. Լ Ե Ն Ի Ն Ի Մ Ո Տ

Ընկեր Ստալինն առաջարկեց ինձ գնալ Լենինի մոտ:  
 Ինձ տրվեց մի բանվորի հասցե, վորն՝ ապրում եր  
 Սեստրորեցկայա կայարանի մոտ: Մեծ վտանգ եր սպառ-  
 նում, յերբ յես հանձն առա այդ դործը: Վախենում եյի  
 հանկարծ լրտեսի հանդիպեմ, և հայտնվի Վլադիմիր Իլ-  
 յիչի տեղը:

Գիշերը հասա կայարան: Մի քիչ թափառելուց հետո  
 գտա մի տուն, վորտեղ ապրում եր հիշյալ բանվորը: Այդ  
 նույն բանվորը տանը չեր, և նրա կինն ինձ հետ դրեց ու-  
 ղեկցելու իր 9-10 տարեկան տղային:

Մենք գնացինք լճի մոտ, նստեցինք նավակ, և հաս-  
 նելով մյուս ափը, գնացինք թփերի միջով: Յես վորոշեցի,  
 վոր ընկեր Լենինն ապրում ե վորևե ամառանոցում:

Հանկարծ մենք կանգ առանք հնձած խոտերի մոտ:  
 Տղան կանչեց ինչ-վոր մեկի անունը: Խոտի դեզից դուրս  
 յեկավ մի մարդ: Պարզվեց, վոր այդ մարդը տղայի  
 հայրն ե: Բարևեցի, բացատրեցի նրան իմ գալու նպատա-  
 կը: Մտածում եմ՝ հիմա կտանի ինձ Լենինի մոտ: Այդ  
 րոպեյին մոտենում ե մի մարդ սավորված մորուքով և բե-  
 ղերով:



Մոտեցավ՝ բարևեց: Յես պատասխանեցի պարզ և չոր: Այն ժամանակ նա խփեց իմ ուսին և ասաց. «Ընկեր Սերգո, ինձ չե՞ք ճանաչում»:

Պարզվեց, վոր դա ընկեր Լենինն էր: Յես մեծ հըրճ-վանքով սեղմեցի նրա ձեռքը և սկսեցինք զրուցել:

Մի քանի րոպեյից հետո Իլյին ատաջարկեց ինձ ընթերել իր հետ սև հացով և սելյոդկայով:

Այդ «ընթերիքից» հետո զրույցը շարունակեցինք Լենինի հետ, խոտի դեզի վրա:

Թարմ խոտը բուրում էր, սքանչելի տաք էր: Յերկար ժամանակ յես նրան պատմում եյի, թե նրա բացակայության ժամանակ ինչ էր կատարվում քաղաքում, ինչպիսի տրամադրություններ կային բանվորների և գյուղացիների մեջ, ինչ էր կատարվում մեր կազմակերպության մեջ, Պետրոգրադի խորհրդում:

Վլադիմիր Իլյինը լսեց ինձ, մի քանի հարցեր տվեց և ասաց.

— Իշխանությունն այժմ միայն կարելի յե վերցնել զինված ապստամբության միջոցով, և այդ կլինի՝ վոչ ուշ, քան սեպտեմբերին—հոկտեմբերին:

Այդ բոլորը յես լսում եյի լարված ուշադրությամբ. տպավորությունը չմեցուցիչ էր:

Հետո Իլյինը տվեց մի քանի ցուցումներ, թե ինչպես տանել գործը:

Խոսակցությունն ընդհատվեց, վորովհետև յես հոգնած եյի և աննկատելի կերպով քնեցի:

Առավոտյան, փոխանակ ժամի 6-ին վեր կենալու, զարթնեցի 11-ին:

Այդ ժամանակ Իլյինը պատրաստում էր մի շարք փոքրիկ հոդվածներ, նամակներ Ստալինին և ուրիշ ընկերներին: Յես վերցրի այդ բոլորը, մնաս բարև արի և գնացի:



ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆ

30. ԳՈՎԳ ՄԵԾ ՍՏԱԼԻՆԻՆ

Արեւ ծագեց մեր աշխարհին,  
Մարդուն, հողին, հանդին, քարին,  
Տեսանք կյանքի սերն ու բարին,—  
Մեզ արև տվողիդ մատաղ:

Մեզ տվիր արևի շողը,  
Ե՛լ չկա մեզ կողոպտողը,  
Որհնվի քեզ ծնող հողը,—  
Քեզ ծնող մայր հողին մատաղ:

Դու վոր կաս—մի անմար լույս ես  
Հա՛մ սեր, հա՛մ կյանք, հա՛մ ել հույզ ես,  
Կովո՞ղ մարդուն խրախույս ես,—  
Արևիդ ու շողիդ մատաղ:



Քո եղ գրած լույս որենքը  
Շինեց մեր նոր կյանքի շենքը,  
Մեր սրտերից բղխեց յերգը,—  
Նոր որենք գրողիդ մատաղ:

Խոսքեր ունես վոսկույ անգին,  
Շուռ տվեցիր աշխարհքը հին,  
Հասցրիր մեզ ուրախ կյանքին,—  
Մեզ նոր կյանք տվողիդ մատաղ:

Ծովը ծովի հետ միացավ,  
Անապատը պարտեզ դարձավ,  
Կյանքը ուրախ, անվիշտ, անցավ,—  
Ուրախ կյանք քերողիդ մատաղ:

Խորհուրդները մնան հաստատ,  
Ստալինը մեր հարազատ,  
Ընկերներով բյուր ու հաղար,—  
Յերկիրը պահողիդ մատաղ:

### 31. ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՄԱՍԻՆ

1888 թվականին ծնողներս ինձ տվին Գորու ծխական դպրոցը: Դասարանում յես նստած եյի Իոսիֆ Զուղաշվիլու հետ մի նստարանի վրա: Յես թույլ սովորող եյի, և իմ ընկերը, Սոսոն, միշտ ուրախությամբ ոգնում եր ինձ:

Մեր դասարանում սովորում եյին հարուստների ու չքավորների յերեխաներ: Հարուստների յերեխաներն իրենց հեռու եյին պահում մեզնից՝ չքավորներիցս: Նրանց հարաբերությունները մեզ հետ աստիճանաբար սրվում եյին նաև այն պատճառով, վոր Ստալինը, վորն առաջին աշակերտն եր համարվում դասարանում, մեզնից եր:

Ստալինը բացառիկ հիշողություն ուներ: Դասատուների բացատրությունները նա հիանալի յուրացնում եր և ապա ստույգ վերարտադրում:

Նա յերբեք չեր հրաժարվում իր խոսքերից, միշտ հավատացած լինելով, վոր դրանք ճիշտ են:

Նա հիանալի պատասխանում եր, յերբ կանչում եյին գրատախտակի մոտ: Այդ ամենն ել ավելի յեր զայրացնում հարուստների յերեխաներին և նրանք յուրաքանչյուր հարմար առիթով վրեժ եյին լուծում մեզնից:

Իոսիֆը գիրք չատ եր սիրում և մեզ գրավիչ կերպով պատմում եր կարդացածի մասին: Նրա պատմություններն անչափ հետաքրքրական եյին և հուզող:

Հորեղբայրս սովորաբար շնորհակալություն եր հայտնում Սոսոյին, և խնդրում ավելի հաճախ այցելել մեր տունը:

Դասատու Իլուրիձեն համառորեն հետապնդում եր «կտրել» Իոսիֆին, վորպես մեր խմբի առաջնորդի: Նա մեզ անվանում եր «աղքատների ու գժբախտների յերեխաներ»:

Մի անգամ Իլուրիձեն գրատախտակի մոտ կանչեց Իոսիֆին և հարցրեց.

— Քանի՞ վերստ ե Պետերբուրգից մինչև Պետերգոֆ:

Սոսոն ճիշտ պատասխանեց: Բայց ուսուցիչը չհամաձայնեց նրա հետ: Իսկ Սոսոն պնդում եր իր ասածի վրա:

Նրա համառությունը, իր խոսքերից հրաժարվել չցանկանալը, սաստիկ զայրացրին Իլուրիձեյին: Նա սկսեց սպառնալ և պահանջել, վոր Իոսիֆը ներողություն խնդրի, բայց վերջինս հաստատական բնավորություն ուներ: Նա նորից մի քանի անգամ կրկնեց միևնույն բանը, հայտարարելով, վոր ինքն իրավացի յե: Նրան միացան աշակերտներից մի քանիսը և այս հանգամանքն ել ավելի զայրացրեց ուսուցչին: Նա սկսեց գոռալ ու հայհոյել: Ստալինը կանգնած եր անշարժ, նրա օգնքերը զայրույթից լայնացել եյին...

Այդպես ել նա չզիջեց:

Այն տարիներում Ստալինը լինում եր գյուղում և պարապում եր՝ դասեր եր տալիս գյուղացիների յերեխաներին: Նա գրքեր եր կարդում նաև հասակավորների համար, պատմում ու բացատրում նրանց անհասկանալի տեղերը:



Մեր լեռնային աղբյուրների  
Կարկաչահոս ջուրը քեզ,  
Ծաղկածիծաղ բլուրների  
Անմահական բույրը քեզ:

Մեր դաշտերի հաղար յերանդ  
Ծաղիկների փունջը քեզ,  
Ծաղկածիծաղ բլուրների  
Անմահական բույրը քեզ:

Մեր սրտաբուխ յերգիչների  
Սիրո անհուն յերգը քեզ,  
Ժողովրդիս անվերջ ուրախ  
Յեւ բոցավառ սիրտը քեզ:

### 33. ԼՅՈՒԲԱ ԱՐՈՆՈՎԱՆ

#### 1

Քաղաքացիական կռիւների ժամանակ, Կիւնով, մի  
խումբ կոմյերիտականներ սպիտակ դվարդիականների ձեռ-  
քըն ընկան:

Բանտում, մահվան սպասելով, կոմյերիտական Պո-  
լոսկին ասաց իր ընկերուհուն.

— Լյո՛ւբա, մենք կմեռնենք, բայց հաղթությունը  
կգա... Այնպես չե՞, Լյո՛ւբա: Ի՞նչ լավ ե մեռնել այս-  
պես, կուսակցության համար, ժողովրդի յերջանկության  
համար...

#### 2

Դուռը բացվեց և ներս մտավ մի սպիտակ դվարդիա-  
կան:

— Լսեցե՛ք, կոմունարներ: Մենք իսկույն կսկսենք  
ձեզ կոտորել: Բայց ով ապրել ե ուզում, մի՞թե մեր  
հրամանատարը մահից չի ազատի: Իսկ ով ուզում ե կեն-  
դանի մնալ, թող ասի, թե վորտեղ եք թաղցրել ձեր թըն-  
դանութների բանալիները:

Գերիները լուռ եյին:

— Վե՛ր կաց, աղջի՛կ, — դիմեց նա Լյուբա Արոնովա-  
յին, — դու չե՞ս ուզում ապրել:

Լյուբան տատանվելով առաջ անցավ:

Նա լուռ ու հանդարտ մոտեցավ սպիտակ դվարդիա-  
կանին և... թքեց նրա յերեսին...

Սրի մի ծանր հարված իջավ Լյուբայի գլխին և նա  
ընկավ մեռած...

Նրա բոլոր ընկերներին սպիտակները գնդակահարեցին:

### 34. ԿՈՒՆՈՋԻ ՀԱՄԱՐ

Կոմյերիտ Արան  
Աչքերով արթուն  
Կանգնած եր հանդի  
Գյուղամերձ դիրքում,  
Վոր իր կոլխոզի  
Կուլակ թշնամին  
Մի վնաս չտա  
Կոլխոզի կալին:

Հանկարծ վերեւում  
Մի ուժեղ վորոտ՝  
Կայծակն ե փայլում  
Արայի տան մոտ,  
Յեւ մի ողածե  
Հրեղեն շղթա  
Իջնում ե ուղիղ  
Նրա տան վրա:

Յեւ լեզուները,  
Ալ ու բոցեղեն,  
Արայի տունը  
Պատել են արդեն,  
Իսկ պահակ Արան  
Աչքերով արթուն  
Կանգնած եր հանդի  
Գյուղամերձ դիրքում:



— Շուտ արա, հասիր,  
Արա', տնավեր,  
Տունդ այրվում ե,  
Ինչո՞ւ յես կանգնել:  
— Ի՞նչ ես դուրս տալիս,  
Սուրեն, մտածի՛ր,  
Պահակ եմ, գիտե՞ս,  
Գնա', հեռացի՛ր:

— Ահա յեկել եմ,  
Վոր փոխեմ յես քեզ,  
Ինձ շտապ կարգով  
Կոլխոզն ուղարկեց:  
Իջնում ե Արան,  
Իջնում ե դիրքից,  
Անցնում անձրևի,  
Ջրերի միջից...

Իսկ լեզուները,  
Ալ ու բոցեղեն,  
Արայի տունը  
Լափել են արդեն...  
Յեվ բոցն ու ծուխը  
Խառնված միատեղ,  
Միացյալ ուժով  
Գործել են այնտեղ:

Արայի հարցն է  
Դրված ժողովում,  
Բոլորը խոսում,  
Նրան են գովում:  
Յեվ վողջ կոլխոզը,  
Ժողովի վերջում,  
Միաձայն հանեց  
Հատուկ վորոշում:

«Արային հանել  
Կարմիր տախտակին,  
Անվեհեր, կայուն

Հերոս պահակին  
Տալ իբրև նվեր  
Քառասուն աշխոր,  
Յեվ նրա համար  
Տուն չինել մի նոր»:

### 35. ՊԻՈՆՆԵՐ ՄԵՅԵՐԸ

#### 1

Քելուուսիայի Սորհրդային Հանրապետության Բորի-  
անով քաղաքումն է ապրում պիոներ Մեյերը:

Նրա հայրը մի քանի տարի առաջ ծառայելիս է յեղել  
Վոչկակարների արտելում, վորտեղից, կաշի գողանալու  
պատճառով, հեռացվել էր:

Մի անգամ յերեկոյան, յերբ Մեյերը պառկել էր քնե-  
լու, դուռը ծեծեցին: Նա տեսավ, վոր սենյակը մտա՞ մի  
մարդ, մի մեծ կապոց ձեռքին: Մարդը կապոցը թողե՞  
ռ հեռացավ:

Հայրիկը կապոցը բաց արավ: Կապոցի մեջ կաշվի  
կտորներ կային:

«Մի՞թե հայրիկն ելի կաշի յե գողանում», — մտածեց  
Մեյերը և սկսեց հետեւել նրան:

#### 2

Մի յերեկո Մեյերն իմացավ, վոր իրենց մոտ «հյու-  
րեր» պետք է դան:

Նա գնաց խոհանոցը, մտավ մի դատարկ տոպրակի  
մեջ, փալասներով ծածկվեց և սկսեց սպասել:

Քիչ հետո խոհանոցը մտավ մայրիկը յերկու անձա-  
նոթ մարդու հետ: Նրանք պատից մի քանի աղյուս հանե-  
ցին և մի տոպրակ կաշի թազցրին:

«Մի՞թե յես կարող եմ լուել, — մտածեց Մեյերը: —  
Վո՛չ, լուել չի կարելի: Չե՞ վոր պետական գույքն են գո-  
ղանում... Իսկ յես պիոներ եմ...»:

Գողության մասին Մեյերը հայտնեց միլիցիային:

Մեյերի հայրիկն և իր ընկերներին դատեցին և ար-  
ժանի պատիժ տվին:

Այսպես կատարեց Մեյերն իր պիոներական պարտքը:

Այդպես պետք է վարվի յուրաքանչյուր պիոներ:



Լույսը բացվեց յերկրի վրա,  
Արև ծագեց վոսկեզրահ,  
Արար-աշխարհ գործի յեկան.  
Առու, աղբյուր կցուցուլան...

Բայց բեկեռում  
Հողմն է գոռում,  
Շուրջն ամայի ամեր մեռած,  
Սառցալեռներ, ծովեր սառած:  
Ու հեռագիր յեկավ սիրով՝  
«Գրավված է բեկեռը ծով,  
Մեծ ՄՏԱԼԻՆ, մեզ հետ ես միշտ,  
Մենք հպարտ ենք, հավետ անվիշտ:  
Յեվ բեկեռի ցուրտ դադաթին  
Զարկենք մեր ալ-դրոշն ահագին,  
Վոր փողփողի նա շարունակ՝  
Աշխարհն առած իր շուրթի տակ»:  
Ու յերկրի հետ չքնաղ ու վես  
Կարդաց, ժպտաց արևի պես  
Առաջնորդը մեր լուսախոհ,  
Վորից անգամ արևն է դոհ:  
Համբավն հասավ ամենուրեք՝  
Ծովերից ծով աշխարհ անցավ,  
Թե մեր դրոշն ալ-վառ ու սեղ  
Ցուրտ բեկեռից վե՛ր խոյացավ:

### 37. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կյանք ենք ավել մենք նրան  
Արյունով ու քրտինքով,  
Յեվ բաց դաշտերի վրա,  
Յեվ յերկաթե սալի քով,  
Համառ կռիվ ենք մղել

Տարերքի դեմ ահավոր,  
Յեվ միշտ հաղթող ենք յեղել  
Մեծ յեռանդով ու յերգով:  
Տուֆ քարերից շինել ենք  
Շենքեր՝ մարմինը նրա:  
Յերակաների պես արյան  
Մենք ջրանցքներ ենք շինել,  
Հետո սիրտը հրաբորբ՝  
Ելեկտրական մեծ կայան,  
Վոր բաբախում է հիմա  
Ամեն սրտում, ամեն տան:

Յեվ պղնձե լարերով  
Ցանց ենք շինել ներվերի,  
Լուսեղ լամպեր ենք կախել  
Վորպես պչքերը նրա,  
Վոր վառվում են տների  
Ու մեծ սյուների վրա՝  
Այդ բոլորը կառուցող  
Մարդկանց անունի նման:

Գործարանները հսկա,  
Առողջ թոքերի նման,  
Դարձրել են ամեն ուր  
Շնչառությունը նրա,  
Յեվ նա դարձել է հզոր.  
Յեվ նա դարձել է խրոխտ,  
Յեվ աճել է մեզ հետ նա  
Արևի տակ հրաբորբ:

Ամեն դարուն ու մայիս  
Մեր ցորենի դաշտերից,  
Թարմ կանաչից ու վարդից  
Հագուստներ ենք հագցրել  
Յեվ փափայել ենք նրան  
Վոսիլի հույսերի նման,  
Յեվ անունը դրել ենք  
Խորհրդային Հայաստան:



Մեր զրկանքով ու կյանքով,  
Արյունով ես աճել դու,  
Մեր պայքարով ու կամքով,  
Հույսերով ես աճել դու,  
Խորհրդային Հայաստան:  
Խորհրդային Հայաստան,  
Այս վառ արևը վկա՝  
Մեր հեվքով ես աճել դու,  
Վոր լինի մեծ այգաբաց,  
Կառուցում ու հաղթանակ,  
Վոր սերունդների դիմաց  
Մենք ամոթով չմնանք:  
Վոր ամեն մի տաշած քար  
ժպտա նրան, յերբ վոր գան,  
Վոր դու լինես միշտ պայծառ,  
Խորհրդային Հայաստան...

## 38. ՆԱՎԱՍՏԻՆԵՐԻ ՅԵՐԳԸ

Նավաստիներ ենք  
Խորհրդի յերկրի,  
Վարում ենք նավը  
Համարձակ, արի:

Փոթորկից, քամուց  
Մենք չենք վախենում,  
Կարմիր նավաստին  
Միշտ քաջ է, կայուն:

Ճնշված ազգերին  
Գետերով, ծովով,  
Ազատություն ենք  
Տանում մեր նավով:

Թագավորի ժամանակ հայրս գրաշար եր, իսկ մայրս՝  
չոր կարող: Հայրս հեղափոխական աշխատանք եր կատա-  
րում:

Մի յերեկո հայրս ուրախ-ուրախ ներս մտավ ու մորս  
սկանջին չչնջաց.

— Ճարեցի, վաղը հազար թուղթիկ ենք տպելու. մեյ  
ընկերներն այդ թուղթիկները կցրեն բանվորների մեջ:

Նա արձձե տառերը թափեց սեղանի վրա:

Յես գլխի ընկա, վոր այդ տառերով հեղափոխական  
բանվորները թուղթիկներ են տպելու:

Քնեցի: Մեկ ել զգացի, վոր բարձս չարժվում է: Աչ-  
քերս բացարի՝ տեսնեմ մայրիկս սիրթնած կանգնել է գլխա-  
վերևս և բարձի տակ ինչ-վոր բան է թագցնում:

— Մայրիկ, ի՞նչ է պատահել, — հարցրի յես:

— Վոչի՛նչ, դու քնիր, աղջիկս: Տունը խուզարկում  
են: Գուցե թե քեզ ձեռք չտան:

Ձեռս տարա բարձի տակ, տեսնեմ տառեր են:

«Ի՞նչ անեմ, — մտածում եմ: — Յեթե գտնեն՝ վա՛յ  
մեզ: Պահե՛մ: Բայց վորտե՞ղ: Պահարանո՞ւմ: Վառարա-  
նո՞ւմ: Իսկ յեթե գտնե՞ն...

Հանկարծ հիշեցի, վոր լուսամուտում կաթով լիքը  
կճուճ կա: Մոտեցա, կաթի մի մասը խմեցի և տառերը  
կճուճի մեջ լցրի: Նորից պառկեցի:

Ներս մտան վոստիկանները: Սենյակը տակն ու վրա  
արին: Ինձ ել տեղիցս վեր կացրին: Յերբ անկողինս քրքը-  
րում եյին, մայրս դողում եր, իսկ հայրս կանգնել եր  
գունատ:

Վոստիկանները բան չգտան և դժգոհ հեռացան:

— Այ քեզ բան, — ասաց հայրիկը ժպտալով, — կար-  
ծես տառերն անհայտացել են:

Յես ծիծաղեցի ու գոչեցի.

— Վոչ թե անհայտացել են, այլ կաթի մեջ են:



Հայրիկս վաղեց և ծանր կճուճը վերցրեց:

— Ուրեմն, Քնարիկ, դո՞ւ յես այստեղ թաղցրել:

Իմ ուրախությանը չափ չկար:

Մայրիկս անվերջ համբուրում եր ինձ, թեկ հայրս սեղմեց կրծքին ու ասաց,

— Ապրե՛ք, աղջիկս, դու լավ հեղափոխական կդառնաս...

#### 40. Ձ Ո Ր Ա Գ Ե Ս Ո Ւ Մ

Մի ժամանակ ես ձորերում  
Հովվի սրինգն եր շնգշնգում,  
Հիմա զվարթ, ժիր չչափն ե  
Այս վայրերի մեջ՝ զրնգում:

Մի ժամանակ ես սարերում  
Սոված գայլերն եյին փռնում,  
Հիմա կանաչ ծառիկներում  
Հաղարաչյա լույս ե վառվում:

#### 41. Ա Ի Դ Ա Ն

Գնդացրի համաչափ ճարճատյունը հանկարծ ընդհատվեց: Մրից սեւացած մատները, վորոնք սեղմում են զրնդացրի լծակը, թուլանում են: Ձեռքը դանդաղ ընկնում ե ցած և սեղմվում կրծքին: Մատները մեկ անգամ ել են ջղաձգաբար սեղմվում: Մրի միջից ծորում ե արյունը:

Ձեռքը քարանում ե:

Աիդան վախեցած թեքվում ե ընկերոջ վրա: Մազերի խճճված մի փունջ թափվել ե ճակատին: Կտրուկ շարժումով նա մազերը հետ ե ձգում:

Ընկերը մեռած ե: Նա անշարժ պառկած ե մյուսների կողքին:

Աիդան մենակ ե մնացել մեռելների մեջ:

Աիդան իր շուրջն ե նայում: Նա տեսնում ե ընկերներին կուչ յեկած դիակները, դեպի Ուլիսդոյի հյուսիսային կայարանը տանող նեղ ձորակը:

Տասը կոմյերիտականներ Աիդայի հետ միասին, մնալով Ուլիսդոյի հյուսիսային կայարանի մոտ գտնվող ձորակում, գիտեյին թե ինչ պետք ե անեն:

Տեղը հաջող եր կարմիր բանակի նահանջը պաշտպանելու համար: Մի քանի ժամ շարունակ կոմյերիտականներն իրար հետևից հետ եյին մղել ոտաբերկրյա լեզեոնի գրոհները: Իրար հետևից ընկերներն ընկել եյին:

Աիդան վերջինն եր...

Հետևում, ուր պահված եր թշնամին, զգուշությամբ յերեվում ե մի գլուխ: Աիդայի նիհար մարմինը ցնցվում ե:

Լուսթյունը սիրտ եր ավել լեզեոններներին: Նրանք սկսում են կամացուկ սողալ դեպի գնդացիքը: Աիդան սպասեց, մինչև վոր նրանք մոտեցան և սեղմեց լծակը:

Տրա-տա'-տա'-տա', — աշխատեց գնդացիքը:

Իրար հետևից, ասես հնձվելով, վայր թափվեցին սողացող կերպարանները:

Դրանք վերջին գնդակներն եյին:

Լեզեոններնից մեկը բղավում ե.

— Դադարեցրու կրա...

Գնդակը, Աիդայի գնդացրի վերջին գնդակը, կտրեց խոսքը լեզեոնների բերանում...

Այդ խոսքն այլևս յերբեք չի արտասանվի:

Գնդացիքը դարձյալ լուեց: Նահանջելու պատրաստված լեզեոններները կանդ առան:

Քսան հողի սվիններով նետվեցին դեպի Աիդան:

Այլևս միտք չունի պահվել գնդացրի վահանակի յետևը: Աիդան վրաքի կանգնեց և բաց անելով կուրծքը, ասաց.

— Դե՛հ, սպանեցեք ինձ, վողորմելի վախկոտներ, ի՞նչ եք սպասում...

Յերկու վոստյուն գործելով, լեզեոններները մոտենում են: Աիդան նայում ե նրանց արնակալած աչքերի մեջ: Աիդայի չրթունքներն արհամարհաբար սեղմված են: Վերջին անգամ նա հետ ե նետում ճակատից մազերի անհնադանդ փունջը:



Հայրիկս վաղեց և ծանր կճուճը վերցրեց:

— Ուրեմն, Քնարիկ, դո՞ւ յես այստեղ թաղցրել:

Իմ ուրախությանը չափ չկար:

Մայրիկս անվերջ համբուրում եր ինձ, իսկ հայրս սեղմեց կրծքին ու ասաց.

— Ապրե՛՛ս, աղջի՛կս, դու լավ հեղափոխական կլա-  
նաս...

#### 40. Ձ Ո Ր Ա Գ Ե Ս Ո Ւ Մ

Մի ժամանակ ես ձորերում  
Հովվի սրինգն եր շնդնդում,  
Հիմա գվարթ, ժիր չչափն ե  
Այս վայրերի մեջ՝ գրնդում:

Մի ժամանակ ես սարերում  
Սոված գայլերն եյին վռնում,  
Հիմա կանաչ ծմակներում  
Հազարաչյա լույս ե վառվում:

#### 41. Ա Ի Դ Ա Ն

Գնդացրի համաչափ ճարձատյունը հանկարծ ընդհատ-  
վեց: Մրից սեւացած մատները, վորոնք սեղմում են գըն-  
դացրի լծակը, թուլանում են: Ձեռքը դանդաղ ընկնում ե  
ցած և սեղմվում կրծքին: Մատները մեկ անգամ ել են  
ջղաձգաբար սեղմվում: Մրի միջից ծորում ե արյունը:

Ձեռքը քարանում ե:

Աիդան վախեցած թեքվում ե ընկերոջ վրա: Մազերի  
խճճված մի փունջ թափվել ե ճակատին: Կտրուկ շարժու-  
մով նա մազերը հետ ե ձգում:

Ընկերը մեռած ե: Նա անշարժ պառկած ե մյուսների  
կողքին:

Աիդան մենակ ե մնացել մեռելների մեջ:

Աիդան իր շուրջն ե նայում: Նա տեսնում ե ընկերնե-  
րի կուչ յեկած դիակները, դեպի Ովիեդոյի հյուսիսային  
կայարանը տանող նեղ ձորակը:

Տասը կոմյերիտականներ Աիդայի հետ միասին, մեա-  
րով Ովիեդոյի հյուսիսային կայարանի մոտ գտնվող ձորա-  
կում, գիտեյին թե ինչ պետք ե անեն:

Տեղը հաջող եր կարծիք բանակի նահանջը պաշտպա-  
նելու համար: Մի քանի ժամ շարունակ կոմյերիտական-  
ներն իրար հետեից հետ եյին մղել ոտարերկրյա լեզեոնի  
գրոհները: Իրար հետեից ընկերներն ընկել եյին:

Աիդան վերջինն եր...

Հետևում, ուր պահված եր թշնամին, զգուշությամբ  
յերեվում ե մի գլուխ: Աիդայի նիհար մարմինը ցնցվում ե:

Լուռություը սիրտ եր տվել լեզեոներներին: Նրանք  
սկսում են կամացուկ սողալ դեպի գնդացիքը: Աիդան  
սպասեց, մինչև վոր նրանք մոտեցան և սեղմեց լծակը:

Տրա-տա՛-տա՛-տա՛, — աշխատեց գնդացիքը:

Իրար հետեից, ասես հնձվելով, վայր թափվեցին սո-  
ղացող կերպարանքները:

Դրանք վերջին գնդակներն եյին:

Լեզեոներներից մեկը բղավում ե.

— Դադարեցրու կրա...

Գնդակը, Աիդայի գնդացրի վերջին գնդակը, կտրեց  
խոսքը լեզեոների բերանում...

Այդ խոսքն այլևս յերբեք չի արտասանվի:

Գնդացիքը դարձյալ լռեց: Նահանջելու պատրաստ-  
ված լեզեոներները կանգ առան:

Քսան հոգի սվիններով նետվեցին դեպի Աիդան:

Այլևս միտք չունի պահվել գնդացրի վահանակի յե-  
տևը: Աիդան վոտքի կանգնեց և բաց անելով կուրծքը,  
ասաց.

— Դե՛հ, սպանեցեք ինձ, վողորմելի վախկոտներ, ի՞նչ  
եք սպասում...

Յերկու վոստյուն գործելով, լեզեոներները մոտենում  
են: Աիդան նայում ե նրանց արնակալած աչքերի մեջ:  
Աիդայի շրթունքներն արհամարհաբար սեղմված են: Վեր-  
ջին անգամ նա հետ ե նետում ճակատից մազերի անհնա-  
ղանդ փունջը:



Բարձր և հստակ հնչում երԱրդայի վերջին խոսքերը.  
— Կեցցե՛ հեղափոխությունը: Կեցցե՛ կոմունիզմը:  
Մի քանի սվին միաժամանակ խրվում են նրա կուրծ-  
քը: Նա դանդաղ ընկնում է գետին:

Արդայի աչքերը լայն բացված են: Վերջին մարող  
հայացքը նա հառում է Աստուրիայի վառ-կապույտ յեր-  
կրնքին:

#### 42. ԿԵՑՑԵ՛ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Յերբ լուսաբացին ճապոնացի զինվորները չինացի  
Լաո-Սենին խրճիթից դուրս բերին, բանտարկված գյու-  
ղացիները չգիտեյին, վոր վերջին անգամն են տեսնում  
նրան: Նրանք դժվարությամբ մոտեցան փոքրիկ լուսա-  
մոմտին և տեսան, թե ինչպես ծերունի Լաո-Սենին դուրս  
բերին բակը և չոքեցրին, յերեսը դեպի պատը դարձրած:

Կապրալն ատրճանակը ձեռքին մոտեցավ նրան: Ծե-  
րունի գյուղացին վերջին անգամ բարձրացրեց գլուխը:

— Կորչե՛ն ոտարեկրյա կեղեքիչները:

— Կեցցե՛ ազատությունը:

Նա ել վռչինչ չկարողացավ ասել...

Կապրալը կրակեց նրա ծոծրակին: Լաո-Սենի դիակը  
փովեց գետնին:

Զիռ վտանաճայն լսելով, ճապոնացի սպաներն ահա-  
բեկ նետվեցին դեպի դուռը:

Մի առ ժամանակ նրանք վռչինչ չկարողացան նշա-  
րել. ամեն ինչ փոշու ամպով եր պատած: Միայն յերբ  
ձիավորները ձիերից ցած թռան, սպաները տեսան, վոր  
դրանք կարմիր պարտիզաններն են:

Կապիտանն արագ վերադարձավ բակը՝ զինվորներին  
կարգադրություն անելու: Բայց նա տեսավ, վոր բակի  
խորքում մի քանի զինվորներ հրացանների կոթերով ծե-  
ծում էյին հաստափոր կապրալին, և մի ակնթարթում  
նրանց չըջապատեցին պարտիզանները:

Պարտիզաններն ափսոսում էյին զնդակները և սպա-  
ներին խփում էյին իրենց լայնաբերան դանակներով: Հե-

տո զինվորներին ուղեկցությամբ պարտիզանները գնացին  
դեպի այն տունը, ուր փակված էյին գյուղացիները: Նը-  
րանք ջարդեցին փականքը և բացանկանչեցին:

— Ընկերներ՛ր, դուք ազատ եք:

#### 43. ՅԵՐԳ ՇՈԳԵՆԱՎԻ ՄԱՍԻՆ

Արևն է բարձրից այրում վաղաժամ,  
Փոթորկի քամին մռնչում ծովում,  
Յեվ արևմուտքից դեպի արևելք  
Մի չոզենավ եր շտապով լողում:

Իսպանիայից եր չոզենավը այդ  
Քանի որ առաջ ճանապարհ ընկել,  
Յերբ կապույտ, պայծառ յերկինքը մթնեց,  
Յերբ սկսեցին փչել քամիներ:

Այդ չոզենավը տանում եր արագ  
Մի արտասովոր, մի թանգազին բեռ  
Դեպ խորհրդային յերկիրը ազատ  
Իսպանացի թուխ, սիրուն մանուկներ:

Ամեն մի թիզը իրենց աշխարհի  
Պաշտպանում էյին իրենց հայրերը,  
Բայց անհալասար մարտերում ընկան՝  
Զպետք է մեռնեն յերեսխաները:

Յեվ այն հեռավոր չքնաղ աշխարհում,  
Ուր չոզենավն է շտապով տանում,  
Կգտնեն իրենց համար հայրենիք,  
Անթիվ բարեկամ, սիրող ընտանիք:

Մեքենաներն են ներքևում փնչում,  
Վերևում ուժգին քամին է ճչում,  
Քնած են հանգիստ չորս-չորս յերեսա-  
նեղլիկ սենյակում թախտերի վրա:

Ահա նրանցից մի փոքրիկ զարթնեց,  
Փափլիկ թաթիկը դեմ տվեց թչին,



Միտք արավ վաղվա, գալիքի մասին  
Յեւ ականջ դրեց ջրերի ճշին:

Գիտե նա հաստատ՝ անծանոթ յերկրում  
Պիտ գնա դպրոց, կունենա և տուն,  
Ուսումնարանում, Ստալինը կըմտում  
Իրա մասին են մտածում, խորհում:

Արեն է բարձրից այրում վաղաժամ,  
Փոթորկի քամին մռնչում ծովում,  
Յեւ արեմուտքից դեպի արևելք  
Մի շողենավ է շտապով լողում:

#### 44. ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ ՈՐՈՐԸ

Մի՛ լար, վորդի՛ս, վոր չես լսում  
Եւ մայրական քաղցր որոր.  
Յես մեծ կովի յերգն եմ հյուսում  
Որոցքիդ մոտ ամեն որ:

Դու լսո՞ւմ ես, այնտեղ՝ դրսում  
Շաչ ու շառաչ, լաց ու կոծ.  
Մեր արյունն է այնտեղ հոսում՝  
Ներկած և՛ տուն, և՛ փողոց:

Այնտեղ գնդեր խառն ու ցրիվ,  
Բանվոր գնդեր ահարկու,  
Քաջ մղում են մի մեծ կռիվ  
Աշխատանքի և վոսկու:

Այնտեղ հայրեր, այնտեղ վորդիք,  
Մի նոր կյանքի յեղերքում,  
Վորպես մի-մի հերոս մարտիկ  
Մահն են գրկում ու յերգում...

Մի՛ լար, վորդի՛ս, վոր չես լսում  
Եւ մայրական քաղցր որոր.  
Յես մեծ կովի յերգն եմ յերգում  
Որոցքիդ մոտ ամեն որ:



#### ԴՈՂՈՐԵՍ ԻԲԱՐՐՈՒՐԻ

45. ՄԵՆՔ ԿՀԱՂԹԵՆՔ

(Իբարրուրի Դոլորեսի նամակը՝ վորդուն)

#### ԹԱՆԳԱԴԻՆ ՌՈՒԲԵՆ

... Դու չես ել կարող պատկերացնել, իմ վորդյակ,  
Թե ինչպիսի դաժան կռիվ է այժմ Իսպանիայում: Փա-  
շիզմը ձգտում է, ինչ գնով ել լինի, իր արյունոտ թաթե-  
րի մեջ ճզմել իսպանական ժողովրդի սիրտը: Սակայն իս-  
պանական ժողովուրդը հոյակապ թափով վտաքի յելավ  
պաշտպանվելու և գերադասում է մեռնել, քան թե Փա-  
շիզմի ստրուկը դառնալ:

Յես շատ որեր եմ անցկացրել ճակատում, ժողովրդա-  
կան միլիցիայի և մեր գվարդիայի մարտիկների հետ:  
Նրանք բոլորն ել պայքարում են արիաբար, հերոսների  
պես:

Յես վստահ եմ, վոր չնայած բոլոր դժվարություն-  
ներին, այնուամենայնիվ մենք կհաղթենք:

Յեթե մենք ընկնենք այս պայքարում, դո՛ւ, իմ վոր-  
դյակ, ամրացիր: Հիշիր մեր իդեալի մասին, պատրաստ յե-  
ղիր պայքարելու, պատրաստ յեղիր՝ զոհաբերության՝ մեր  
գործի համար:



Սովորեր աշխատել և հասկանալ քաղաքական խնդիրները: Դու ֆիզիկապես ևս պետք է ամուր լինես: Ուսումնասիրիր Մարքսի ուսմունքը, վորպեսզի հասկանաս վողջանցուղարձը: Սիրալիր յեղիր դեպի ջո ընկերները: Յերբեք մի՛ կասկածիր, վոր կոմունիզմին պետք է նվիրել վողջ կյանքը:

Յտեսությո՛ւն, զավակս: Քեզ ջերմ համբուրում եմայրդ՝

ԴՈՒՈՐԵՍՐ

46. «ՀԻՇՈՒՄ ԵՄ ՔՈ ԽՈՍՔԵՐԸ, ՄԱՅՐԻԿ»

(վորդու որագրից)

Յես իսպանացի յեմ, այժմ ապրում եմ Խորհրդային յերկրում: Իմ մայրը, Դուրես Իբարրուրին, այժմ Իսպանիայումն է:

Նա Բիսկայան հանքագործի աղջիկ է, իսկ հայրս լեռնագործ բանվոր: Մենք ապրում էյինք Իսպանիայի հյուսիսում, Բիլբաոյում, և մեծ կարիքի մեջ էյինք: Մեր տանն ամեն ուր խուզարկություններ էյին լինում:

Վոստրիկանությունը մեզ հանգիստ չեր տալիս, վորովհետև հայրս ու մայրս հեղափոխականներ էյին: Խուզարկությունների ժամանակ մայրս իրեն հանգիստ ու աւրի յեր պահում:

Նա ասում եր վոստրիկաններին.

— Ինչո՞ւ դուք միշտ մեզ՝ աղքատներին մոտ եք դաւիս, և վոչ թե կապիտալիստների:

Հայրս շատ անգամ է բանտ նստել, հաշիվն էլ եմ մոռացել: Իսկ մայրս, հիշում եմ, չորս թե հինգ անգամ բանտարկվել է:

Յես հպարտանում եմ իմ մայրիկով: Ինչքան էլ վոր դրադված լինի նա, միշտ շատ սիրալիր է դեպի ինձ:

Ինձ համար դժվար եր դպրոցում սովորելը: Փող չունեյինք դասադրքերի համար, իսկ ուսուցիչներն այդ բանի համար հայհոյում և տուն էյին ուղարկում ինձ: Իսկ մայրիկս ասում եր.

— Ռուբեն, սովորիր՝ ինչ դնով ել վոր լինի: Բանվորները պետք է տիրապետեն գիտությանը, վորպեսզի հաղթեն:

Յես մեկ ամիս անցկացրի «Արտեկ» պիոներական ճամբարում:

Կազդուրվեցի և նոր յեռանդով չարունակեցի սովորել:

Յես լավ եմ հիշում ջո խոսքերը, իմ Թանգադին մայրիկ, վոր ասացիր հրաժեշտի ժամանակ. «Մնաս բարով Ռուբեն, մենք դեռ կտեսնվենք: Լավ սովորիր և աշխատիր, միշտ հավատարիմ յեղիր բանվոր դասակարգի գործին»:

ՌՈՒԲԵՆ ՌՈՒԻՍ

47. ԴՊՐՈՑԱԿԱՆ—ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ

Լսի՛ր, ընկեր Վորոշիլով,

Մեր ռապորտը ընդունիր:

Մարտիկներ ենք ուզում դառնալ,

Մեզ մարտիկներ դու հաշվիր:

Յեվ մենք հաստատ վորոշել ենք,

Վոր մարտիկներ լինենք մենք:

Դու տեսնում ես, մեր քաջ ընկեր,

Այս տետրակը բաղմանջ.

Մաքուր, սիրուն և անսխալ

Պիտի գրենք նրա մեջ:

Յեվ մենք հաստատ վորոշել ենք՝

Գերազանցիկ կլինենք:

Չե՞ վոր, ընկեր Վորոշիլով,

Մենք իզուր չենք սովորում.

Սովորում ենք, վոր վեր թռչենք՝

Վոր սլանանք ծովերում:


Յեվ մենք հաստատ վորոշել ենք,

Վոր սլանանք ու թռչենք:

Մեր սիրելի Վորոշիլով,

Կանցնեն ամիս ու տարի,





ԸՆԿԵՐ ՎՈՐՈՇԻԼՈՎ

Կմեծանանք, բոյ կըաշենք,  
Ձի կնստենք քաջարի:

Յեւ մենք հաստատ վորոշել ենք,  
Վոր մեծանանք, ձի նստենք:

Գիտե՞ս, ընկեր Վորոշիլով,  
Սճեն մեկը մեզանից

Ուզում ե քաջ լինել քեզ պես

Յեւ սովորել քեզանից:

Յեւ մենք հաստատ վորոշել ենք,  
Վոր քեզանից սովորենք:

Այնպես պատահեց, վոր Բուդյոննին մի գյուղ մտնե-  
լիս՝ դեմ առ դեմ հանդիպեց սպիտակներին: Խուսափել  
անհնար եր. սպիտակները հետևից կկրակեյին և կսպա-  
նեյին:

Բուդյոննին մտածեց. — կորա՛ծ ենք, յեթե հնարա-  
գետ չլինենք, — ու նայեց իր հետ ծուղակն ընկած ընկե-  
րով դեմքին: Ընկերը հասկացավ նրան:

Սպիտակները, յերբ նրանց տեսան, կարծեցին, վոր  
իրենցից են, միայն անծանոթ: Ապա մի քիչ չփոթվեցին:

Բուդյոննու ձին նման եր կարմիր բանակայինների  
ձիերին: Պոչը խուզած եր:

— Ես ի՞նչ ե, ձեր ձին Բուդյոննու զինվորների ձիե-  
րի նման ե, — ասացին սպիտակները:

— Այո՛, — ընդհատեց Բուդյոննին, — սա յես խլել եմ  
կարմիրներից:

Սպիտակները հավատացին, առանց իմանալու, վոր  
հետները խոսում ե ինքը՝ Բուդյոննին:

— Դե՛, ներս յեկեք, ընկերներ, — հրավիրեցին նրանց:  
Բուդյոննին ընկերով հետ ներս մտավ:

Ընթրիքի ժամանակ սպիտակները իրենց գլուխն եյին  
դռվում:

— Բուդյոննուն ճանաչում ենք. ձին ել ե ծանոթ:  
Վոր հանդիպենք՝ վողջ-վողջ կրոնենք:

— Յես ե՛լ եմ ճանաչում, — ասում ե Բուդյոննին, —  
մի անգամ ուզում եյի գերի վերցնել, բայց ձեռքիցս դուրս  
պրծավ:

Բուդյոննին և ընկերը բախը դուրս յեկան: Վոչ վոք  
չկար: Թռան ձիերն ու անհայտացան:

Այս հանդիպումը դուր չանցավ. նա վերցրեց մի վաշտ  
ու հարձակվեց գյուղի վրա, վորտեղ քիչ առաջ ընթրում  
եւր սպիտակների հետ:

Սպիտակները դիմադրեցին, բայց իզուր. Բուդյոննին  
բոլորին ել գերի վերցրեց:



Քո հին զինվորից վողջույն, կոմիսար,  
Արդեն լրացավ տասնվեց տարին,  
Բաժանում են մեզ այնքան գետ ու սար,  
Բայց չեմ մոռացել իմ կոմիսարին:

Քսանեմեկ թվին... Զյունապատ, անծիր,  
Դաշտերն եմ ահա իմ առջև դիտում,—  
Փոսի մեջ դրած մի հատ գնդացիր՝  
Կանգնած եմ անվախ յես Նորադավթում:

Խալարն ե իջնում ձյան հետ միասին,  
Ու պառկում եմ յես իմ նեղլիկ փոսում:  
Անծայր տափարակ, վո՛չ աստղ, վո՛չ լուսին,  
Բնաբեր քամի, ծանր ըսպասում:

Յեվ, ասես, գետնից թռչում եմ հանկարծ  
Թշնամին հեծյալ ու դոփում արագ:  
Խուճապ ու նահանջ: Յես փոսում պառկած  
Իմ գնդացրից բացում եմ կրակ:

Ճարճատում ե նա: Պարզ լսում եմ յես  
Զորս սմբակների դոփյունը վերջին.  
Փախչում են նրանք, իսկ մերոնք անտես  
Հասել են արդեն դյուղի կամուրջին:

Գնդացիրն առած և անհավասար  
Մարտ տալով բքին սողում եմ մինչ ծեղ:  
Ա՛խ, այդ գիշերը, ընկեր կոմիսար,  
Ուղեղիս միջից չի ջնջվի յերբեք:

Այդ որից յերկար ամիսներ անցան,  
Մենք մարտեր տեսանք ավելի դաժան.  
Յես բերի ինձ հետ մի հին հրացան  
Յեվ կրծքիս՝ կարմիր մի շքանշան:

Յեվ յերբ պետք լինի, հետ կգամ նորից.  
Յես չեմ մոռացել գնդացիրն անդին:  
Վողջու՛յն, կոմիսար, քո հին զինվորից,  
Վոր պատրաստ ե քո նոր հրահանգին:

Բարե ձեզ, թանգագին հայրիկ ու մայրիկ:

Հենց հիմա կարդացի ձեր գրած նամակը:

Ախր ինչո՞ւ յեք անհանգստանում, ինչո՞ւ յեք խրդ-  
ճում, վոր յես ծառայում եմ Կարմիր բանակում: Իմ  
պարտքն ե զենքը ձեռքիս պաշտպանել մեր Խորհրդային  
Միությունը: Յես հպարտ եմ, վոր Կարմիր բանակի մար-  
տիկն եմ:

Դուք սրտանց ուզում եք իմանալ, թե յես ի՛նչպես եմ  
ապրում: Ահա պատմեմ ձեզ: Առավոտյան ժամի վեցին  
զանգ են տալիս, իսկույն վեր ենք կենում, լվացվում և հե-  
տո տեսակ-տեսակ վարժություններ ենք անում, վոր ա-  
ռողջ մարմին ունենանք:

Կերակրում են մեզ որակյան յերեք անգամ. միշտ ել  
յով կերակուրներ են լինում: Նոր, մաքուր հագուստներ  
ունենք:

Մեր զորանոցը շատ մաքուր ե պահվում: Որակյան  
աշխատում ենք ութ ժամ, սովորում ենք զործածել հրա-  
ցան, գնդացիր և հակազազեր:

Մեզ դրել և կարգալ են սովորեցնում, լրագիր ենք  
կարդում:

Ազատ ժամանակն անց ենք կացնում լենինյան ան-  
կյունում: Այնտեղ շաշկի ել կա, շախմատ ել և շատ ու-  
րիշ խաղեր: Շուտ-շուտ ներկայացումներ ենք տալիս, մեր  
հրամանատարն ել ե խաղում մեզ հետ: Սովորելու և ծա-  
ռայելու ժամանակ լսում և կատարում ենք նրա հրաման-  
ները, իսկ ազատ ժամերին նա մեր ամենալավ ընկերն ե:

Ձեր վորդի՝ ԼԵՎՈՆ

## 51. ԼԵՅՏԵՆԱՆՏ ԻՎԱՆ ՄՈՇԼԵԱԿԸ

Սաստիկ անձրև եր յեկել: Կարմիր բանակայիներն  
անցնում եյին մինչև կոկորդը ջրի միջով: Մոշլյակը շա-  
ղունակ գնում եր մարտիկների առջևից:

Ահա և բլուրը, փշալարերով չրջապատված:



Մոռլյակը «կեցցե՛ր ընկեր Ստալինը» գոչելով առաջինն է վազում դեպի փշալարերը և մկրատով կտրտում:

Ճապոնացիները կատաղի կերպով հրացան են կրակում: Թնդում է հրետանին: Բայց այնպիսի ուժ չկա, վոր կանգնեցնի մարտիկներին:

Մոռլյակը, մյուս հրամանատարների ու մարտիկների հետ, առաջինն է գրավում բլուրը և նրա գագաթին կարմիր դրոշակ է տնկում:

Ճապոնացիք, «բանդայ» գոչելով, ուզում են կրկին գրավել բլուրը: Մոռլյակը վիրավորվում բայց շարունակում է կրակել թշնամու վրա:

Գիշերը վրա յե հասնում: Բայց կռիվը շարունակվում է: Ճապոնացիներն ուզում են նռնակներով վայր ձգել կարմիր դրոշակը: Բայց իզուր:

Մոռլյակը յերկրորդ անգամ է վիրավորվում, բայց կռվից չի հեռանում, ասելով.

— Քանի վոր խորհրդային սահմանի վրա կա թեկուք մի ճապոնացի, յես կռվից չեմ հեռանա...

Զառոյորնայա բլրի վրա կրկին ծածանվում է խորհրդային դրոշակը...

## 52. ԻՐ ԽՈՍՔԻ ՏՆՐ ԿԱՐԻՆՆԵՆ

### 1

Մեծ դասամիջոցին մի խումբ աշակերտներ միջանցքում կանգնած վիճում էին:

— Այսոր Կարմիր Բանակի տոնն է, հանդեսին պետք է վոտանավոր արտասանեմ, — ասաց Յեվան:

— Իսկ յես Կարմիր Բանակի հրամանատար պիտի դառնամ, — ճչաց չարածճի Ժորիկը:

— Յես ե՛լ, — ասաց Գրիշիկը: — Իմ հայրիկը կարմիր հրամանատար է:

— Մենք ե՛լ, — գոչեցին Նորիկն ու Մազիկը:

— Իսկ յես բոլորիցդ ել լավ հրամանատար կդառնամ, — ասաց Կարինեն:

— Աղջիկ հրամանատար կլինի՞, — ծիծաղեց Ժորիկը:

— Իհարկե՛, չի լինի. աղջիկներին բանակ չեն ընդունում, — ասաց Գրիշիկը:

— Շատ լավ ել կընդունեն, յեթե քաջ է և անվախ, — պատասխանեց Կարինեն: — Յես ել զինվորական գործը պիտի լավ սովորեմ, վոր մեր հայրենիքը պաշտպանեմ:

### 2

Մի քանի տարի անցավ:

Պիոներ Կարինեն, տղաների հետ միասին, մասնակցում էր վորոշիլովյան հրաձիգների խմբակին:

Նա դպրոցում առաջին հրաձիգն էր և հպարտությամբ ասում էր իր ընկերներին.

— Յես հրաձիգ եմ դարձել, վոր պաշտպանեմ մեր սիրուն հայրենիքը թշնամիներից:

## 53. Զ Ն Ծ Ա Ղ Ի Կ

Դու բերում ես կանաչ դարուն,  
Կանա՛չ, ծաղկա՛ծ, սիրո՛ւն դարուն,  
Դու կապուտակ, անուշ ծաղիկ,  
Զյունից ծնված դու ճնճաղիկ:

Հենց փախչում է ձյունը սարից,  
Յեվ դարունն է մեզ հյուր դալիս,  
Մեր սարերի կանաչ լանջում  
Մի ծաղիկ է ծլում-ծաղկում:

Նա բերում է մեր աշխարհին  
Ուրախություն դարնանային,  
Յեվ բոլորից շուտ է ծաղկում  
Ծաղիկներին առաջնորդում:

Քեզ բյո՛ւր վողջույն, կանաչ դարուն,  
Կանա՛չ, ծաղկա՛ծ, սիրո՛ւն դարուն,  
Քե՛զ ել վողջույն չնաշխարհիկ  
Զյունից ծնված մեր ճնճաղիկ:



Յորենի հատիկը պառկած էր հողի տակ: Հատիկի մեջ  
քնած էր փոքրիկ սաղմը:

Քնած էր նա ամբողջ ձմեռը:

Գարնան արևի շողը յեկավ, կանչեց նրան.

— Զարթնի՛ր, գարուն է:

Սաղմը զարթնեց հատիկի մեջ: Զարթնեց, սաստիկ  
քաղց զգաց, սկսեց ծծել իր մոտի պաշարը: Ծծեց, ծծեց  
ու մեծացավ, պատռեց պարուրներն ու արմատիկները  
խրեց ցած, փափուկ հողի մեջ, նոր կերակուր վորոնելու:

Իսկ արևի ջերմությունը շարունակ քաշում էր նրան  
վերևից, ու սաղմը ձգվում էր դեպի այն կողմը, դեպի  
վեր:

Զգվեց, ձգվեց ու հանկարծ դալար ծիրը դուրս նայեց  
հողի տակից:

Ի՛նչ տաք էր, ի՛նչ պայծառ ու ի՛նչ ազատ էր նրա  
շուրջը:

Առավոտյան հովիկը ցողի մի կաթիլ դրեց նրա կի-  
սաբաց թերթիկին ու փսփսաց.

— Բարի՛ լույս:

## 55. Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ Ի Ն

Դու կապուտակ ծովով արի,

Թեթև, թեթև թևով արի.

Ծովի փրփուր լանջով արի,

Գարնան յերգով, կանչով արի:

Արի՛, արի՛, սիրուն ծիծեռ,

Արի՛, արի՛, գարուն դու բեր:

Սևիկ-մևիկ աչիկ ունես,

Մկրատաձև պոչիկ ունես,

Ծովի փրփուր լանջով արի,

Գարնան շնչով, կանչով արի:

Արի՛, արի՛, սիրուն ծիծեռ,

Արի՛, արի՛, գարուն դու բեր:

Ծիծեռնակով գարուն կգա,

Անծիծեռնակ գարուն չկա,

Ծովի փրփուր լանջով արի,

Գարնան շնչով, կանչով արի:

Արի՛, արի՛, սիրուն ծիծեռ,

Արի՛, արի՛, գարուն դու բեր:

## 56. Ծ Ի Տ Ն ՈՒ Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ Ի Ն

1

Մի անգամ բախում կանգնած, նայում եյի մեր տա-  
նիքի տակ չինված ծիծեռնակի բնին:

Հենց այդ ժամանակ յերկու ծիծեռնակներն ել թռան,  
գնացին և բունը դատարկ մնաց:

Ծիծեռնակների թռչելուց հետո, տանիքից մի ծիա  
թռավ, յեկավ նստեց բնի յեզրին, դես ու դեն նայեց,  
թևերը թափահարեց և արագ բնի մեջ մտավ:

Հետո գլուխը բնից հանեց ու ծլվլաց:

Քիչ հետո ծիծեռնակներից մեկը յեկավ բունը մտավ,  
բայց հենց վոր հյուրին տեսավ, ճուլողաց, թևերը թա-  
փահարեց ու թռավ, գնաց: Ծիտը, բնի մեջ նստած, ծըլ-  
վում էր:

2

Մեկ ել հանկարծ մի խումբ ծիծեռնակներ յեկան. բո-  
լորն ել մոտեցան բնին, կարծես ծաին տեսնելու համար,  
ու ելի թռան, գնացին:

Ճնճղուկը չվախեցավ. գլուխը դես ու դեն եր դարձ-  
նում ու ծլվլում:

Ծիծեռնակներն ելի յեկան, մոտեցան բնին, ինչ-վոր  
բան արին ու ելի թռան գնացին:

Ծիծեռնակներն իզուր չեյին գալիս. նրանցից ամեն  
մեկը կառուցով ցեխ եր բերում և կամաց-կամաց բնի անց-  
քը ծեփում:

Ելի գնացին, ելի յեկան ծիծեռնակները, ավելի ու ա-  
վելի ծեփեցին: Անցքը փոքրանում էր ու փոքրանում:



Առաջ յերևում եր ծախ վղիկը, հետո միայն գլխիկը,  
հետո քթիկը, իսկ հետո՝ ել վոչինչ չերևաց:

Ծիծեռնակները բնի անցքը բոլորովին ծեփեցին և  
սկսեցին ճովողելով տան շուրջը պտտվել:

# 57. Գ Ա Ր Ո Ւ Ն

Զմեռն անցավ...

Յեկավ գարուն...

Զյունը հալվեց,

Լցվեց առուն:

Արև ծագեց

Արևելքից,

Ծիլեր քաշեց

Գետնի տակից:

Տաք հարավից

Յեկան հավքեր,

Բուն հյուսեցին

Ընկեր-ընկեր:

Ծառը պտկեց,

Տվեց բողբոջ,

Առուն հանեց.

Անուշ խոխոջ:

Փովեց կանաչ

Սարի լանջին,

Կարմրեց մորին

Թփի միջին:

Դաշտը թավիչ

Զդեստ հաղավ,

Կանգնեց քարին,

Յերգեց կաքավ:

Առյուծի կորյունը փակված եր վանդակում: Նա  
մոռյալ նայում եր յերկաթե ամուր ձողերի հետևից: Կա-  
րոտով հիշում եր իր հայրենի տաք անապատը, հիշում  
եր՝ ինչպես աղատ, ուրախ խաղում եր արմավենիների  
տակ:

Այժմ անցել է ամեն բան, և գազանանոցում փակված  
է նա:

Գիշեր եր: Ծուրջը լուռ ու խաղաղ: Վազրը, արջը,  
գայլը, կապիկները, ջայլամն ամենքն իրենց վանդակնե-  
րում, հարդի վրա ընկած, սպասում եյին լուսանալուն:

Վերջապես առյուծի հոգնած ձագն ել գլուխը դրեց  
թաթերի վրա ու քնեց:

Գիշերվա մի ժամանակ հանկարծ գազանանոցի դու-  
ռը բացվեց ու ներս մտավ կորյունի մայրը: Ներս մտավ  
հզարտ ու հզոր, կրակոտ աչքերը ման ամեց վանդակների  
վրա ու տեսավ...

Նա տեսավ իր զավակին: Աչքերը փայլատակեցին,  
մոնչաց, հարձակվեց, իր ուժեղ զարկով ջարդեց վան-  
դակի ձողերը...


Կորյունն ուրախությունից ճչաց, վրա թռավ, վոր  
ընկնի մոր գիրկը, դիպավ յերկաթի ձողերին ու դարձ-  
նեց...

Գիշեր եր: Ծուրջը լուռ ու խավար: Վազրը, արջը,  
գայլը, կապիկները, ջայլամն ամենքն իրենց վանդակնե-  
րում հարդի վրա ընկած՝ սպասում եյին լուսանալուն:

Կորյունը յերկար մոնչում եր գիշերվա լուրջյան մեջ-



Ծերացել եր կապիկը,  
 Լավ չեր տեսնում պապիկը.  
 Առավ ակնոց՝  
 Մի վողջ կապոց:  
 Ակնոցները փոքր ու մեծ  
 Ձեռքերի մեջ պտտեց.  
 Մին դնում է իր գլխին,  
 Մին ել պոչի մեջտեղին,  
 Մին լիզում է թքոտում,  
 Մին ել սրբում, հոտոտում:  
 Հա՛ փորձում է, հա՛ փորձում,  
 Բայց ակնոցը չի գործում.  
 Են պսպղուն ապակին  
 Լույս չի տալիս պապիկին:  
 «Կորչեն, — գոռաց, — ջուխտ ու կենտ,  
 Նա՛ յե հիմար, նա՛ յե խենթ,  
 Ով լսում է այդ խոսքին,  
 Մարդկանց հազար մի ստին:  
 Մրանց մասին  
 Ինչ վոր ասին,  
 Սո՛ւտ է, սո՛ւտ.  
 Ես ապակին  
 Խավար աչքին  
 Ի՞նչ ոգուտ»:  
 Ու կապիկը՝  
 Ծեր պապիկը,  
 Խորը վշտով ակնոցները  
 Ենպես խփեց չոր քարին,  
 Վոր ջուր կտրած փշրանքները  
 Կանաչ-կարմիր կապեցին:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

60. Ա Ղ Բ Յ ՈՒ Ր Ը

Սարի լանջին, Ժայռի տակ  
 Ջուր եր բղխում սառնորակ  
 Ու ցրվելով խոտերում,  
 Իզուր ճահիճ եր դառնում:

Նրա առջև մի խոր գուշ  
 Ծինեց հովիտն ու անուշ  
 Խաղ ասելով նա տարավ,  
 Ջրեց հոտը իր ծարավ:

Պախրեն անցավ են սարից՝  
 Շողից հանած չոր լեզուն,  
 Կուչտ-կուչտ խմեց աղբյուրից  
 Ապա նայեց նա հեռուն:



Անցվորն եկավ տոթակեզ,  
Սառն աղբյուրին վոր հասավ,  
Գլխարկն առավ ու չոքեց՝  
Խմեց, սիրտը հովացավ:

Ու տվավ իր որհնանքը  
Անցվոր մարդը են բարի.  
«Բո շինողի որ-կյանքը  
Ձրի նման յերկարի...»

# 61. Ճ Ն Ճ Ղ Ո Ի Կ Ը

Վորսից վերադառնալիս անց եյի կենում մի պարտեզի  
միջով: Շունս վազում եր իմ առջևից:

Նա հանկարծ իր քայլերը փոքրացրեց և սկսեց կամաց  
ու զգուշ առաջ գնալ. կարծես վորսի հոտ եր առել:

Յես նայեցի ու փոքր ինչ հեռու, ճամփի վրա տեսա  
մի փոքրիկ ճնճղուկ, վորի կտուցի շուրջը դեղին եր, իսկ  
գլուխն աղվամազով ծածկված: Նա ընկել եր բնից ու ան-  
շարժ պառկել եր, միայնակ ու անոգնախան, հաղիվ դուրս  
յեկած փոքրիկ թևերը փռած:


Յերբ շունս ծանրաքայլ մոտենում եր նրան, հանկարծ  
մոտակա ծառի վրայից մի մեծ, սև կրծքով ճնճղուկ, քա-  
րի պես ցած նետվեց, ընկավ ուղղակի շան առաջը և հու-  
սահատ ու ծղրտոցով մի յերկու անգամ խռավ դեպի շան  
դունչը:

Նա հարձակվում եր, վոր փրկի, պահպանի ձագին...  
Բայց նրա փոքրիկ մարմինը դողում եր սարսափից: Նրա  
ծղրտոցը կատաղի յեր: Նա ուժից ընկնում եր. նա իրեն  
զոհում եր:

Ի՞նչ ահագին հրեշ պիտի յերևար նրա աչքին շունը...  
Բայց և այնպես նա նստած մնալ չկարողացավ բարձր ու  
անվտանգ ճյուղին...

Շունս կանգ առավ. հետ քաշվեց...

Յես շտապեցի չվարած շանս հետ կանչել և հեռացա՝  
պզալով մեջս մի պատկառանք դեպի այդ փոքրիկ թռչունը:



# 62. Ա Ր Ա Գ Ի Լ

Արագի՛լ, բարով յեկար,  
Հա՛յ, արագի՛լ, բարով յեկար,  
Դու մեզ դարնան նշան բերիր  
Մեր սրտերն ուրախ արիր:

Արագի՛լ, յերբ գնացիր,  
Դու մեզանից յերբ գնացիր,  
Հա՛ փչեցին բուք ու բորան,  
Ծիլ ու ծաղիկ ամեն տարան:

Արագի՛լ, բարով յեկար,  
Հա՛յ, արագի՛լ, բարով յեկար,  
Բունըդ շինիր դու մեր ծառին,  
Մեզ մոտ մնա ամբողջ տարին:



## 1

Յերկաթուղու գծի մոտ գտնվող մի տնակում խաղում էին չորս տղա, բոլորն էլ դրեթե իրար հասակակից։

— Դե՛հ, Սաքո,— կանչեց նրանցից մեկը,— յեթե քաջ տղա յես, կանգնիր յերկաթգծի վրա. չուտով անցնելու յե արագ գնացքը։

— Ինչո՞ւ կանգնեմ,— պատասխանեց Սաքոն,— բան ու գործս կտրվե՞լ ե։

— Ի՛, վախկոտ, պարծենում ես, թե ամենքիցս քաջն ես։ Յե՛վ յերեք ընկերներն սկսեցին ծաղրել Սաքոյին, բայց նա վռչինչ չէր պատասխանում։

Քիչ հետո նրանք դուրս թռան սենյակից նայելու, թե ինչպես կանցնի արագ գնացքը, իսկ Սաքոն նրանց հետեւից ձայն տվեց։

— Ավելի լավ ե տանը մնաք, անձրեւի տակ զուր տեղն ինչո՞ւ յեք թրջվում։

Հանկարծ սարսափելի աղաղակներ լսվեցին։

— Սաքո՛, Սաքո՛։

Տղան դուրս վազեց։ Նա իսկույն նկատեց, վոր մոտակա կամուրջը քանդվել է, իսկ գնացքը հենց այն ե՛ պիտի գար ու վրայովն անցներ։

— Կգլորվի, անպատճառ անդունդը կգլորվի։

Բոլորի սրտերը սաստիկ բաբախում էին։

— Պետք ե չուտով մի հնար գտնենք գնացքը փրկելու,— կանչեց Սաքոն։— Ինչքա՞ն ժամանակում կարելի յե կայարան հասնել։

— Կես ժամում։ Այստեղից կարճ ճամփով չորս կիլոմետր կլինի։

— Զի՞ կարելի ձի ճարել։

— Զրադացական Գիքորն ունի, բայց մինչև Զրադացը բավական հեռու յե։

— Հովսե՛փ, վազիր դեպի Զրադացը և փորձիր մի կերպ կայարան հասնել գնացքը դուրս գալուց առաջ։ Արմենա՛կ, դու ել շտապիր գծի ճամփով, գուցե կարողանաս պահպանին իմաց տալ, վոր գնացքը կանգնեցնի։ Իսկ յես ու Աշոտը կմնանք այստեղ, յեթե դուք բան չանեք, մենք կաշխատենք կանգնեցնել գնացքը։

— Վաղուց ե այսպիսի հեղեղ չեմ տեսել,— ասում եր մեքենավարը։

— Յես ել,— պատասխանեց ոգնականը,— տես, սարերից ինչ հեղեղներ են թափվում։

Գնացքը վշշալով ոձի պես, արագ սողում եր կատաղած գետի ափով։

— Սռաջ նայիր,— կանչեց մեքենավարը,— այն ի՞նչ պիտի լինի։

— Յերկու յերեխա։ Ժամանակ են գտել գծերի վրա խաղալու։

— Սուլիր, վոր հեռանան,— պատասխանեց ոգնականը։ Մեքինան սուլեց։ Արձագանքը խուլ կրկնվեց ձորերի պտույտների մեջ։

Ճամփին կանգնած էին տղաները։ Պարզ եր, վոր սպասում էին գնացքին։ Մեկը թաշկինակն եր թափ տալիս ավելի և ավելի ուժով։

Անհանգիստ սուլոցները կրկնվում էին։ Տղաներից մեկը փախավ, իսկ մյուսը կանգնած եր ուղիղ յերկու գծերի մեջտեղն ու շարունակում եր թաշկինակը թափ տալ։

Մեքենավարն ու ոգնականն ամեն կերպ աշխատում էին գնացքը կանգնեցնել։

Միմիայն մի հարյուր, հարյուր քսան քայլ եր բաժանում յերեխային գնացքից։

«Արդյոք յերեխան պիտի փրկվի՞» — մտածում եր մեքենավարը։

Միայն մի քսան քայլ եր բաժանում տղային մահից, միայն տասը քայլ...

Գնացքը կանգ առավ տղայից յերկու-յերեք քայլ հեռու։ Մեքենավարի և ոգնականի կրծքից ուրախության մի բարձր ճիչ դուրս թռավ։

Մեքենավարը զայրացած աղաղակեց։

— Ա՛յ տղա, դենը կորիր։



Տղան խելագարի պես վեր թռավ և ցույց տալով դե-  
պի կամուրջը՝ ասաց.

— Քանզվել ե...

Յեւ իսկույն ուժասպառ ընկավ գետին:

Ուղեւորները դուրս թափվեցին վազոններից և վա-  
զում ելին դեպի մեքենավարը, աղաղակելով.

— Ի՞նչ ե: Ի՞նչ ե պատահել:

— Կամուրջը քանզվել ե: Ահա մեզ ազատողը, — կան-  
չեց մեքենավարը հուզված:

Յեւ բազմությունը խոնկեց Սաքոյի գլխին...

Վերևից անձրևը շարունակ թափվում էր և լեռնային  
հեղեղը դղրդալով վիժում էր ցած, դեպի փրփրած ու  
կատաղած գետը...

#### 64. Յ Ե Ր Ե Խ Ա Ն Ե Ր Ի Ն

Ծեր Սուլեյմանից ձեզ հազար վողջույն,  
Ծաղկում ե կյանքը մեր, յերեխանե՛ր,  
Ձեզ համար յերկրում նոր, այդ ե բացվում,  
Նոր խինդ ե բերում ձեզ, յերեխանե՛ր:

Վանեցեք ձեզնից անպետք ծուլություն,  
Յերգով դիմեցեք դուք որը արթուն.  
Թող յեղնիկի պես արևը խնդուն  
Դիմավորի ձեզ, ջա՛ն յերեխաներ:

Բաց ե գրքի պես կյանքում ամեն ինչ.  
Սովորեցեք դուք վազք, լող ու թռիչք,  
Աստղերի ցուլն ու ծովը հմայիչ  
Միշտ գրավել են ձեզ, յերեխանե՛ր:

Լայն ե յերկիրը մեր ու ընդարձակ,  
Անհուն խինդ ունի, գիրք մեծաքանակ:  
Կուղե՞ք ձեռք բերել՝ պետք ե շարունակ  
Սովորեք անդուլ, ի՛մ յերեխաներ:

Մեր հայրենիքում գարուն ե խնդուն,  
Ձեզ սնուցանող յերկիրը սիրուն  
Թող փթթի, դառնա ուժեղ, զվարթուն,  
Յոլա ավասի պես, յերեխանե՛ր:

#### 65. Հ Ե Ր Ո Ս Ո Ի Հ Ի Ն

Կոմունայի վերջին որն եր:

Վերջին կոմունարները, կարմիր դրոշակները պար-  
զած, կանգնած ելին վերջին բարիկադների վրա:

Այդ ժամանակ վազելով մոտեցավ նրանց մի փոքրիկ  
աղջիկ:

— Յես յեկել եմ ձեզ ոգնելու, — ասաց նա:

— Գնա՛, սա ամենավտանգավոր դիրքն ե, — պատաս-  
խանեցին աղջկան:

— Վո՛չ, յես յեկել եմ ձեզ ոգնելու և պիտի ոգնեմ...

Վերջին բոլոններն ելին:

Լավեց մի վորոտ և ամեն ինչ լռեց:

Կոմունան ընկավ...

Բայց դեռ յերկար տարիներ հիշվում ելին են կարմիր  
բարիկադը և են հերոսուհի աղջիկը, վոր յեկել եր կոմու-  
նարներին ոգնելու...

#### 66. Ի Ս Պ Ա Ն Ա Կ Ա Ն

Յերգ Լեոնի մասին

Ապրիլը ջերմ ու զարգարված,  
Իսկ հունվարը ցուրտ, սառած,  
Ծաղիկների հետ նա յեկավ,  
Ցուրտ գիշերով նա գնաց:

Ապրիլ, դու մի վարդի փունջ ես,  
Մի կարմիր փունջ հոտավետ,  
Իսկ քեզ, հունվար, մենք չենք սիրում.  
Նրան տարար դու քեզ հետ:

Բայց ցուրտը չի սառեցնի  
Հիշատակը մեծ մարդու.  
Նա հավիտյան վառ կմնա  
Յեւ կենդանի մեր սրտում:



Անցել եր ամառը, աշունն եր յեկել: Որերը կարճացել էյին, արևի տաքությունն ու լույսը պակասել եր. անձրևն ու մշուշն անպակաս էյին: Բայց արածելու խոտը դեռ չեր վերջացել. կենդանիներին ամեն որ դաշտ էյին տանում: Առավոտյան վաղ դուրս էյին քշում կովերին ջուկ, ձիերին ու քուռակներին ջուկ, ու յերեկոյան նորից տուն էյին բերում: Նրանց կապում էյին ախոռի առջև, դուռը պինդ-պինդ փակում ու հաստավիզ Բողարին բաց թողնում:

Մեկ որ Կարմիրն ու իր քուռակը հեռ մնացին իրենց ջուկից: Ձիերը տուն գնացին, դաշտը դատարկվեց, արևը սարի հետևն անցավ: Գիշերը վրա հասավ, Կարմիրն ու քուռակը դաշտում մնացին:

Այդ ժամանակ նույն դաշտերում մի քաղցած գայլ եր չրջում: Վաղուց եր վորս չեր ճարել, փորը սովից վեց-վեց եր անում:

Հանկարծ նրա ախանջին քուռակի բարակ խրխինջ հասավ: Կանգ առավ գայլը, սրեց ախանջները, դուռնը տընկեց, ողբ հոտոտեց ու վազեց դեպի այն կողմը, վորտեղ Կարմիրն ու իր քուռակն էյին:

Ձգուռն թյամբ, զողեզող մոտենում եր գայլը: Մի քայլ ել, և նրա առամները քուռակի գավակին պիտի հասնեյին:

Հանկարծ Կարմիրն զգաց վտանգը, խլչացրեց ախանջները, հոտոտեց ողբ և գիլ խրխինջ արձակեց:

Քուռակը լսեց նրա ձայնը, հասկացավ, վոր վտանգ է սպառնում իրեն, մոտ վազեց: Մայրն ել դուռնը քուռակին, իսկ հետևը գայլին արեց ու սմբակները պատրաստ պահեց. գայլը հարձակվեց թե չե՝ այնպես պիտի զարկեր, վոր աչքերը մթնեյին:

Գայլը հասկացավ Կարմրի միտքը. փորձեց մյուս կողմից մոտենալ քուռակին: Կարմիրը գավակն այն կողմը դարձրեց: Գայլը յերրորդ կողմից մոտեցավ, բայց ելի անհաջող:

Գայլի բերանի ջուրը գնում եր, համբերությունը հատնում:

Բիչ ել վոր անցավ՝ ուղղակի հարձակման դիմեց:

Կարմիրն ել հենց դրան եր սպասում: Հետևի զույգ վոտներով մի այնպիսի հարված հասցրեց գայլին, վոր գայլը յերեք քայլ հեռու թռավ և ընկավ—դուռնը ջախջախված: Իսկ յերբ վոտքի յելավ, պո՛ւկ, դեպի անտառ: Են գնալն եր, վոր գնաց:

Կարմիրն ու իր քուռակը մինչև լույս դաշտում մնացին:

Առավոտյան տերը գտավ նրանց և ուրախ-ուրախ տաքավ տուն:

## 68. ԱԳՈՒԱՎՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Բախտի բերմամբ,  
Թե պատահմամբ,  
Մի մեծ ագռավ  
Մի դուռը պանիր  
Դաշտում գտավ,  
Կտուցն առավ,  
Ծառին թռավ:  
Ո՛ր, ինչ պանիր, դեղին վոսկի...  
Բայց դեռ չառած համը իսկի,  
Աղվեսն անցավ ծառի մոտով,  
Գերվեց,  
Երվեց  
Պանրի հոտով:  
Վազեց, գնաց բերնի ջուրը  
յլ թուլացան կուռն ու ճուռը:  
Են ժամանակ իրա ձևին,  
Ծառի տակից, աչքն ագռավին,  
Հեզիկ նազիկ,  
Փափկամազիկ,  
Բացեց լեզուն անուշ, մեղուշ,  
Թափեց, չափեց շաքար ու նուշ.  
«Ինչքան լավն ես,  
Յես քո գերին,  
Քո եղ սևիկ  
Վառ աչքերին,



Նուրբ ծալքերով  
 Զույգ թևերին:  
 Մի դու մտիկ,—  
 Եղպես զթիկ,  
 Եղպես ճտիկ.  
 Մախմուր ազին,  
 Խառ ու դուժաշ  
 Ատլասն հագին:  
 Գիտեմ անշուշտ, իմ քուրիկի  
 Զայնն ել կլինի հենց սոխակի:  
 Յերգիր, քուրիկ, մի՛ ամաչի,  
 Իմ ուղածը մի մեծ բան չի»:  
 Ազոավ ազին իրեն տված  
 Գովեստներից չճած, ուռած,  
 Ազոավային  
 Բկովը մին  
 Վոր չկոռա՛ց՝  
 Պանիրն ընկավ ծառիցը ցած,  
 Շողոքորթը ոխեց, գնաց:

#### 69. ՍՈՒՏԼԻԿ ՎՈՐՍԿԱՆԸ

Հորս կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք մի որ  
 հինգ ու վեց հոգով, թրով-թվանքով վորսի գնացինք:  
 Հաղին եր, Հյուղին եր, Զատին եր, Մատին եր, հերս եր,  
 յես եյի, գնացինք վորսի...

Սարեր, ձորեր դուզ գնացինք, վորտեղ վորս կար՝  
 սուս ու փուս գնացինք, վորտեղ ահ եր՝ կուզ ու կուզ  
 գնացինք...

Գնացինք, գնացինք, չատ թե քիչ, մին ել տեսնենք  
 յերեք լիճ, յերկուսը ցամաք, մնի մեջ ել իսկի ջուր  
 չկա: Մին ել, ըհը՛, մտիկ տանք, վոր այս անջուր լճում  
 լողում են, ճչում յերեք հատ սպիտակ բադ, յերկուսը  
 սատկած են, մինն ել կենդանի չի:

— Հաղի, տո՛ւր, հա տո՛ւր,  
 Թե՛ թվանք չունեմ:

— Հյուղի, տո՛ւր հա, տո՛ւր,  
 — Յես ել չունեմ:  
 — Զատի... Մատի...

— Մենք ել չունենք:

— Բա ի՞նչ անենք...

Հորս ձեռին կարճ ու յերկար, հաստ ու բարակ մի  
 փետ կար. յերեսն առավ, նշան դրեց, մին ել՝ տրա՛ք,  
 փոր կրակեց... Նա կրակեց, յես զարկեցի, վոր զարկեցի՝  
 փովեց եսպես-ամեն թևը հինգ դադ ու կես...

— Հաղի, դանակ...

— Դանակ չունեմ:

— Հյուղի դանակ:

— Յես ել չունեմ:

— Զատի, Մատի...

— Մենք ել չունենք:

— Բա ի՞նչ անենք...

Հերս ել ունի, բերան չունի:

Ես անբերան դանակը քաշեցինք: Հաղին մորթեց,  
 չկարաց, Հյուղին մորթեց, չկարաց, Զաղին չկարաց,  
 Մատին չկարաց, հերս ել չկարաց: Յես քաշեցի, մորթե-  
 ցի:

Մորթեցի, վեր գցեցի: Բադ մի ասիլ, մի դոմե,  
 ասա:

Հաղին չալակեց, չկարաց, Հյուղին չալակեց, չկա-  
 րաց, Զատին չկարաց, Մատին չկարաց, հերս ել չկարաց,  
 յես չալակեցի: Շալակեցի, գնացինք:

Գնացինք, գնացինք, հասանք մի տեղ, մին ել տես-  
 նենք յերեք գեղ, յերկուսի տեղն իսկի չի յերեվում.  
 մնումն ել իսկի մարդ չկա: Ես անչեն գյուղում դես ման  
 յեկանք, դեն ման յեկանք, մի տուն դտանք, մեջը յերեք  
 պառավ, յերկուսը մեռած, մնի բերանումն ել չունչ չկա:

— Տղե՛րք, ասինք, յեկեք բադով փլավ անենք:

Ես անշունչ պառավը գնաց դես ման յեկավ, դեն ման  
 յեկավ, կես բրինձ դտավ, յերեք պղինձ, յերկուսը ծակ,  
 մինն ել իսկի տակ չունի:

Զուրը լցրինք ես անտակ պղինձը, մեջն ածինք բառն  
 ու բրինձը, անկրակ յեփեցինք: Յեփեց, յեփեց, միան ու  
 բրինձը գնացին, մնաց ջուրը:

Վորսից յեկած սոված մարդիկ, վրա յեկանք՝ կե-  
 րա՛նք, կերա՛նք, վոչ աչքերս բան տեսավ, վոչ բերան-  
 ներս բան մտավ:



Գայլն անտառից  
 Փախավ դեղը.  
 — Նեղն եմ, նեղը,—  
 Ասավ կատվին,—  
 Ասլան բալա,  
 Բո հոր պատվին  
 Մի ճար արա:  
 Մի տես հլա,  
 Վորսորդ ու շուն,  
 Թագի, թուլա  
 Միտս են կրծում,  
 Ինձ հայածում:  
 Աստված կտրի  
 Նրանց հոտը,  
 Մի մարդ ցույց տուր:  
 Պահվեմ մոտը:  
 — Այ ցեղակից,— գոչեց կատուն,—  
 Գնա մտիր Մարոյենց տուն,  
 Նա չափազանց բարի կին է:  
 — Յես ել գիտեմ, վոր անգին է.  
 Բայց վոր նրա հորթն եմ կերել...  
 — Բիկիդ կանգներ, լավ չես արել:  
 Վոր եղպես է,  
 Այ ամաչկոտ,  
 Հովսեփի մոտ...  
 — Ե՛, ինչ ասեմ, ես ամառը  
 Հանկարծ չուտե՞մ նրա դառը:  
 — Ում ասեմ ել...  
 Հա՛, մեր Զաքին:  
 — Ես գարնանն ել  
 Նրա մաքին...  
 — Ով մնաց ել.  
 Հա, յերեցը:  
 — Ես աշնան ել  
 Նրա եծր...  
 — Այ դու ուտես  
 Չոռի մեծը,

Քանիսն յեղավ,  
 Հինգը... վեցը...  
 Ի՞նչ յերեսով  
 Գյուղը մտար.  
 Տեղ չգտա՞ր:  
 Գյուղն հիմա՞ր է,  
 Վոր թշնամուն պատասպարե:  
 Ով ինչ բրթի,  
 Են կը խրթի:

## 71. Պ Ն Դ Ե Ր Ե Ս Ը

Մի հյուրասեր մարդու մոտ հարուստ, բայց ժլատ մի  
 հյուր է դալիս:

— Այ բարո՛ւ, հազար բարի յեկար,— ասում է տան-  
 տերը և հյուրին բաղմեցնում է սեղանի վերին գյուլիս:

Եղ հյուրը կուշտ ու կուռ ուտում է, խմում և հյու-  
 րասեր տանտիրոջ մաքուր ու փափուկ անկողնում քնում,  
 իսկ տանտերն ու իր կիներ քաշվում են հացատունը և քնում  
 են դետնին:

— Ղոնաղ է, թող դժգոհ չլինի,— ասում են նրանք:

Անցնում է մի քանի օր: Հյուրը չարունակում է ու-  
 տել-խմել ու իր քեֆին ման դալ:

Հյուրասեր տանտերն ու կինն ամեն օր մտածում են,  
 թե ետոր կգնա հյուրը, վաղը կգնա, բայց հյուրը բոլորո-  
 վին գնալու անունն ել չի տալիս:

Մի օր կինն ամուսնուն ասում է.

— Եղ ել քո հյուրը. չի ել մտածում, թե ես մարդիկ  
 մեղք են, իրենց անկողինն իրենց տամ:

Ամուսինը պատասխանում է.

— Բան չկա, այ կնիկ, եզուց-մյուս օր կգնա:

Հյուրն ամեն յերեկո անկողին մտնելիս կրկնում է.

— Ձեղ նման հյուրասեր կյանքումս չեմ տեսել: Շեն  
 մնա ձեր ոջախը:

Համեստ տանտերը մտքում ասում է. «Իսկ մենք քեզ  
 նման հյուր չենք տեսել», բայց չի համարձակվում նրան  
 հիշեցնել գնալու մասին:



Մի քանի շաբաթ ել ե անցնում, բայց հյուրը քանի գնում՝ իր տեղն ավելի յե պնդացնում:

Մի ուր ել, յերբ տանտիրոջ համբերությունը հատնում ե, նախաճաշի ժամանակ ասում ե պնդերեսին.

— Ա՛յ մարդ, եսքան ժամանակ եստեղ ես, բա իսկի չես ասում, թե ի՞նչ հալի յեն կինս, յերեխեքս, տունս, տեղս: Հիմի խեղճ կինդ ինչքան մտածելիս կլինի քո մասին...

— Հա՛, հա՛, — պատասխանում ե հյուրը, — յես ել եմ մտածել դրա մասին ու... նամակ եմ գրել, վոր նրանք ել գան...

## 72. ԳՅՈՒՂԱՅԻՆ ՈՒ ԱՐՋՐ

### 1

Գյուղացին իր բոստանում  
Գարնանը սերմ եր ցանում:  
Արջը յեկավ. — Բարև քեզ,  
Ի՞նչ ես անում քեզ ու քեզ:  
Արի, ա՛յ մարդ, միանանք,  
Մեկ տեղ անենք վար ու ցանք.  
Վար ու ցանքը մեր կիսրար,  
Հունձն ել անենք հավասար:  
— Աչքիս վրա, արջ ապեր,  
Ոտար հո չենք, կուղես, քեր  
Հենց առաջին անգամը  
Ցանենք մոտիս շաղգամը:  
Ինձ արմատը հողումը,  
Քեզ տերևն ու ցողունը:

### 2

Քաղցր ու խոշոր շաղգամը  
Հողում տոգեց աչնանը:  
Մեր ապերն ու գյուղացին  
Շաղգամն հողից հանեցին:

Ապերն առավ տերևը,  
Արմատներն ել ընկերը:  
Արջը տեսավ, վոր խաբվեց,  
Մարդու դեմը քիչ լարվեց:  
«Վա՛յ, ինձ խաբե գյուղացին...  
Կա՛ց, են մյուս ցանոցին,  
Ինչ վոր ցանենք հողումը,  
Նրան կտանք ցողունը»:

### 3

Մյուս տարի ցանոցին  
Արջին ասաց գյուղացին.  
— Ապե՛ր, արի մենք ելի  
Մի բան ցանենք կիսովի:  
Արջը թե. — Հա, շատ բարի  
Միայն անշուշտ ես տարի  
Ինձ արմատը հողումը,  
Քեզ տերևն ու ցողունը:  
— Համաճայն եմ յես նորեն,  
Հիմի ցանենք մենք ցորեն:  
Մարդը դիտեր իր բանը.  
Ապորը հետ՝ իր տանը  
Ցորենն ածեց սոսկրակը,  
Տվեց նրա շալակը:  
Ու ցանեցին են արտը  
Բրդոտ ապերն ու մարդը:

### 4

Ընկերները հունիսին  
Սրտն հնձեցին միասին:  
Հասկերն ընկան գյուղացուն,  
Արմատն ընկավ սարեցուն:  
Արջն ել չհամբերեց,  
Եղտեղ մի լավ փրփրեց:  
Արդեն սաստիկ նեղացավ,  
Թքեց, մարդուց հեռացավ:  
Ու են որից մինչ հիմի  
Դարձավ մարդուն թշնամի:





### 73. ՄԱԶԱՅ ՊԱՊՆ ՈՒ ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐԸ

Մեր արձակ յերկրում  
Հարթ ու տափարակ,  
Հորդ անձրևներ են  
Լինում շարունակ:

Գարունքին մի որ,  
Յերբ ջուրը վարար  
Իր տակն եր առել  
Դաշտեր ու անտառ,

Նստեցի նավակ,  
Ասի՛ մի գնամ,  
Վառելիք բերեմ  
Զմեռվա համար:

Տեսա ջրի մեջ  
Մի փոքրիկ ցամաք,  
Վորտեղ նստած են  
Զորս-հինգ նապաստակ:

Ասի. «Մի՛ վախեք,  
Գալիս եմ ահա,

Հորդացած ջուրը  
Ձեզ նեղել է, հա՞»:

Իսկ նրանք անշարժ,  
Ականջները ցից,  
Կպել են դետնին  
Ու նայում են ինձ:

Մեկին բռնեցի,  
Դրի նավակում,  
Մյուսները, դու տես,  
Թե վոնց են ցատկում:

Հենց վոր վերջինը  
Թռավ ու նստեց,  
Զուրբ բարձրացավ,  
Ցամաքը պատեց:

Մին ել ի՛նչ... Հեռվից  
Առաջ է գալիս  
Մի կտոր գերան՝  
Զորս չլդիկ վրան:

Գերանը թռկով  
Նավիս կապեցի,  
Ուռած ու փքված  
Առաջ սահեցի:

Յերբ վոր մոտեցանք  
Բանջարանոցին,  
Իմ չլդիկները  
Կարծես գժվեցին:

Նավակը ափին  
Դեմ առավ թե չե,  
Մի մտիկ արա՛  
Փախչել, ի՛նչ փախչել:

Յես ել ժպտալով  
Նավակի միջից



Ասացի ուժգին  
Նրանց հետևից.

«Իմ շիւ-չղերկներ,  
Դուք բարով գնաք,  
Բայց ձմռան որին  
Աչքիս չերևաք:

Թե չե, հո գիտեք,  
Իմ հրացանը  
Վորս ե վորոնում  
Դաշտում ձմռանը»...


#### 74. ԹՈՒՉՈՒՆԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ

Յես ապրում եյի մի փոքրիկ տան մեջ  
Առատ ու անփուլթ,  
Աշխարհքն ինձ համար կըլոր եր անվերջ,  
Կեղևը կապույտ:

Նրանից հետո աչքըս բաց արի  
Մի փոքրիկ բընում,  
Տեսա՝ աշխարհքը հարդից ե շինած,  
Ու մայրս ե շինում:

Մի որ ել բնից գլուխս հանած՝  
Նայում եմ դես-դեն,  
Տեսնեմ՝ աշխարհքը տերևից շինած՝  
Մեր բունը վրեն:

Հիմի թռչում եմ հեռո՞ւ, շատ հեռո՞ւ,  
Ամեն տեղ գնում,  
Բայց թե աշխարհքը ինչի՞ց ե շինած,  
Ել չեմ հասկանում:



ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ  
(Շֆանշանակիր գրող)

#### 75. ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԸ

Նիգյարն ու Ֆաթման մտան սրահը և տեղ գրավեցին  
նստարաններից մեկի վրա:

Նստարանները յերկշար եյին. մի շարքը բռնել եյին  
կանայք և աղջիկները, մյուսը՝ յերիտասարդներն ու մի  
յերկու հասակավոր տղամարդիկ:

Ամենքն ուրախ եյին ու հանդիսավոր: Նստարանների  
դիմաց սեղանների հետև, նստած եյին աղբրեջանցի կոմ-  
յերիտականներ, վորոնց մեջ նաև մի կոմյերիտուհի:

— Ընկերներ՝, բոլորն ել յեկել են, սկսենք, — ասաց  
մի յերիտասարդ, նախաձեռնակից ներս մտնելով և մոտե-  
նալով նախադահլան սեղանին:

Ձեկուցող կոմյերիտուհին բացատրեց կոմյերիտմիու-  
թյան նպատակներն ու ընդունման կարգը: Նա հնչուն  
ձայնով և փաղաքշական շեշտով համոզում եր դեն գցել  
չաղբան, սովորել, մտնելով կոմյերիտմիության շարքերը



լուրջ պատրաստվել՝ թեկնածու թյունից անդամության անցնելու համար:

Նախագահը կարգաց թեկնածուների ցուցակը, վորք մեջ կար նաև Նիգյարի անունը: Սա կարմրեց և գլուխը կախեց: Աննկատելի կերպով նա արդեն բացել էր դեմքը:

Նիգյարը հետ նայեց բնագլխաբար:

Ջարմանք, թե սարսափ... նստարանների հետևում նկատեց Ասադին, իր ամուսնուն, վոր դեղնած, պղնձադեմ, արձանի պես անշարժ՝ դիտում էր սրահը:

Նիգյարը դեմքը շրջեց դեպի նախագահական սեղանը, բայց ել վռչինչ չէր տեսնում: Գողի զգացումով նա սեղմեց Ֆաթմայի ձեռքը և աչքով արեց: Ֆաթման հետ նայեց և նկատելով Ասադին՝ փափսաց:

— Վռչինչ, մի բան կանենք, մի՛ շփոթվի:

— Լավ չեղավ, — չչնչաց Նիգյարը:

— Հենց մի անգամ թող ամեն բան իմանա, վերջանա, դնա, — ասաց Ֆաթման վճռական ձայնով:

Նախագահը կարգաց Նիգյարի անունը: Ֆաթման հրեց նրա կողքը, վոր վեր կենա: Նիգյարը կարկամեց, ավելի կծկվեց ու մնաց իր տեղում:

— Հը, ի՞նչ յեղավ, — հարցրեց նախագահը, — ամաչո՞ւմ ե: — Բոլորը ծիծաղեցին: Մափահարեցին:

— Ընկեր Բայրամկզի, վեր կացեք, մի՛ քաշվեք, — ձայն տվին դեսից-դենից:

Նիգյարը լաց էր լինում:

— Ե՛, չեղավ, եղպես կոմսոմոլ չի լինի: Լավ մտածեցեք ձեր անելիքի վրա, — հանդիմանեց նախագահը, ներողամիտ ժպտաց ու սպասեց հետեւյալին:

— Դե վե՛ր կաց, ամոթ ե: Մի՛ վախի, վեր կաց, — ասաց Ֆաթման:

Նիգյարն աչքերը սրբեց և վեր կացավ: Ֆաթման ձեռքը դրեց նրա չադրային, վոր բանա, բայց նախագահն արգելեց:

— Վո՛չ, մի դուռեք, ինքը թող բանա՝ թե ուզում ե:

Նիգյարը դեն գցեց չադրան և յերեսը բացեց:

Մափահարությունների տարափը սաստկացավ կարկետի պես և խոսքերեց Նիգյարին:

## 76. Լ ՈՒ Ս Ա Բ Ա Ց Ի Ն

Նորից յեկա այցելության  
Գործարանի պարիսպներին,  
Յերկաթակուռ այն շենքերին,  
Վոր շունչ տվին իմ յերգերին:

Ահա մտա նրա շեմքով,  
Ինձ վողջունեց արթուն սուլիչ,  
Մեքենաներն ուրախացած՝  
Արձակեցին յերկաթե ճիչ:

Իրար անցան ճախարակներ,  
Ժիր փոկերն ու պտուտակներ,  
Շողեմուրճը հպարտ թնդաց  
Ու վորոտաց. «Դեռ չեմ հոգնել»:

Նրան խմբով ձայնակեցին  
Չարածձի հազար մուրճեր,  
Ծլվլալով զրնգացին,  
Ինչպես ուրախ դեղձանիկներ:


## 77. ԿԱՐՄԻՐ ՄԱՅԻՍ

Դու գալիս ես  
Վարդը կրծքիդ,  
Դրոշ ձեռքիդ,  
Անուշ դարնան  
Ցող ու շաղով,  
Յերգ ու տաղով:

Դու բերում ես  
Կարմիր արև,  
Կանաչ տերև,  
Պայծառ ու զով  
Նախշուն որեր,  
Չաղ ու թիթեռ:



Մեր սիրելի  
Ամիսն ես գու  
Վառ, կենսատու...  
Ձկա՛, չկա՛  
Քեզ պես ամիս՝  
Կարմիր մայիս...



ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

## 78. ՏՈՐՔ ԱՆԳԵՂ

(Հատված)

1

Մեկ անգամ գյուղում Տորքին զայրացրին.  
«Անգեղ, գեչ Անգեղ» յետքից գոչեցին:  
Ել չհամբերեց. պոկեց մի մեծ ծառ,  
Ավլեց նրանով ամբողջ գյուղն իսպառ:  
Ասում եմ՝ ավլեց, չկարծեք սրբեց,  
Այլ տուն, գոմ մարագ գետնին համասարեց:  
Փախան մարդիկը ճանճերի նման,  
Ել ո՞վ կկանգներ Տորքին հանդիման:  
Այսպես, յերբ նրա բնությունն իմացան,

Ել այնուհետև սրտին չդիպան,  
Այլ մեծ հարգանքով պատվասիրեցին,  
Պարերգ չինելով, գովաբանեցին:  
Տղերք, աղջկերք ձեռք-ձեռքի տված  
Յե՛վ պարում եյին, և՛ գովում Տորքին:  
Ել այնուհետև նրա դեմքն ահեղ  
Առաջվա նման չեր թվում տղեղ:  
Անգուց չեր Տորքը և վոչ ել անգետ.  
Հավ վորմնադիր եր և ճարտարասլետ:  
Ահագին վեմեր նա բերավ տաշեց,  
Իր քանդած գյուղը նորմեկանց չինեց:  
Յե՛վ այնուհետև իր ուժն ահագին  
Նա գործ եր դնում միշտ դեպի բարին:  
Նրանից առաջ շատ քաղաք ու գյուղ  
Թալանում եյին գողերն աներկյուղ,  
Բայց յերբ լույս ընկավ Անգեղ Տորք հսկան,  
Ավազակները ծաղուծուկ մտան:  
Նա չեր գործ ածում վո՛չ թուր և վո՛չ նետ.  
Միայն մի տեսքով անում եր անհետ:  
Բայց յերբ թշնամին յերես եր առնում,  
Նա այն ժամանակ ուժին եր դիմում.  
Վերցնում եր քարեր, քարեր ահագին  
Յե՛վ կարկուտի պես թափում գլխներին:

2

Սե՛վ ծովի կողմից ոտար թշնամիք  
Թալանում եյին և գերում մարդիկ,  
Միշտ գալիս եյին անթիվ նավերով,  
Այն ել աչկարա, որը ցերեկով:  
Կողոպտում եյին անհամար գյուղեր  
Յե՛վ գերի տանում սիրուն աղջիկներ:  
Մեկ անգամ յեկան, խնդրեցին Տորքին,  
Վոր գնա ոգնի խեղճ ժողովրդին:  
Գնաց մեր հսկան, բայց նավերն արդեն  
Հեռացել եյին Սև ծովի ափեն:  
Չայրացավ Տորքը, գոռաց, մոռաց,  
Իբրև մի առյուծ նետահար յեղած.  
Բլրաչափ ժայռեր սարերից պոկեց,



Փախչող նավերի յետքից շարտեց:  
 Դղրդաց ծովը, բարձրացան ալիք,  
 Նավերը դարձան շարժուն խաղալիք:  
 Ահա դարձյալ ժայռ, դարձյալ դղրդոց,  
 Շրջվում են նավերն իբրեւ ուրուրոց,  
 Ելի մեկ բլուր՝ մեծ քան առաջին,  
 Ընկնում ե ուղիղ նավերի գլխին:  
 Գնում են կրկին ժայռերը գունդ-գունդ,  
 Զարկվում նավերին և տանում անդունդ:  
 Վողջ կորան այսպես ավազակները,  
 Դեպի անհատակ ծովի խորքերը:  
 Նրանցից միայն մեկն ազատվելով  
 Գլուխը պատռած իր յերկիրն հասավ  
 Յեվ այնտեղ այնպես հրաշքներ պատմեց,  
 Վոր լսողներին սարսափեցրեց:  
 Ահա այս անգուց թարթարոսության  
 Վերջ տվավ իսպառ մեր զորեղ հսկան:

# 79. Հ Ա Ն Ր Ա Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ո Ւ Մ

Յերեկոյան թեյից հետո բանվորները խումբ-խումբ  
 վերադառնում էին հանրակացարան: Ելեկտրական ուժեղ  
 լամպերը աչք ծակող լուսով պսպղում էին, հրապուրե-  
 լով բնակիչներին:

Յեկողների մեծ մասը նստում եր մեծ սեղանի մոտ,  
 հանում լրագիր կամ գիրք, կարդում: Վոմանք պառկում  
 էին թախտերի վրա, վոմանք ել այս ու այն կողմը  
 խմբվում ու զրուցում: Վորմնադիր բանվոր Մեսրոպը յե-  
 րեսնիվար պառկել եր թախտին ու կարդում եր մի բրո-  
 շյուր: Նա լիկկայանի աշակերտ եր ու կարդում եր դժվա-  
 րությամբ, դանդաղ:

— Սո-ցիալ-լիս-տական ուղ-ուղ-ուղ... արա, ես ի՞նչ  
 ե գրած, մի տես, ուղ ա, ուղեղով ա,— դիմում ե նա իր  
 մոտ նստած Պողոսին, վորը լրագիր եր կարդում:

Պողոսը յերեւը դարձնում ե Մեսրոպի կողմն ու նա-  
 յում գրքին, նրա ցույց տված տեղը:

— Սա ուղեղով ա՞, բա աչքեր չունե՞ս... ուղիներ-  
 քով...

— Ի՞նչ ե նշանակում ուղիներով:

— Նշանակում ե ճամփաներով:

— Բա ի՞նչի չեն եղպես գրում:

— Գնա գրողին հարցրու,— պատասխանում ե Պողոսն  
 ու ընկղմվում իր լրագրի ընթերցանության մեջ:

Քարտաշ Բարսեղը ծամում ե հետը բերած հացի կտո-  
 րը, չթողնելով վոչ մի փշրանք, ապա հանում ե իր հին  
 ձեւի փայլուն տուփը, կոշտ մատներով փաթաթում ե  
 հաստ պապիրոսն ու ազահությամբ ծխում, կարծես ան-  
 հետ կորցնելով ծուխն իր թոքերի մեջ:

Մոտենում ե բրիգադավար Վոսկանը.

— Բարսե՛ղ, բա յե՞րբ ենք մենք ել պարզերես դուրս  
 գալիս:

— Ի՞նչ ա, պակա՞ս են թվերը:

— Չե՛, ավելանում են, համա լավ չեն ավելանում: Բա  
 յե՞րբ ես հարվածային դառնում:

— Դե քարտաշը միշտ ել հարվածային ա. միշտ  
 մուրճով հարված ե տալիս...

— Դե՛, հանաքը թող, որինակ տուր...

— Աչքիս վրա: Դու վոր գրելով ես հաշվում, յես ել  
 աչքով եմ հաշվում, մի շաբաթից հետո մեր անունը վեր  
 կլինի: Իմացա՞ր:

— Լա՛վ: Ուրեմն խոսք ես տալի՞ս:

— Ի՞նչ խոսք, դու գործին մտիկ արա...

Վոսկանը ժպտալով գլուխը շարժում ե ու գնում  
 մյուսների մոտ:

Բարսեղը ծխելը վերջացնում ե, փչելով մաքրում ե  
 ծխամորճը, դնում ե ծոցի գրպանը: Հետո, աչքերը կկո-  
 ցելով նայում ե ելեկտրական լամպին, կարծես ճգնելով  
 ինչ վոր մտաբերել: Նա մտաբերում ե որվա դեպքերը.  
 այսօր նրա մոտ յեկավ իր նախկին գործատեր Կոստանո-  
 վը, վորը պատերազմից առաջ իր կապալառուն եր և վեր-  
 ջին անգամ կտրել եր իր աշխատավարձի կեսը:

Հիմի յեկել, խնդրում եր, վոր Բարսեղը վկայի, թե  
 ինքն առաջ վոչ թե կապալառու յե յեղել, այլ արտելի  
 վարել, իբր թե ինքն ել հետներն աշխատելիս ե յեղել:

— Դե, ասում ե, միասին աղ ու հաց ենք կերել, ինձ



ողնիւր... Հա՛, Հա՛, գելին նորից կենդանացնե՛մ, վոր դա  
մեզ նորից ուտի: Ձե՛, պարոն աղա Գրիգոր, դու մի գնա, մի  
քիչ ել ման յեկ ես աշխարհում, ու մտածիր քո են ժամա-  
նակվա արարքների մասին, հետո կխոսենք: Մի քիչ դժ-  
վար մարտելու յե քեզ Համար, թե՛ չե՛ վոր մի անգամ եր  
յեկար, եդ քու թղթի վրա կգրեմ. «խնդրեմ ծանոթա-  
նաք, սա առաջ գել եր, հմի ել գել ե: Մինչեւ ատամները  
չթափվեն, մոտ չթողնեք գործերին»:

## 80. ԿԿՈՒՆ ՈՒ ԱՔԼՈՐԸ

— Չընաշխարհիկ  
Իմ աքլորիկ,  
Ձայնդ զիւղիւ,  
Վոսկի ծիւծիւ,  
Յերգերիդ մեջ  
Բյուր յելեւջ:  
— Կըկու քուրիկ,  
Հուրիկ, բուրիկ,  
Քո ձայնն ել ե  
Լամ գեղեցիկ,  
Ծոր ե տալիս  
Ու մըղմըղում:  
Յերգ եմ լսել  
Յես շատ ու քիչ,  
Բայց չեմ տեսել  
Քեզ պես յերգիչ:  
— Վոսկեփետուր,  
Անուշ իմ քուր,  
Կուգեմ՝ լսեմ  
Ձայնդ անսպառ  
Միշտ անդադար:  
Պուճպուճուրիկ,  
Մի պուտ ջրեկ,  
Կըկու քուրիկ,  
Յերգվում եմ յես,  
Վոր լռում ես  
Այսչափ պուճուր,

Սպասելով  
Իմ աչքերը  
Կտրում են ջուր:  
Վո՞րտեղից ե  
Քեզ եղպես ձայն,  
Մաքուր, քնքուշ  
Ու գընդգընդան:  
Դուք եղպես եք  
Ամբողջ ցեղով.  
Մի բուռ բան եք  
Թեև տեղով,  
Բայց ձեր յերգը  
Խիստ աջողակ,  
Չունի՛, չունի՛  
Վո՛չ մի սոխակ:  
— Գոհ եմ քեզնից,  
Կարիճ աքլոր:  
Խղճով ասենք,  
Դու միալար  
Լամ ես յերգում  
Դրախտահավից,  
Թռչունների  
Լամի լամից:  
Վողջ աշխարհը  
Խոսքիս վկա.  
Քեզ պես յերգիչ  
Չկա՛, չկա՛:  
Եստեղ ծիտը,  
Ծիտիկ-միտիկ,  
Ասով. «Հլա  
Սրանց մտիկ,  
Ինչ լամ գիտեն  
Իրար յեղել.  
Ասա՛, թողի՞ն  
Պակաս տեղ ել:  
Ե՛, լամ, հերիք  
Իրար գովեք.  
Աշխարհ գիտի,  
Թե դուք ով եք:



Զմեռվա խստաշունչ մի ուր եր: Յուրաքանչյուր կտրում եք թրի նման:

Կուրբանն այս յեղանակին նստել եր Շեյթան բազարի ծայրին, նամակներ գրող իր համագյուղացի մուլլա Ֆարգ-Ալու մոտ: Յրաից ձեռքերն ու դեմքը կապտած, մի ձեռքով բռնել եր իր հին և պատառոտված վերարկուի բաց ոձիքը, մյուսով փորձում եր ձյունից մաքրել իր մաշված կոշիկները:

— Մուլլա, ինձ համար մի նամակ գրիր: Տես, թե մի տարվա մեջ փորձան ոգուտ եմ տալիս քեզ, դեռ մի տարի չկա իմ ծննդավայրից գալս, և ահա այս հինգերորդ նամակն ե, վոր գրում ես ինձ համար:

Ֆարգ-Ալի մուլլան հորանջելով հանեց մի թղթի կտոր և դրեց ծնկին:

— Հայրենակից, ի՞նչ պիտի գրվի:

Կուրբանը մի փոքր ել մոտենալով մուլլային, դադարեց մի բան ասելու ձևով՝ սկսեց փսփսալ:

— Մուլլա, նախ և առաջ յերեխաների մորը իմ կողմից բարև գրիր: Գրիր, վոր իմ փոխարեն համբուրի Անա հանրմիս ու Մամիչիս աչքերը, նրանց լավ ուշադրություն դարձնի: Հետո գրիր, վոր յես ել վողջ եմ ու առողջ: Արդեն ձեզ տասնհինգ մանեթ եմ ուղարկել, բայրամը մոտենալիս նորից կուղարկեմ: Յերեխաները թող խեղճություն չքաշեն, յես ել գարնան վերջին ամսին գալու յեմ:

Մուլլա Ֆարգ-Ալին գրիչը թաթախեց թանաքամանի մեջ և ուզում եր գրել, բայց թանաքը պնդացել եր. մուլլան լեզվի ծայրով մի քիչ թուր կաթեցրեց թանաքամանի մեջ և քիչ խառնելուց հետո՝ սկսեց գրել:

Կուրբանը կուրծքը բաց, ցրտից կծկվել, կծիկ եր դարձել:

— Մուլլա՛ հորեղբայր, — ասաց նա, — յես աշխատում եմ են յաման մարդու հորերում: Այժմ արդեն նավթահորը 30 սաժենից ներքև ե իջել: Վորքան աղաչում ենք՝ այ ադա, մեր աշխատավարձը մի փոքր ավելացրու, վորովհետև ներքևում աշխատելը շատ ե դժվար, մազութի և

գազի հոտից մարդու շունչը կտրվում ե, անգութ անիրավը չի համաձայնում: — «Պիտի փորեք առաջվա պայմաններով, յեթե վոչ՝ ձեր իրավունքը չեմ տա» — ասում ե նա: Մուլլա, եստեղ շատ դժվար ե փող աշխատելը, քո արհեստը շատ հեշտ ե. որական հինգ-տաս նամակ, չորս-հինգ աղութք գրես՝ բավական ե: Ել ի՞նչ ես ուզում...

Ֆարգ-Ալի մուլլան գրիչը դրեց գրչամանը, պատի ձեղքից յերկու մատներով մի քիչ հող պոկելով նամակի վրա ցանեց ու ձեռքի նամակը շարժելով, պատասխանեց Կուրբանին:

— Հայրենակից, ծեծ ուտելը հեռվից հեշտ ե յերեվում: Իմ արհեստը քո կարծածի չափ ել հեշտ չե, ձմեռամառ փողոցի անկյունում սպասելուց մարդու աչքերին մթություն ե իջնում: Այնպիսի ուր ե լինում, վոր մի հատ ել հաճախորդ չի գալիս, քաղցած փողոց տրորելով՝ մնում ես տեղումդ:

Մուլլան իր արայի մեջ պինդ փաթաթվելուց հետո նամակը կարդաց Կուրբանին: Կուրբանը բերանը բաց կարծես ուզում եր կուլ տալ մուլլի բերանից դուրս յեկած ամեն մի խոսքը:

Նամակը մինչև վերջը լսեց, ապա դեմքից ու աչքերից ուրախության կայծեր ցոլացնելով, ասաց.

— Մուլլա, Հուսեյինին ել բարև գրիր, ասա, վոր մինչև իմ գալը յերեխաներին ուշադրություն դարձնի և պատասխանի մեջ գրի, թե մեր կարմիր կովը մնում ե արդյոք: Մեկ ել գրի, վոր գալուս Անա հանրմիս և Մամիչիս համար կարմիր վարդերով թաշկինակ եմ բերելու...

Մուլլա Ֆարգ-Ալին գրելուց վերջացնելուց հետո, նամակը ծալեց, ծրարի մեջ դրեց, և դառնալով դեպի Կուրբանը, հարցրեց.

— Հայրենակից, ծրարի վրա ո՞ւմ անունը պիտի լինի: Կուրբանը, ձեռքով ծոծրակը քորելով, պատասխանեց.

— Հա, մուլլա, գրիր, վոր պետք ե հասնի Կուրբանի յերեխաների մորը:

Մուլլան, ծրարի վրա ել գրելով, նամակը մեկնեց Կուրբանին: Կուրբանը նամակը վերցրեց և ուրախությունը դեմքին մի լավ դիտեց և ուզում եր ծոցը դնի: Նամա-



կը ձեռնից ընկալ գետին: Շտապ վերցրեց, մաքրեց և կրկին ծոցը դրեց: Ասլա բաց արեց քսակը և յերկու շահի մոլլի ափը դնելով, ասաց.

— Ա՛ռ, հայրենակից, բայրամին ելի նամակ եմ գրել տալու: Ինձանից քեզ շատ ոգուտ ե հասնելու,— ասաց նա ու հեռացավ մոլլի մոտից:

2

— Հէ՛յ, աղա՛, մենք ելի են պոչն ենք, իսկի առաջ չենք զնում,— ասում ե վերդին.— դիտե՞ս, վոր այժմ նավթահորի ամենադժվար մասումն ենք: Հորը աժդահայի պես բերանը բացել ե՛զոհ ե ուզում:

Իբ ընկեր Սաֆարը, կտրելով նրա խոսքը, ձեռքը մեկնում ե գետի հեռուն, գետի նավթահորերը, և ասում ե.

— Նայիր, այս բոլոր մասերում, վորտեղ վոր վորտեղ զնես, ամեն մի ափ հողին յեթե մի ուրիշ բրիչ զարկես՝ բանվորի վոսկորներ են դուրս գալու, բանվորի վողբ՝ ես լսելու: Այն բարձր տների տաքուկ սենյակներում, հազար ու մի նպանքի ու ճոխության մեջ ապրող...

Հաջի Կուլին, հանքատերը, կտրելով Սաֆարի խոսքը, վրաքը գետին ե խփում և գոռգոռում.

— Ձեր հողին դուրս գա, փող աշխատելը հեշտ բա՛ն իմացաք. դուք ձեր անձն եք տալիս, մենք ել՝ մեր հատիկ-հատիկ վոսկիները:

— Սաֆա՛ր, Սաֆա՛ր, Կուլրբանը պարանը շարժում ե...

Այս աղաղակի վրա Սաֆարը և վերդին վաղեցին հորի բերանի մոտ և յերբ գլուխները գետի ցած ծռելով լսեցին ներքևում պայթած գազի աղմուկը՝ սարսափով հետ քաշվեցին:

Յեվ յերկուսը միասին ահաբեկված ձայնով գոռացին:

— Կուլրբանն ել այսպես զնաց... Հէ՛յ վախ, ափսոս...

Կես ժամ չանցած՝ յերբ Սաֆարն ու վերդին զննում եյին Կուլրբանի հորի մոտ թողած զգեստները, տեսան՝ մի նամակ գետին ընկալ: Նամակի ծրարի վրա գրված եր. «Այս նամակը պետք ե հասնի Կուլրբանի յերեխաներին»...

Սաֆարն ու վերդին մի քանի րոպե սառած և դառնադին հայացքներով նամակը դիտեցին և մորմոքալով ասացին.

— Խեղճ Կուլրբան, նամակը չհասավ...

Այսպես եր Բազվի բանվորների կյանքը Խորհրդային Իշխանությունից առաջ, յերբ յերկրի տերերը շահագործողներն եյին:

82. ՍԱՐ ԴՆԱԼԸ

1

Ահա գարնան հետ և շարան-շարան Դաշտավայրերից գետի գոլ սարեր Զգվեց սայլերի, ուղտերի քարվան: Փախչում են շողից թե՛ թուրք, թե՛ հայեր:

Թնդում են ձորում դանդի հնչյուններ, Զիերի իրխինջ, պայտերի դոփյուն, Մեկ-մեկի կցած անվերջ քարվաններ, Գաչում ե նաուր, ահեղ մռնչում:

Լեռների տոնն ե: Մարդ և անասուն Ուրախ յերգերով դիմում են սարեր, Մոռնալով ձմռան քաշած վայնասուն, Ծաղիկ փնջելով անցնում են ձորեր:

Անցնում են արագ քոչ-քոչի միջով, Դարնան արևից փայլում են գեներ, Յեվ թարմ, կենսաբույր թավիչ կանաչով Բացվում են, ժպտում սարվորի դեմքեր:

Մայում են, բայում գառնուկն ու մաքին, Թնդում կովերի, հորթերի բառաչ, Իսկ տըրտնալով գոմեջը ձագին Կանչում ե դանդաղ վաղելով առաջ:



Քարվանի ծայրը սարերը հասավ,  
Հասավ ու ձուլվեց թուխ ամպերի հետ,  
Վրան-վրանի հետևից բուսավ  
Ծաղիկների մեջ գույն-գույն, սիզավետ:

Յեւ հով սարերի սիզավետ լանջին  
Բազմել են հայի, թուրքի բինաներ,  
Բայց դարձյալ խառնված քոչ-քոչի միջին,  
Դեռ յերևում են ուղտի քարվաններ:

Որինջում է ձին, կովը բառաչում,  
Բոլորն ել իրանց յուրան են ճանաչում:  
Բայում է անուշ ամլիկը գառան,  
Սարեր ու ձորեր նորից կյանք առան:

## 3

Գիշերը հասավ, մթին է ճամփան,  
Մարում է կամաց աղմուկը քոչի,  
Առվալի ափին քարվաններն իջան,  
Կանչում են. «Տղերք, ապրանք չկորչի»:

Ձիերի ջուկեր, ուղտերի քարվան,  
Մայրերի ճռուց, վոչխար ու տավար,  
Գտնելով ձորում գիշերն իջևան,  
Հանգիստ են առնում մյուս որվան համար:

Կրակի վրա, առվալի ափին  
Մի տեղ ընթրիք են շտապ պատրաստում,  
Մի տեղ ել կորած գառանն ու հորթին.  
Սար ու ձորն ընկած հովիվն է կանչում:

Մի այլ տեղ ուրախ չըջան բոլորած  
Ուտում են նրանք կաթ ու խորոված:  
Գիշերն ել արդեն մնում է, լուռ,  
Հոգնած քոչվորին հանգիստ քուն բերում...

## 1

Գարնանային լեռնային անձրևների ժամանակաշրջաններ:

Ճանապարհների հեղեղատներում լճակներ եյին փայլում, հողն անձրևից կշտացել էր:

Ուղեկալի շենքից դուրս յեկան յերկու կարմիր բանակային: Նրանց հետ էր փոկով կապված ջահել Տայգեր շունը, վորին պահել ու դաստիարակել էյին կարմիր բանակայինները:

Բելովը և Կրեպովն ուղղվեցին դեպի Ժայռի սև քանդվածքը, վորի ստորոտից սկսվում էյին ցածրիկ, փշոտ թփեր:

Տեղ հասնելով, նրանք դիտեցին չորս կողմը և պառկեցին, յերեսները տարբեր կողմեր դարձնելով:

Կամրջի վրայով, ընթացքը դանդաղեցնելով, անցավ ճեպընթաց գնացքը:

Կրեպովը նկատեց, վոր վոլորտում վերջին վազոնից մի սև գունդ ընկավ:

Կրեպովն այդ մասին հաղորդեց Բելովին:

— Հետևիր նրան, — շուրկով ասաց Բելովը:

— Շատ լավ:

Մարտիկները պառկած էյին լուռ, ուշադիր, կենտրոնացած: Հանկարծ պառկած Տայգերն ականջները սրեց ու առաջ սողաց:

Բելովը յերկու անգամ քաշեց առաջ գնալ ցանկացող Տայգերին, սակայն ջահել ու անփորձ Տայգերը ուժով առաջ նետվեց, բարակ փոկը կտրեց և վոռնալով հարձակվեց թփերի հետևից բաժ կերպարանքի վրա:

Համարյա թե պայքար չեղավ: Մատուցերի հարվածից Տայգերը գետին ընկավ: Թողնելով վիրավորված Տայգերին, մարտիկները վորոշեցին հետապնդել հակառակորդին և կրակել միայն անհրաժեշտ դեպքում:

## 2

Պարզվեց, վոր Կրեպովի նկատած սև գունդը մի յերկարահասակ, լայնաթիկունք տղամարդ է: Վազոնից թռչելը նրան միայն թեթև քերծվածքներ էր պատճառել:



Մարդը, վոտի կանգնեց և սկսեց ճանապարհի հսկիչի դեր խաղալ:

Յերբ վերջին վագոնի կարմիր լույսերն անհայտացան վոլորտի հետևում, մարդը կոճկեց իր մորթե բաճկոնի բոլոր կոճակները, գենքը վերցրեց և արագ քայլեց արահետով:

Հասնելով հանդիպման համար նշանակված տեղը, նա չպատահեց իր յերեք ընկերներին:

Նա դեռ ու դեռ նայեց, մոտեցավ մի լայն թփի ու մաուզերը պատրաստ պահած, պառկեց ընդամենը տաս քայլի վրա այն տեղից, վորտեղ մի ժամ առաջ, նայելով հեռացող գնացքին, պառկած էր կրեպովը:

Յերեկվա թույլ անձրևը գիշերը սաստկացավ և գալիս էր անդադար: Այդպիսի գիշերները մարտիկներն անվանում են տազնապալից: Թեև յեղանակը տրամադրում էր քնել, բայց այդպիսի գիշերներին ուղեկալներում քնելը հազվագեպ է:

Ձեր քնել նաև Սերգեյ Մնեզովը: Նա և Գոլաձեն այսօր հերթապահ են:

Մնեզովը լսեց, վոր ինչ-վոր մեկը լուսամուտի ապակին ճանկոտում է:

Ներս մտավ ուղեկալի հերթապահը, նրա ձայնը խլացած էր ու հուզումնալից:

— Ընկեր պետ, ժամանակը լրացավ: Գաղտնաջողատը չվերադարձավ: Վերադարձել է միայն Տայգերը կապը կտրված և գլուխը ճեղքված:

Տազնապալի ազդանշանից մարտիկները վոտի կանգնեցին: Մնեզովն ու Գոլաձեն քայլելով լցնում էին հրացանները և սլանում դեպի ձորը, վորտեղ գաղտնաջողատն էր: Առջևից, կարծես ճանապարհը ցույց տալով, վազում էր Տայգերը:

Ձորակից մի քանի քայլի վրա Տայգերը կանգ առավ ու մի կողմ թռավ: Մնեզովը պառկեց գետնին և հաստատուն ձայնով հրամայեց.

— Ձեռքերդ վեր:

Պատասխանի փախարեն լսվեց չորս կրակոց դեպի Մնեզովի կողմը:

Մնեզովը կրակոցին կրակոցով պատասխանեց:

Նվի յերկու անգամ իրար հետևից կրակելով, մորթե

բաճկոն հագած մարդը վոտի կանգնեց և կռացած՝ դեպի ձորակը վազեց: Բայց Գոլաձեն և Տայգերը դեմ առ դեմ հանդիպեցին նրան: Տայգերն ատամները խրեց հակառակորդի աջ ձեռքի թաթը, իսկ Գոլաձեն ճարպիկ կերպով հարվածեց նրա ծնկանը և փռեց գետին:

Կրակոցի ձայնի վրա վազեց ուղեկալի պետը մի խումբ մարտիկների հետ: Սակայն ոգնություն հարկավոր չեր. Գոլաձեն, մաուզերը դեմ արած, տանում էր հանցագործին: Ուղեկալի մոտ ելելով մոտեցավ պետին ղեկուցելու՝ յերեք գինված լրտեսներին բռնելու մասին:

Մորթե բաճկոն հագած մարդը ճանաչեց կեղտոտված, շորերը պատառոտված իր յերեք համախոհներին:

#### 84. ՅԵՐԿՈՒ ԸՆԿԵՐ

Յերկու ընկերներ իրիկնապահին  
Հրացան առած անտառ գնացին,

Վոր մեկ բան վորսան,

Շուտով հետ դառան:

Հանկարծ անտառից մի արջ դուրս պրծավ

Ու կատաղությամբ նրանց վրա վազեց:

Մեկը շտապով ծառը բարձրացավ,

Մյուսը անձար գետնի վրա պառկեց,

Շունչն իրեն քաշեց

Ու անշարժ մնաց,

Վոր արջը կարծե,

Թե նա մեռած է:

Արջը մոռալով մոտեցավ նրան,

Ականջը կամաց դրավ բերնի վրան,

Ականջը դրեց,

Հոտ քաշեց,

Վերջապես նրան մեռած կարծելով,

Հեռացավ գնաց դունչը լիզելով:

Փախած ընկերը ծառիցն իջավ ցած,

Ընկերոջն հարցրեց, թե արջն ի՞նչ ասաց:

— Արջն ինձ պատվիրեց, վոր յես մյուս անգամ

Քեզ պես մարդու հետ վորսի չդնամ,

Վոր մեզ մի վտանգ, բան պատահելիս՝

Ի՞նչակ չթողնես ու ինքդ փախչես:





Ա. Ր. Ա. Չ. Ի

(Շփանշանակիր գրող)

85 Մ Ի Շ Ի Կ Ը

1

Հանգստի ուր եր:

Յերեսաները հալաքվել էյին կոլտնտեսության բա-  
կում ու չըջապատել մի մեծ արջի: Իսկ արջը՝ Միշիկը,  
զվարճացնում եր նրանց իր խաղերով: Քեռի Վարդանը՝  
կոլտնտեսության պահակը, չիբուխը բերնին ժպտալով  
նայում եր Միշիկին:

— Միշիկ, ապա ներկայացրու պահակին, — ասաց  
քեռի Վարդանը, տալով նրան իր փայտը:

Արջը կանգնեց յերկու վոտների վրա, ապա թաթերով  
բռնելով փայտը, հրացանի նման դրեց ուսին ու սկսեց  
քայլել բակում: Յերեսաները ծիծաղով, չվոցով հետե-  
վում էյին Միշիկին:

Հետո Միշիկը ներկայացրեց ծերունուն՝ ձեռնափայ-  
տով քայլելիս, ապա հեծավ փայտի վրա, իբր թե ձիու  
վրա յեր նստել:

Այդպես նա շատ խաղաց ու վերջը հոգնելով՝ յեկա՛լ  
նստեց քեռի Վարդանի մոտ:

Յես ուղեցի շոյել արջին, բայց նա խեթ-խեթ նայեց  
ինձ ու բարկացած մամուաց:

— Ես Միշիկը շատ զարմանալի գազան ե, — ասաց  
քեռի Վարդանը, — նա մեր բոլոր կոլտնտեսականների սի-  
րելին ե: Յես նրան բերել եմ անտառից փոքր ժամանակ,  
հիմա տեսնում ես՝ շատ ե մեծացել: Սա մեր լավ պահակ-  
ներից մեկն ե...

— Ինչպե՞ս, — զարմացա յես:

— Ա՛յ, պատմեմ մի դեպք, — և դու ինքդ ել կասե՛ս,  
թե ինչ մեծ գործ ե կատարել մեր Միշիկը:

2

Մի գիշեր յես պահակ էյի մեր կոլտնտեսության կա-  
լում՝ ցորենի դեզերի մոտ: Հետո տարել էյի և մեր Միշի-  
կին:

Արդեն գիշերվա մեծ մասն անցել եր, մեկ ել տեսնեմ՝  
յեկավ մեր կոլտնտեսական Գրիգորը:

— Եստեղ, մոտիկ, մեր սայլի աղը կոտրվել ե, — ասաց  
նա, — մի արի ոգնիր:

— Ինչպե՞ս, դեզերի հսկելը թողնեմ, գա՞մ:

— Դե վոր ուրիշ մարդ չկա, ի՞նչ անեմ, մի կես ժա-  
մով արի:

Ճարս կտրած գնացի, թողնելով Միշիկին:

Մոտ մի ժամ չարչարվելով կարգի բերինք ամեն ինչ  
ու յես վերադարձա մեր կալը:

Մոտենալով մեր դեզերին, տեսնեմ՝ ստվերի նման մի  
մարդ ե չարժվում և՛ ինչ-վոր խուլ ձայն ե գալիս:

Յես սկսեցի կասկածել. չլինի՞ թե թչնամի յե յեկել...  
Մեր գյուղերում կուլակներն ամեն կերպ աշխատում էյին  
վնասել կոլտնտեսությանը՝ վառում էյին դեզերը, դողա-  
նում կովերը, յեզները:

— Ո՞վ ես, — հարցրի յես բարձր ձայնով:

— Յես եմ, Պետրոսը, — ասաց խեղճացած ձայնով մի  
մարդ, — չուտ արա՛, ազատիր ինձ:

Յես մոտ գնացի և ի՛նչ տեսնեմ. ես մեր Միշիկը պինդ  
բռնել ե մեր գյուղացի Պետրոսին ու բաց չի թողնում:

Պետրոսը կուլակի տղա յեր, մեր կոլտնտեսության  
կատաղի թչնամին:

97

Հայոց լեզու. ԽՈՒՍ. և ԱՊՐԵՑ. դպ. — 7



— Եստեղ ի՞նչ ես չինում, — բղավեցի յես:

— Ճամփովը գնում եյի, — ասաց Պետրոսը, — մեկ ել տեսնեմ ես արջը վրա ընկավ ու բռնեց:

— Սուտ ես ասում, — դու ուրիշ նպատակով ես յեկել: Յես քեզ բաց չեմ թողնի, մինչև քննություն չկատարվի: Հետո մոռեցա Միշիկին, գլուխը շոյեցի, հեռացրի նրա թաթերն ու ազատեցի Պետրոսին:

— Դե՛, եստեղ նստիր ու տեղիցդ չջարժվես, — հրամայեցի յես Պետրոսին:

Յես ու Միշիկը հսկում եյինք միասին, վորպեսզի չփախչի:

Շուտով յեկավ Գրիգորը: Յես պատմեցի նրան պատահած դեպքի մասին: Նա գնաց իմաց անելու մեր նախադահին և միլիցիայետին:

## 3

Արդեն լուսացել էր, յերբ յեկավ միլիցիայետը, մեր կոլտնտեսության նախադահի հետ: Նրանք դիտեցին դեղի չորս կողմը և մի տուփ լուցկի նկատեցին:

— Ես լուցկու տուփը դո՞ւ յես ձգել, — հարցրեց միլիցիայետը Պետրոսին:

Պետրոսը լուռ էր:

— Դու յեկել եյիր դեղերը վառելո՞ւ, — նորից հարցրեց նա:

Պետրոսը խոստովանվեց, վոր յեկել էր դեղերը վառելու:

Միլիցիայետը Պետրոսին տարավ քննիչի մոտ՝ նրան դատի տալու և պատժելու համար:

Շուտով յեկան, հավաքվեցին մեր կոլտնտեսական ընկերները և խմանալով Միշիկի արածը՝ մնացին դարձա-ցած: Ենպէ՛ս եյին գովում նրան...

Միշիկը դարձավ մեր ամենքի սիրելին:

— Ճի՞շտ եմ ասում, Միշիկ—հարցրեց քեռի Վարդա-նը, շոյելով նրա գլուխը:

Միշիկը ուրախ կլանչեց, կարծես ասում էր.

— Ճի՛շտ ե, ճի՛շտ ե...

Վարի՛, գո՛ւթան ջան, վարի՛,  
Շատ ե դժվար ես տարի:  
Պապին տարան քյոխվի դուռ,  
Հարկ են ուղում.—Տո՛ւր, հա տո՛ւր...

— Կտամ, քյոխվա, փող չունեմ...

— Չունե՞ս, Շեկո՛ն կտանեմ:

— Ամա՛ն, քյոխվա, քեզ դուրբան,  
Շեկոն գնա թող՝ դու՛թան,

Գարնան անենք վարուցանք,  
Կալը կալսենք, բերենք, տանք:

Գարունը յես դառավ ել,

Գու՛թան լծվեց—հորովե՛լ...

Վարի՛, գո՛ւթան ջան, վարի՛,

Դատենք ցորեն ու դարի,

Տանենք, ածենք քյոխվի փեշ,

Վոր չտանի մեր գոմեշ:

## 87. ԿՈՌԻՆԿՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

## 1

Կոռնիկն ու աղվեսն ընկերացան: Կոռնիկը բուն չինեց, ձու ածեց, թուխս նստեց, ձագ հանեց: Աղվեսն ել ձագեր ունեցավ, մայր դարձավ:

Մի որ կոռնիկը գնաց ձագերի համար կերակուր բերելու: Տնպահ աղվեսը բռնեց կոռնիկի ձագերից մեկին, վիզը վոլորեց, անուշ արեց:

Տուն յեկավ կոռնիկը և ի՛նչ տեսնի. աղվեսը լալիս ե, իրեն քրքրում ու ասում.

— Կոռնիկ քույրիկ, եսպես ել դժբախտությո՛ւն...

— Ի՞նչ դժբախտություն, ի՞նչ ե պատահել, աղվես քույրիկ:

— Բա չես ասի, մեր բալիկը չկա ու չկա՛: Ենքա՛ն ման յեկա, ենքա՛ն ման յեկա, չկա ու չկա...



— Վո՞ր բալիկը:  
— Մեր բալիկը:  
— Մեր վո՞ր բալիկը:  
— Նա՛, նա՛,

Աչքս կուրանա.  
Փափկամազիկ,  
Յերկար վզիկ,  
Յերկար տոտիկ,  
Յերկար վոտիկ,  
Բոյը բանձրիկ,  
Ձենը քաղցրիկ...

Գովում եր աղվեսը, իրեն քրքրում, արցունք թափում:

— Աղվես քույրիկ, — ասում է կռունկը, —  
Դու ձագի տեր ես,  
Դու սիրող մեր ես,  
Արցունք մի՛ թափի,  
Արցունք մի՛ չափի:  
Դա ել չար բախտից,  
Դա ել մեր բախտից:

— Հա՛, հա՛, — հեկեկում եր աղվեսը: — Հա՛, կռունկ քույրիկ, լացը չի ողնի, անցածն անցած է:

2

Յերկրորդ որը կռունկն ելի գնում է կերակուր բերելու: Տնպահ աղվեսն ելի բռնում է կռունկի մյուս ձագին, վիզը վոլորում ու անուշ անում:

Յերրորդ որն ել ուտում է վերջին ձագին:

Կռունկն ես անգամ հասկանում է, վոր ձագերին ուտողը քույրիկ աղվեսն է, բայց իրեն չհասկացողի տեղ է դնում:

— Աղվես քույրիկ, — մի որ ել ասում է կռունկը, — ես ե իմ ձագերը կորան, տանողի աչքը դուրս գա, քո ձագերն ել մեծացան, իրենց-իրենց կապրեն: Արի՛ գնանք քիչ ման գանք, սրտներս բացվի:

— Ե՛, ո՞ւր գնանք, կռունկ քույրիկ:

— Ա՛յ, հենց կուղես յերկինք թռչենք, տեսնենք վերեմն ինչ կա:

— Ի՞նչ ես ասում, քույրիկ, — ծիծաղեց աղվեսը, — ինչպե՞ս կարող եմ քեզ հետ թռչել. յես թե չունեմ:

— Ե՛, ի՞նչ անենք, վոր չունես, յես հո ունե՞մ: Նըստիր ինձ վրա, միասին թռչենք:

Աղվեսն ինքն իրեն մտածում է. «Ես ինչ լավ յեղամ: Կհնամ յերկինք, պատահած թռչունը կխեղդեմ, վեր կածեմ գետին, հետ գալիս ել քույրիկիս կբռնեմ, կուտեմ... Սրանից ել լավ բա՞ն»:

Աղվեսը նստում է կռունկի վրա:

Կռունկը թափահարում է թևերը, վեր բարձրանում: Գնում է, գնում, հասնում է յերկինք ու հանկարծ շուռ է գալիս:

Մին ել աղվեսը մեջքի վրայից դըր՛խկ... Ընկնում է գետին ու ջարդվում:

— Աղվես քույրիկ, — ցած գալով ասում է կռունկը, — այդ ել քո՛ բախտից, այդ ել քո՛ բախտից...

88. ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Ժամանակով կատուն ճոն եր,  
Շունն ել գլխին գդակ չուներ,  
Միայն գիտեմ վո՞չ՝ վորդիանց վորդի  
Հանկել եր մի գառան մորթի:  
Յեկավ մի որ ձմռնամտին  
Կատվի կուշտը տարավ մորթին:

— Բարաջողում ուտա՛ Փիսո,  
Գլուխս մրսեց, ի սեր ասածո,  
Սա ես մորթին ու ինձ համար  
Մի գդակ կարի գլխիս հարմար:  
Վարձդ կտամ, միամիտ մնա,  
Համա, համա շատ չուշանա:

— Աչքիս վրա, քեռի Գուշի,  
Մի գդակ է, հո մի քուրք չի,  
Քու թանգագին խաթեր համար  
Ուրբաթ որը համեցեք տար:



Փողի մասին ավելորդ է,  
Մեր մեջ խոսելն ել ամոթ է.  
Ի՞նչ մեծ բան է, տո հեր որհնած,  
Միա՛յն, միա՛յն մի գդակի վարձ:

Ղերբաթ որը քեռի Գուչին՝  
Ուտից առաջ բաց-բաց կուճին  
Թափ-թափ տալով՝ ծանր ու մեծ,  
Ուտա կատվի շեմքում կանգնեց:  
— Ուտեն ո՞ւր ա... Փափախա ո՞ւր ա...  
— Մի քիչ կա՛ցի, հրես կերևա:

Ուտեն յեկավ քուրքը հագին,  
Շանը տեսավ, բեղի տակին  
Իրեն-իրեն քիչ փնթփնթաց,  
Ու մուշտարու վրա թնդաց.  
— Յուրաը տարա՞վ... վա՛հ, տնաչեն,  
Չես թողնում, վոր մի շունչ քաշեմ.  
Հեշտ բան հո չի՞, հլա նոր եմ  
Յրցամ տվել, թե վոր կարեմ:

— Դե՛ հեր որհնած, եղպես առա,  
Եդ բարկանալդ ել ինչի՞ն ա:  
Փող եմ տվել, շուտով կարի,  
Թե չե՛ առա եղուց արի:  
Համ ասում ես, համ չես կարում,  
Համ խոսում ես, վրես գոռում,  
Հա՛մ, հա՛մ, հա՛մ, հա՛մ,  
Բանի՞, ախպեր, զնամ ու գամ...  
Ասավ Գուչին ու նեղացած  
Վերադարձավ գլուխը բաց:

Մին ել յեկավ, դարձյալ չկար.  
Ես անգամը դիպան իրար.  
Ել անպատիվ, անկարգ խոսքեր,  
Ել հին ու նոր, ել հերն ու մեր,  
Ել գող Փխո՞, ել քաջալ Շուն...  
Բանը հասավ դիմանբաշուն:  
Շունը մինչև զնաց, յեկավ,

Ուտա կատուն կտարն ընկավ,  
Գլուխն առավ ու մի գիշեր  
Հայդե կորավ, են կորչիլն եր...

Են որվանից մինչև որս ել  
Շունն ես բանը չի մոռացել,  
Մտքում հլա դեռ պահում է,  
Վորտեղ կատվին պատահում է,  
Վեր է թռչում, վրա վազում,  
Իրեն մորթին հետ է ուզում.  
Իսկ սեւերես կատուն հանկարծ  
Հետ է դառնում ու բարկացած  
Փշտացնում է. մթամ նոր եմ  
Յրցամ տվել, թե վոր կարեմ:

## 89. ՎՈՐՍՈՐԴ ՅԵՄԵԼՅԱՆ

1

Հեռո՛ւ, հեռո՛ւ, Ուրալյան լեռների հյուսիսային մա-  
սում, անանցանելի անտառի խորքում, թաղնված է Տիչ-  
կի գյուղը:

Այն խրճիթում, վորը գտնվում էր անտառի մոտ,  
ապրում էր ծերունի վորսորդ Յեմելյան իր փոքրիկ թո-  
ռան՝ Գրիչայի հետ:

— Պապի՛, այ պապի՛, — դժվարությամբ հարցրեց  
փոքրիկ Գրիչան մի յերեկո: — Այժմ պախրաներն իրենց  
հորթերի հետ են ման գալիս, հա՞:

— Հորթերի հետ, Գրիչկա, — պատասխանեց Յեմել-  
յան, չարունակելով հյուսել իր նոր տրեխները:

— Ա՛յ, պապի, մի հորթ ճարենք, հա՞...

— Սպասիր, կճարենք... Յեղանակը տաք է, պախրա-  
ներն իրենց հորթերի հետ, բուրբից պաշտպանվելու հա-  
մար, պետք է թաղնվեն անտառի խորքում: Հենց այդտե-  
ղից ել յես քեզ համար հորթուկ կճարեմ, Գրիչկա:

Յերեխան վոչինչ չպատասխանեց, միայն ծանր հա-  
ռաչեց:



Գրիշան միայն վեց տարեկան էր, և այժմ՝ յերկրորդ ամիսն էր, ինչ հիվանդ պառկած էր փայտե լայն նստաբանի վրա, պախրայի տաք մորթու տակ:

Յերեք տարի առաջ Գրիշայի հայրը մեռավ ջերմախտից, մորը կերան գայլերը, յերբ նա փոքրիկ Գրիշայի հետ ձմռան գիշերին գյուղից իր խճիթն էր վերադառնում: Յերեսան ազատվեց հրաշքով, յերբ գայլերը կրծոմ էյին մոր վրտները, նա իր մարմնով ծածկեց յերեսային և Գրիշան կենդանի մնաց:

2

Հոգիս ամսի վերջին որերն էյին՝ ամենաշուգ ժամանակը Տիչկիում:

Մի որ Յեմելյան դուրս յեկավ տնից կայծաքարի հրացանը ձեռքին և ուղղվեց դեպի անտառ:

— Դե', Գրիշուկ, իմ բացակայության ժամանակ առողջացիր, — ասաց Յեմելյան թոռանը, հրաժեշտ տալիս: Մինչև իմ գալը քեզ մտիկ կտա պառավ Մալանյան:

— Իսկ հորթուկ կրերե՞ս, պապի':

— Ասացի, վոր կրերեմ:

— Դեղի՞ն:

— Դեղին:

3

Յերեք որ Յեմելյան շան հետ թափառեց անտառում, բայց իզո՛ւր. պախրա, իր հորթուկի հետ միասին, չպատահեց:

Բայց ահա ծանոթ չրթոց և խշոց... Լիսկոն պառկեց խոտի վրա ու չչարժվեց: Յեմելյայի ականջում հնչում էյին թոռան խոսքերը. «Պապի', մի հորթուկ ճարիր... Յեվ անպատճառ դեղին լինի»:

Ահա մի հիանալի պախրա: Կանգնած էր անտառի յեզրին և վախեցած ուղիղ Յեմելյային էր նայում:

Ագնիվ կենդանին տասն անգամ իր անձը վտանդի յենթարկեց, աչխատելով վորսորդին հեռացնել թաղնված հորթուկից:

Քանի անգամ էր նա սպանել այդ ձևով իրեն զոհող մորը...

Ծերունին չըջվեց ու նստեց: Իրենից տասը սաժեն հեռավորության վրա, ցախկեռասի թփի տակ, կանգնած էր այն դեղին հորթուկը, վորի մասին յերեք որ յերազել էր:

Վորսորդը հրացանն ուղղեց դեպի փոքրիկ, անոգնական կենդանու գլուխը...

Յեվ հենց այդ վայրկյանին ծերունի վորսորդը հիշեց, թե ինչպեսի հերոսությամբ էր պաշտպանում մայրը հորթուկին, ինչպես իր Գրիշուկի մայրն իր կյանքով պաշտպանեց վորդուն գայլերից...

Ծերունի Յեմելյան հրացանն իջեցրեց: Հորթուկն առաջվա նման ման էր դալիս թփի մոտ, տերևներ պոկելով և ամենափոքր խշոցին ականջ դնելով:

Յեմելյան արագ վտառի կանգնեց և չվացրեց: Փոքրիկ կենդանին. կայծակի արագությամբ անհայտացավ թփերի հետևում:

4

— Ա՛... Պապի, բերի՞ր հորթուկը, — հարցրեց Գրիշան:

— Վո՛չ, Գրիշկա... Բայց տեսա...

— Դեղի՞ն էր:

— Ինքը դեղին էր, դնչիկը սև: Թփի մոտ կանգնած, տերևներ էր պոկում... Յես նշան առա...

— Յեվ վրեպեցի՞ր:

— Վո՛չ, Գրիշկա, փոքրիկ կենդանուն խղճացի... Մորը խղճացի... Հենց վոր չվացրի, հորթուկն անտառը փախավ...

Ծերունին յերկար ժամանակ պատմում էր տղային, թե ինչպես յերեք որ անտառում հորթուկ էր վորոնում և թե ինչպես հորթուկը փախավ:

Տղան լսում էր և պապիկի հետ ուրախ ծիծաղում:

— Յես քեզ համար մայրահավ եմ բերել, Գրիշկա, — ավելացրեց ծերունին, պատմությունը վերջացնելուց հետո:

Մայրահավը փետրահան արին, իսկ հետո կճուճը գցեցին: Հիվանդ յերեսան մեծ բավականությամբ կերավ մայրահավի ապուրը և ննջելիս մի քանի անգամ հարցրեց ծերունուն.



— Այդպես էլ փախա՞վ հորթուկը:

— Փախա՞վ, Գրիշուկ:

— Դեղի՞ն էր:

— Ամբողջ մարմինը դեղին էր, միայն դնչիկն ու կճղակները սև էին:

Յերեխան այդպես էլ քնեց և ամբողջ գիշերը տեսնում էր դեղին հորթուկին, վորն իր մայրիկի հետ ուրախ զբոսնում էր անտառում, իսկ ծերունին քնած էր վառարանի վրա և նույնպես ժպտում էր յերազում:

## 90. ԶԱՆ, ԱՅ ԼՈՒՍԻՆ

Լուսինն յելավ են սարից,  
Սարի բարձր կատարից,  
Շեկլիկ-մեկլիկ յերեսով,  
Փովեց գետնին լույսի ծով.  
— Զա՛ն, ա՛յ լուսին,  
Զա՛ն քո լուսին,  
Զա՛ն քո կլոր  
Շեկ յերեսին:

Խավարն իսկույն չքացավ,  
Ու էլ գետնին չկացավ,  
Լուսնի լուսից հալածված՝  
Խոր ձորերի մեջ մնաց.  
— Զա՛ն, ա՛յ լուսին,  
Շեկլիկ լուսին,  
Զա՛ն քո արծաթ  
Կամար ուսին...

Բայց ամպերը մոլեգին  
Նախանձեցին լուսնակին,  
Յելան յերկինք կապուտակ,  
Լուսնին առան իրենց տակ.  
— Զա՛ն, ա՛յ լուսին,  
Խավքած լուսին,  
Զա՛ն, կապասենք  
Մենք քո լուսին:

## 91. ԱՅԾԻ ԹԱՂՈՒՄԸ

(Ռուսական ժողովրդական հեփիաթ)

### 1

Լինում են, չեն լինում, մի ծերունի ու մի պառավ են լինում:

Նրանց ունեցած-չունեցածը միայն մի այծ է լինում:

Մի որ ծերուկը գնում է անտառ, վոր արեխ գործելու համար ծառերից կեղև պոկի, այծն էլ հետը գնում է:

Անտառում ծերուկն սկսում է կեղեվ պոկել, այծն էլ սկսում է արածել:

Մին էլ այծն սկսում է փորել-փորփրել: Դուրս է գալիս մի կճուճ, մեջը լիքը վոսկի:

Ծերուկն այս վոր տեսնում է, շատ է ուրախանում: Կեղևները դեն է դցում, վոսկիները հավաքում ու դալիս տուն:

Այծն էլ նրա հետևից:

Դալիս է տուն, վոսկիները պառավին ցույց է տալիս և յեղելությունը պատմում:

— Ա՛յ մարդ, աստված է մեզ այդ վոսկիները ավել վոր մենք որ ծերության սոված չմնանք,— ուրախանում է պառավը:

— Վո՛չ, պառավ, այծն է գտել այդ վոսկիները: Այսուհետև այծին շատ լավ պետք է պահենք:

Յեվ մարդ ու կնիկ սկսում են լավ ապրել, և այծին լավ կերակրել:

### 2

Մի առ ժամանակ անցնելուց հետո, այծը հիվանդանում է ու սատկում: Ծերուկն ու պառավը շատ են տրիստում:

Ծերուկն ասում է.

— Գիտե՞ս ինչ, պառավ: Ուզում եմ գնամ արտերին խնդրեմ, վոր դա մեր այծին մի լավ առողջ-փառող թաղի, վոր նրա լավությունից դուրս գանք:

Պառավը համաձայնում է:



— Որհնյա տեր,— գլուխ ե տալիս ծերուկը, տերտե-  
րի տունը մտնելով:

— Աստված որհնեսցե, վորդի: Ի՞նչ կա:

— Մեր տանը գոթախտութիւն ե պատահել: Մեռել  
ունենք: Ուզում եմ դաս՝ թաղում կատարես:

— Ո՞վ ե մեռել, կի՞նդ:

— Վո՛չ, կինս չի: Մեր այծն ե մեռել:

— Անաստված, բա այծին ել կթաղե՞ն,— բարկա-  
նում ե տերտերը, ծերուկի միւրուքից բռնում ե սկսում ե  
քաշքշել:

— Դու ինձ վրա մի՛ բարկանա, տեր հայր,— խնդրում  
ե ծերուկը,— այն ուրիշ տեսակ այծ եր, իսկական քրիս-  
տոնյա յեր: Քեզ ել յերկու հարյուր մանեթ ե կտակել:  
Ահա՛:

— Դե յես նրա համար չբարկացա, վոր այծին չի կա-  
րելի թաղել: Նրա համար բարկացա, վոր այդ մասին ուչ  
ես հայտնում: Դե՛, զնա տիրացուն առա, վոր դա, զնանք  
թաղենք,— ասաց տերտերը յերկու հարյուր մանեթը գրք-  
պանը դնելուց հետո:

3

Ծերուկը վեր կացավ զնաց տիրացունի մոտ:

— Բարի որ, տիրացու: Մեռել ունենք, ուզում եմ,  
վոր դաս թաղում կատարես,— ասաց ծերուկը տիրացունին:

— Ո՞վ ե մեռել:

— Մեր այծը, տիրացու:

— Անաստված, անկրոն, մի՞թե այծին թաղում են,—  
բարկացավ տիրացուն ե ծերուկին՝ տո՛ւր, թե կտաս,  
տո՛ւր թե կտաս:

— Դու իզուր ես ինձ ծեծում, տիրացու: Այծն ուրիշ  
տեսակ այծ եր, քրիստոնյա այծ եր: Քեզ ել հարյուր մա-  
նեթ ե կտակել: Ահա՛:

Փողի անունը վոր լսեց, տիրացուն կակղեց.— Հեր  
որհնած, յես նրա համար չեմ ծեծում, վոր այծը թաղել  
չի կարելի: Յես նրա համար եմ բարկանում, վոր ուչ ես  
հայտնում. զնա՛նք:

Տերտերն ու տիրացուն յեկան ծերուկի տունը, այծին  
գրին դադաղի մեջ, հոգեհանգիստ կատարեցին, հետո ել

տարան դերեղմանատուն ե առոգ-փառոգ թաղում կատա-  
րեցին:

4

Լուր հասավ յեպիսկոպոսին, թե տերտերն այծ ե  
թաղել:

Մարդ ուղարկեց ե տերտերին ու ծերուկին իր մոտ  
կանչեց:

— Անիծյալ լինեք, անաստվածնե՛ր, ինչպե՞ս եք հա-  
մարձակվել այծ թաղել,— գոռաց յեպիսկոպոսը:

— Սրբազա՛ն, մի՛ բարկանա: Ախր այդ այծն ուրիշ  
տեսակ այծ եր, իսկական քրիստոնյա յեր: Քեզ ել հա-  
զար մանեթ փող ե կտակել,— ասաց ծերուկը: Ահա՛:

— Ա՛յ որհնյալ, ա՛յ վորդի,— ժպտալով պատասխա-  
նեց յեպիսկոպոսը,— յես նրա համար չեմ բարկանում,  
վոր այծ թաղել չի կարելի: Յես նրա համար եմ բարկա-  
նում, թե ինչու ժամանակին ինձ չեք հայտնել, վոր գայի  
ու թաղմանը մասնակցելի:

Յեպիսկոպոսը հազար մանեթը գրպանը դրեց, տեր-  
տերն ու ծերուկն ել տուն վերադարձան:

92. Գ Ե Լ Ը

1

Ծիրան անունով մի յեզն ունեյինք: Մի ձմեռ եդ յեզը  
կորավ: Ախպերս ինձ դրկեց ման դալու: Յես 16-17 տա-  
րեկան տղա եյի: Գնացի գեղի չորս կողմը ման յեկա,  
ման յեկա, չգտա: Գոմահանդ ունենք, ենքան ել գեղիցը  
հեռու չի: Ասի՛ յեզը սովոր ե, կարելի յե եդ կողմն ե  
գնացել: Գնացի եդ գոմահանդը: Գնացի, ես գոմը նայե-  
ցի, են գոմը նայեցի, վերջը տեսնեմ, վոր յեզը մի գո-  
մում ե: Յեզը դուրս արի: Դուրս դամ, տեսնեմ՝ արդեն  
մուրթն ընկնելու վրա յե: Սիրտս մի ահ ընկավ: Տեսնում  
եմ, վոր լուսով չեմ կարող գեղը հասնել: Մտածում  
եմ.— զնա՞մ-չզնա՞մ:



Ի՞նչ անեմ...

Չորս կողմս ամառի ձյունապատ դաշտ, չեն չկա, ձեն չկա, ձեռիս ել մի ճիպոտ ու մի դանակ:

Ի՞նչ պետք է անեմ: Յեղն առաջս արի, քչեցի: Մի քիչ տեղ անց եյի կացել, հանկարծ իրիկվան դառը քամու հետ մի տխուր ձայն ընկավ ականջոյս: Կանգնեցի, ա- կանջ դրի...

Տեսնեմ գելի վռնոց ե, ո՛ւ, ո՛ւ...

Ես վռնոցին միացավ մի ամբողջ խումբ: Սարսափով լցվեց դաշտը: Մտիկ տամ, վոր աջ կողմս, հեռվում, միթան մեջ վառված ճրագների մի բազմություն է չարժ- վում... Ել ի՞նչ, ձեռաց հասկացա, վոր գելերի աչքերն են՝ սոված բոլուկ ե...

Յեղը յետ տվի գեպի դոմերն ու քչում եմ, վո՞նց եմ քչում: վազում եմ, վո՞նց եմ վազում... Յետ նայեմ, վոր արդեն գալիս են:

Յեղը թողի, փախա, ընկա դոմը: Ընկա դոմը, բարձ- րացա... Մների գերանների միջև դատարկ տեղեր են լի- նում, վոր կոչվում են կոնդ:

Եզ կոնդերից մեկին վեր յելա: Դեռ չեյի տեղավոր- վել, մին ել տեսնեմ յեզանս դոռոցը բարձրացավ: Զար- մանք բան է, թե ենքան տարածությունը մի յերկու բո- պելում վոնց կարեցին ու հասան:

2

Յեզանս դոռոցը բարձրացավ ու իսկույն ել կարեց, խոխոցն ընկավ: Խոխոցն ել կարվեց, միայն գելերի ժրնգժրնգոցն եմ լսում, ու լսում եմ՝ վոնց են լափում...

— Վա՛յ, Ծիրան ջան... դուքս թռավ սրտիցս:

Բայց ի՞նչ Ծիրանի ժամանակն է: Յես իմ գլուխն եմ լաց ըլում:

Մտածում եմ, թե ես լավ եր, յեղնողը կլինեն, մին- չե կլուսանա, կամ կկշտանան ու կգնան, կամ, ասում եմ, ինձ չեն դանի...

Դու մի ասի՛՛ սոված գելի բոլուկ, յես հիսուն ատեմ, դու հարյուր իմացի, ձեռաց հախոել են ու մին ել տես- նեմ մուկ գոմը լցվեցին են վառված ճրագները, ուխները բաց արած...

Գտան...

Յեկել են լցվել, ներքեից ազահ-ազահ ինձ են մտիկ անում:

Յես ել չորացել եմ, մնացել վերեր՝ գերանին կաած: Մտիկ արին, մտիկ, ու թողին դուքս գնացին:

Շունչս յետ յեկավ: Մին ել ինչ եմ լսում:

Իմ ուղղությամբ վերեից կտուրը քանդում են, չանդե- րով հողը հետ են տալիս: Արդեն լսում եմ՝ չանգերը կոն- դերին են կաչում...

Սառը քրտինքը վրա տվեց... Շտապեցի՝ տեղս փո- խեցի, անցկացա մյուս կոնդի վրա, կուչ յեկա:

Բաց արին, կոճը վեր կալան, տեսան տակին չկամ:

Ելի յեկան ներքե: Մտիկ արին, վոր մյուս կոնդի վրա յեմ, ելի դուքս գնացին: Հիմա ես կոնդի վերելից սկսե- ցին քանդել կտուրը:

Դարձյալ տեղս փոխեցի: Եսպիսով՝ նրանք քանդե- լով, յես տեղս փոխելով, հասանք վերջին կոնդին:

Ել ո՛ւր գնամ:

Յեկան մտիկ արին կատաղած ու յետ գնացին:

Քանդում են, վո՞նց են քանդում...

Մի սուր դանակ ունեյի դրպանումս, հանեցի, բաց արի ու ձեռիս բռնեցի:

Իսկ հենց ականջիս վերեր քանդում են: Քանդելով հասան կոճերին: Մինը կոճերի արանքով թաթը մեկնեց, վոր կոճը յետ քաշի, թաթը բռնեցի ու են սուր դանակո- վը, դը՛րթ, կարեցի... Թաթը փախցրեց, վռնալով, կոնդկոնծալով յետ գնաց ու կտրի վրա իջարով անցան:

Իմացել եյի, վոր գելերի մինը յեթե վերավորվեց, մյուս- ները վրա յեն թափվում, նրան ուտում: Ասի՝ ուրեմն սը- րան ուտում են: Հիմի սպասում եմ, վոր սրան ուտեն պրծնեն, յետ կգան: Ելի դանակս ձեռիս պատրաստ սպա- սում եմ:

3

Ականջս ձենի յե: Գիշերվա մի ժամին՝ վոնց վոր յե- րազում՝ մի բարակ ձեն եմ լսում:

— Ավո, հե՛յ...

Ինձ են կանչում...



Միթե՞ ինձ են կանչում... Միթե՞ ախպերս ե...

Միթե՞ մերոնք են... Գոմից ձեն եմ տալիս, դռում,  
եմ:— Աղանիկ, հե՛յ... Եստեղ եմ... Գոմումն եմ, գեղերն  
ինձ ուտում են... Ոգնեցեք, հե՛յ...

Ելի նրանք ձեն են տալիս, իմ ձենը չեն լսում, թեև  
յես չարունակ կանչում եմ:

Մին ել տեսնեմ հրացանները տրաքեցին, յետևից լսե-  
ցի հեռացող գեղերի կաղկանձն ու մարդկանց հարահրո-  
ցը: Պարզ ճանաչեցի ախպորս ու մեր գեղացի տղերանց  
ամեն մեկի ձենը:

— Ավո, հե՛յ...

— Եստեղ եմ... Եստեղ եմ... Կենդանի յեմ... Ներս  
թափվեցին դոմը: Ուրախացած ու զարմացած, կանչում  
են ամենքը: Յած յեկա վերջին կոնդի վրայից: Ախպորս  
գիրկն ընկա ու սկսեցի հեկեկալ:

Դուրս յեկանք դուռը, ուր թափված եյին մեր Ծիրան  
յեզան վոսկորները:

Դեռ լույսը չեր բացվել:

Հեռվից լսվում եր գեղերի վոռնոցը:

### 93. Գ Ի Շ Ե Ր

Գեղեցիկ ու զով  
Գիշեր ե պայծառ,  
Անուշիկ քնով  
Քնած ե աշխարհ:

Ծառերը մեղմիկ  
Քամուց որորվում,  
Հեզիկ ու նազիկ  
Յերգ են սվսվում:

Իսկ լայնատարած  
Յերկնակամարով  
Լուսինն ե կամաց  
Անցնում սահելով:

Աստղերն ել սիրուն  
Ժպտով փայլում,  
Իրենց սիրելուն  
Ճամփա յեն դնում...

Գեղեցիկ ու զով  
Գիշեր ե պայծառ,  
Անուշիկ քնով  
Քնած ե աշխարհ:

### 94. Մ Ո Շ Ա Կ Ի Մ Ա Հ Ը

Ամպից խիեց հուր կայծակ,  
Կաղնուց ընկավ մի մոծակ,  
Մոծակն ընկավ կաղնու մոտ՝  
Թե ու թիկունք արյունոտ:

Ճանձերն յեկան պրզալով,  
Տգտալով, բրզալով,  
Յեղբոր վրա շատ լացին,  
Աղի արցունք մաղեցին:

— Աղի՛ղ ախպեր, քաջ մոծակ,  
Ել չե՛ս թռչի թևարձակ.  
Ա՛խ, խավարի մեր լույսը,  
Կոտրվել ե քո ուսը:

Դու տանջվում ես չարաչար,  
Ափսո՛ս, չունես վոչ մի ճար:  
Մոծակն իրան հավաքեց,  
Նվաղ ձայնով կտակեց:

— Իմ քուրիկներ աննման,  
Փորեք դուք ինձ գերեզման,  
Թաղեք կանաչ պուրակում,  
Վորտեղ դուք եք նվազում:



Ամէն, ամէն իրիկուն,  
Յերբ դուք գնաք դեպի տուն,  
Իմ հորքուրներ, մորքուրներ,  
Զբոսասեր քուրիկներ,  
Անցեք, դարձեք իմ մոտով,  
Ինձ հիշեցեք կարոտով:

Ճանճերը շատ լաց յեղան.  
— Մեռավ,— ասին,— քաջ տղան.  
Վոչ թե չնչին մի ձագ եր,  
Այլ մի կտրիճ մոծակ եր:

95. Կ Ո Ւ Ն Ը

Զմռան մի գիշեր կար մի հարսանիք,  
Հրճվում եր անգուապ ամբոխը գյուղի.  
Գյուղն եյին իջել հովիվ պատանիք  
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:  
Ու պարից հետո լայն հրապարակ  
Բաց արին մեջտեղն արձակ գլխատան:  
Զուռնաչին փչեց կոխի յեղանակ,  
Ահել ու ջահել իրարով անցան:  
Հարա՛ յեն տալի «Քաշի՛ հա, քաշի՛...»  
Ու դուրս քաշեցին գոռով յերկուսին,  
Մինը մեր Սարոն, մյուսն Անուշի  
Անդրանիկ յեղբայր, գառնարած Մոսին:  
Վողջ գյուղը կանգնեց պարսպի նման,  
Զոկվեց, բաժանվեց յերկու բանակի,  
Ամեն մի բանակն ընտրեց փահլեան,  
Կանգնեց թիկունքին տղերանց մեկի:  
Գոռում են, գոչում յերկու բանակից.  
— Սրտապինդ կացե՛ք, մի՛ վախեք, աղե՛րք.  
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից  
Նայում են կանգնած հարսն ու աղջկերք:  
Ու տաքանում են տղերքը սաստիկ,  
Փեշերը հավաք խրում են գոտին,  
Գետին են զարկում ձեռները հաստիկ,  
Իրար են հասնում թափով մոլեգին...

Ու իրար բռնած Սարոն ու Մոսին  
Քաշում են, ընկնում խողապարկուկի,  
Ընկնում են գետին, յեղնում միասին,  
Դժվար ե իբրև հաղթել մեկ մեկի:  
Ու մինչդեռ Մոսին ընկերախաղի,  
Կատակի տալով թողած եր իրեն,  
Ուժ արավ Սարոն, ծնկեց կատաղի,  
Գետնեց ընկերին ու չոքեց վրեն:  
Ամբոխը թափվեց հարա-հրոցով,  
Վեր թոցրեց ջահել փահլեաններին,  
Յեմ՝ ուրախության աղմուկ-դռոցով,  
Հաղթողին փեսի թախտի մոտ բերին:  
Յնծության ձայնից, ծափերի զարկից  
Շարժվում են, դողում պատեր ու ոճորք,  
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից  
Նայում են կանգնած հարսն ու աղջկերք:

96. Գ Ե Տ Ա Կ Ը

— Ո՛ր ես վազում  
Այդպես արագ,  
Ա՛յ դու կայտառ,  
Սիրուն գետակ:  
Կանգ առ, խաղանք  
Այս ծառի տակ:

— Չե՛, փոքրիկս,  
Գնամ պիտի,  
Տես ջրաղացը  
Գյուղի մոտի.  
Պետք ե ուժ տամ,  
Վոր պտտի:

Ցածն ել հովտում  
Անուշահոտ  
Ինձ են մնում  
Ծաղիկ ու խոտ,



Հողնած, ծարավ  
Տավարն ու հոտ:

Դե', տեսնե՞ւմ ես,  
Մնաս բարով,  
Ճամփաս ցանած  
Հազար գործով,  
Դադար չունեմ  
Յես մինչև ծով:

## 97. ՍՐԱՄԻՏ ՏՂԱՆ

Թիֆլիս քաղաքի փողոցով մի մարդ եր գնում դեպի  
քաղաքի շուկան, ձվով բարձած մի եչ առաջը գցած: Նրա  
հետևից ել մի ուրիշ մարդ մի գիծ յեղն եր առաջն արած  
տանում դեպի սպանդանոց: Յեղնատերը բղավում է  
իշատիրոջը.

— Իշիդ կապը բռնիր, մի կողմ քաշվիր, յեղս գիծ է,  
հարու կտա:

Մի քանի անգամ կանչում է այսպես, բայց իշատերը  
չլսելն է դնում, մինչև յեղը հասնում է և յուր յեղջուր-  
ներով զարկում է քթոցներին ու վայր գլորելով՝ կտրա-  
տում ձվանը: Այս ժամանակ իշատերը բռնում է յեղնա-  
տիրոջ ոճիքից և տանում դատարան:

Այս դեպքին ներկա եյին շատ մանուկներ և նայում  
եյին նրանց կովին: Մանուկներից մեկը, մի աշխույժ և  
կայտառ յերեսա, յերբ տեսավ, վոր դրանք դատաստանի  
յեն դիմում, նրանց հետևից կանչեց.

— Յեղնատերը համրանա, յեղնատերը համրանա:

Այս խոսքերն իմացավ յեղնատերը և, յերբ դատավո-  
րի մոտ գնացին, իշատերն իր գանգատն արավ, վնասը  
պահանջեց. դատավորը դարձավ յեղնատիրոջը և հարց-  
րեց, թե ինչ ունի ասելու, նա իրեն համր ձևացրեց և  
ձեռքով հասկացրեց դատավորին, վոր լեզու չունի:

— Այս մարդը համր է, — ասաց դատավորը, — դու  
վկաներ բեր, վոր քո գանգատն ուղիղ է:

— Տեր իմ, — պատասխանեց իշատերը, — սա սուտ է

համր ձևանում, ընդհակառակն, քանի անգամ բղավեց  
հետևից, թե մի կողմ քաշի եշդ, յեղս գիծ է, հարու  
կտա...

— Շատ լավ, ինչո՞ւ ուրեմն չկատարեցիր այս մար-  
դու ասածը, ուրեմն ել ի՞նչ ես ուզում սրանից:

Հետո դատավորը յեղնատիրոջը հարցրեց, թե ինչու  
յե համրանում, քանի վոր խոսել գիտե:

— Տեր իմ, այս իմ խելքի բանը չեմ, — պատասխա-  
նեց յեղնատերը, — ինձ ողնության հասավ մի յերեսա:  
Յերբ վոր այս մարդն ինձ քաշքշելով ձեզ մոտ եր բերում,  
մի շնորհալի մանուկ կանչեց հետևիցս.

«Յեղնատերը համրանա»: Յես ել նրան լսելով, համ-  
րացա և ապա, ինչպես տեսաք, այդ մարդն իր բերանով  
խոստովանվեց, վոր յես քանի անգամ կանչեցի իրան, թե  
եշդ մի կողմ քաշիր, յեղս գիծ է:

— Շատ լավ, դնա՛, — ասաց դատավորը, — դու ար-  
դար ես, միայն այն յերեսային ուղարկիր ինձ մոտ, —  
յես կուզեմ տեսնել նրան:

Այս դեպքից հետո հայտնի յեղավ շատերին, վոր  
իրանց մեջ մի իմաստուն մանուկ կա և ով վոր տեսնում  
եր նրան՝ գլուխ եր վայր բերում, ինչպես մեծ մարդու,  
և հարգում ու պատվում նրան, ինչպես բնությունից մեծ  
շնորհք ստացած մեկին:

## 98. ՎԵՐՋԻՆ ՍԱՏԱՆԱՆ

1

Ապրիլ ամիսն եր, ձյունը հալվել եր, որը յերկարել,  
կանաչը փթթել: Ճիշտ է, սարերի կատարները դեռ սպի-  
տակին եյին տալիս և լեռների լանջերին նոր-նոր եր կա-  
տակին եյին ձորերում, քարերի տակ արդեն բսնել  
նաչը ծլում, բայց ձորերում, վոր տարվա այդ յեղանակին  
եյին ծնեթեկն ու սինդրիկը, վոր տարվա այդ յեղանակին  
աքանչելի կերակուր եյին մարդկանց համար:

Ու մի որ, յերեկոյան դեմ՝ դյուղի հրապարակում  
աղմուկ բարձրացավ: Տղամարդիկ կոլխոզի նախագահի  
հետ դաշտում ցանք եյին անում: Կոոպերատիվ խանութի



առաջ համարվել էյին մի քանի ծերունիներ: Թեվոս բի-  
ձեն կանգնել եր մեջտեղը և գոռգոռում եր.

— Սատանա յեր, ա՛յ ձեզ մատաղ, սատանա, հենց  
ձե՛ն եր հանում, հենց ձե՛ն, վոր սիրտս դող ընկաւ:

— Թեվոս բիձա, պող ե՞լ ուներ, պոչ ե՞լ, — կատա-  
կով հարցնում եր պիոներ Սուրբիկը, վոր յեկել եր կոտպե-  
րատիվից լուցկի գնելու:

— Դե կորեք, լավ, թողեք մի քան հասկանանք, —  
բարկանում եր Մազթաղ տատը:

— Ա՛յ կնանիք, յես ձեզ ասում եմ՝ եսքան ապրել եմ,  
ըտենց ձեն չեմ լսել. ինձ վոր տեսավ, վրա ընկավ, յես  
թռա, ու ինձ քարը տվի, նա մնաց ձորումը:

— Վա՛յ, քոռանամ յես. — ծնկանը խփեց Հոռոմ հո-  
քիրը, — դե ասա ել ձորը գնալ չի լինի, ասա ծներեկը,  
սինդրիկը չորանալ պտի, փչանալ, ելի...

— Աղջի, ի՞նչ եք խոսում, բա մեր Մուշեղն ասում ե,  
բոլչեիկները սատանաներին քչեցին, ել ի՞նչ ա խոսում ես  
սիրտը մեռած Թեվոսն, — ասաց Նարգիզ տատը:

— Ծի՛շտ ե, ճի՛շտ — Նարգիզ տատը ճիշտ ե աս-  
ում. ընկեր Գոհարը՝ մեր ուսուցչուհին պատմել ե, վոր  
բոլորը սուտ ե, վոչ սատանա կա, վոչ ել նման մի  
բան, — արագ-արագ վրա տվեց պիոներուհի Լենան, —  
Թեվոս բիձեն սխալվում ե:

— Ե՛, վախկոտ մարդ ե, ով գիտե, ինչից ե վախե-  
ցել, — ծիծաղեցին յերիտասարդները:

Թեվոս բիձեն վոչ միայն այդ գյուղում, այլ ամբողջ  
չրջանում հայտնի յեր իբրև վախկոտ ու մի քիչ ել սնա-  
հավատ մարդ: Յերը լուրը տարածվեց գյուղում, կոլտրն-  
տեսականները վոչ մի նշանակութուն չտվին այդ խո-  
սակցությանը, միայն պառավներն, էյին, վոր վաշ-վուշ  
արեցին, ու հաջորդ օրը վոչ միայն իրենք չգնացին սինդ-  
րիկի, այլ և աղջիկներին չթողեցին ձորը գնալ:

— Հայ-վա՛յ, ինչ ծներեկ, ինչ սինդրիկ ե փչա-  
նում, — ասում էյին աղջիկները, — ևս խելքը կորցրած  
պառավներն ել չեն թրղնում մեզ ձորը գնալու:

— Ձե՛, եսպես չի լինի, — ասաց կոմյերիտուհի Վաչ-  
սիկը, — յերեկոյան պետք ե խոսել մեր կոմյերիտական  
տղաների հետ և մի բան անել, եսպես չի կարելի թողնել:

Յերեկոյան կոմյերիտականները ժողովի վերջում խո-  
սեցին նաև Թեվոս բիձու տեսած «սատանայի» մասին,  
վորոշվեց, վոր կոմյերիտական Վահանը, Մուշեղը և պիո-  
ներ Վաղոն գնան ձորը, տեսնեն, թե դա ինչ բան ե:

— Պետք ե անպայման զինված գնալ, — ասում եր  
Վաղոն, — ով գիտե՝ ինչ ե, յերեկ մի դադան կլինի:

— Դե՛ իհարկե, զինված, յերեկ արջ կլինի, կամ մի  
բան: Ձե՛ վոր յերբեմն հեռու անտառներից արջ ե մտնում  
մեր ձորը, — ասաց Մուշեղը, վոր լավ վորսորդ եր:

— Սպասեցեք, սպասեցեք, — աղաղակեց Վարսիկը,  
ախար վո՞ր կողմն եք գնալու, դուք ի՞նչ գիտեք, թե եդ  
դադանը վորտեղ ե. ձորը մեծ ե և հեռու, պետք ե Թե-  
վոս բիձուն ել հետներդ տանեք:

— Նա չի՛ դա, — վախից թուրը կաշում ե, — վրա բե-  
րին մի քանիսը:

— Ձե՛, նրա դաշն անհրաժեշտ ե, պետք ե տանենք, —  
վճռեց Մուշեղը: Կանչեցին Թեվոս բիձուն: Նա վոչ մի  
կերպ չեր համաձայնվում:

— Ձենը դեռ ականջումս ե, վոտներս դեռ դողում են,  
յես վո՞նց դամ:

Այդ ժամանակ ներս մտավ Բադրատը՝ կոլխոզի նա-  
խագահը: Իմանալով, թե ինչի մասին ե խոսքը, ասաց.

— Թեվոս բիձա, գնա տղաների հետ, թե վոր դրուստ  
տղերքը մի բան վորսացին, համ եդ «սատանան» քեզ կը-  
տամ, համ յերկու աշխորի չափ նվեր կտամ:

Նվերը գրավեց Թեվոս բիձուն և նա համաձայնեց:

Հաջորդ օրը ճաշից հետո չորս հոգով, հրացաններով,  
պարաններով զինված, գնացին Դարմանաթաղի ձորը,  
վորտեղ պետք ե լիներ Թեվոս բիձու տեսած «սատանան»:

Արդեն մթնում եր, յերբ տեղ հասան: Թեվոս բիձեն  
վերևի քարերի տակ կանգնեց և մատով ցույց տվեց ցածի  
թփուտները, ուր ինքը տեսել եր «սատանային»: Հենց այդ  
բույսերին, մի սոսկալի վոռնոց լավեց ցածից: Դա ավելի  
չուտ նման եր անտեր յերեխայի սոսկալի լացի...



— Կացե՛ք, — ասաց Վահանը, — սա գաղան չի, սա  
յերևի կորած յերեսա յե:

— Չե՛, յերեսա չի, սա ուրիշ բան է, — շնչաց Վա-  
ղոն:

— Տեսա՞ք, վոր սատանա յե, — ասաց գունատված  
Թեվոս բիձեն:

— Տո ի՞նչ սատանա, կաց մի տեսնենք, — բարկացավ  
Մուշեղը:

Հանկարծ նույն ձայնն ավելի բարձր և աղիողորմ  
լավեց մի քիչ մոտիկից:

— Կացե՛ք, ես հո չախկալ ե, — գլխի ընկավ Վա-  
հանը, — յես մեծ անտառում շատ եմ յսել չախկալի ձայ-  
նը, յերևի ներքևի ձորերից է յեկել, եստեղ քարերում  
չէկվել:

Վահանը լավ եր հասկացել: Ծիշտ այդպես եր:

Մուշեղն այդ մասին կասկած չուներ: Բայց վորոշե-  
ցին չսպանել, այլ կենդանի բռնել չախկալին: Թեվոս բի-  
ձեն խորհուրդ եր տալիս սպանել, ասելով, վոր չախկալը  
կատաղի գազան է, կվնասի: Բայց Մուշեղը համառ տղա  
յեր: Ծառի ճյուղերից, թփերի վոստերից թակարդ շինե-  
ցին և ամբողջ գիշերը չարչարվելով, առավոտյան դեմ  
կենդանի բռնեցին չախկալին: Կապեցին դունչն ու վոտ-  
քերը և քարշ տալով լուսաբացին գյուղ բերին:

4

Ամբողջ գյուղը հավաքվել եր կոռպերատիվ խանութի  
առջևի հրապարակը: Որվա հերոսը չախկալն եր ու Թեվոս  
բիձեն: Ել ինչ անեծք ու ծաղր ասես, վոր կանայք չեյին  
թափում վախկոտ Թեվոսի գլխին: Իսկ կոլխոզի նախագահ  
Բագրատը հպարտ-հպարտ հետ արավ շնչակտուր չախկա-  
լի վոտքերը և ծիծաղելով ասաց.

— Ըհը՛, այ ժողովուրդ, այ կնանիք, մեր ձորերում  
ես մի «սատանան» եր մնացել, են ել մեր կոմսոմոլները  
բռնեցին, բերին: Խոստացել ենք Թեվոս բիձին, թող նրան  
լինի:

Գյուղացի Համբոյի տունը կռիվ եր ընկել:

Համբոն ուզում եր իր տասներկու տարեկան Գիքորին  
տանի քաղաք մի գործի տա, վոր մարդ դառնա, աշխա-  
տանք անի: Կինը չեր համաձայնում:

— Չեմ ուզում, իմ քորիս երեխին են անիրավ աշ-  
խարհը մի գցել, չեմ ուզում, — լալիս եր կինը:

Բայց Համբոն չլսեց:

Մի խաղաղ առավոտ եր. մի տխուր առավոտ: Տանը-  
ցիք ու հարևանները յեկան մինչև գյուղի ծերը, Գիքորին  
թշերը պաչեցին ու ճամփա դրին:

Գուշը, Չանին, լաց եր լինում, իսկ փոքրիկ Գալոն  
մոր գրկից ձայն եր տալիս — «Գիքո՛ւ, եդ ո՞ւլ ես դնում,  
հե՛ Գիքո՛ւ»:

Գիքորը շուտ-շուտ յետ եր նայում: Տեսնում եր դեռ  
գյուղի ծերին կանգնած են նրանք ու մայրը դողնոցով  
սրբում է աչքերը: Դարձյալ հոր կողքով վազում կամ ա-  
ռաջն եր ընկնում: Մին ել յետ նայեց՝ գյուղը ծածկվել  
եր բլուրի յետև:

Այնուհետև Գիքորը յետ եր ընկնում:

— Արի հա՛, Գիքոր ջան, արի հա՛, հասանք հա՛, —  
վորդուն կանչելով գնում եր Համբոն, շալակին մի խուր-  
ջին, մեջը մի քանի հաց ու սպանիք ու մի յերկու դաստա  
թութուն:

Իրիկնապահին, յերբ անց եյին կենում սարերը, մի  
անգամ ել յերևաց գյուղը հեռո՛ւ մշուշում:

— Ա՛յ, ապի, մեր տունն են ա հա՛, — ցույց տվավ Գի-  
քորը՝ մատը մեկնելով դեպի գյուղը, թեև տունը իսկի  
չեր յերևում, ու անցան:

Առաջին իրիկունը դոնախ ընկան մի գյուղում: Տան-  
տերը Համբոյի հին ծանոթն եր:

Դեղին սամովարը թշնամ եր տախտի ծերին: Մի  
ջահել աղջիկ շրխըխկացնելով բաժակները լվանում ու  
թեյ եր շինում: Նա մի կարմիր սիրուն չոր ունեք հագին:  
Թեյ եր շինում: Նա մի կարմիր սիրուն չոր ունեք հագին:  
Գիքորն ենտեղ մտքումը դրեց, լոր յերբ քաղաքում փող  
աշխատի, իրենց Չանի համար մի են տեսակ չոր դարկի:

Իրիկնահացից յետը տանտերն ու Համբոն թինկը տը-  
ված, չիբուխ քաշելով զրույց եյին անում: Խոսեցին Գի-



քորի մասին: Տանտերը դովեց Համբոյին, վոր չարչար-  
վում եր վորդուն մարդ չինի:

Հետո սկսեցին խոսել կովի վրա, հացի թանգության  
վրա, բայց Գիքորը շատ եր հոգնած, քունը տարավ:

Մյուս որը քաղաք մտան: Գնացին ծերունի թավաչու  
մոտ: Առավտոր քաղարն իջան:

— Բիճա, եդ երեխին ծառա յես տալո՞ւ,— խանութի  
ներսից հարցրեց մի վաճառական:

— Հրամանք ես,— ասավ Համբոն ու Գիքորին են  
կողմը հրեց:

— Բեր ինձ տուր, յես կբռնեմ,— առաջարկեց վաճա-  
ռականը:

Նրան ասում էյին քաղաղ Արտեմ:

Համբոն քաղաքում Գիքորին ծառա տվավ Բաղադ  
Արտեմի տանը: Պայմանն են եր, վոր Գիքորը պետք է  
տունը մաքրեր, ամանները լվանար, վստամանները սըր-  
բեր, դուքանը բաժին տաներ, ու ես տեսակ մանր ծառա-  
յություններ, մինչև մի տարի:

Մի տարուց յետը քաղաղը նրան պետք է տաներ դու-  
քան, չիներ դուքանի «աշկերտ», ու եսպես Գիքորը պետք  
է բարձրանար:

— Հինգ տարի դեռ փող չեմ տալ—ասավ քաղաղը  
պայման կապելիս:— Թե դրուստը կուղես, դեռ դու պետք  
է տաս, վոր քո վորդին բան է սովորելու: Ախար իսկի բան  
չգիտի...

— Վո՞րտեղից գիտենա, խաղեյին ջան,— պատասխա-  
նեց Համբոն,— գիտենար, ել ուր կբերեյի, յես ել բերել  
եմ, վոր բան սովորի...

— Կսովորի, ամեն բան կսովորի: Ենպես սովորի  
վոր... Ձեր կողմերից են Նիկոյն ինչ է, վոր իրեն համար  
դուքան ունի բաց արած, նա ել ինձ մոտ է մարդ դառել:  
Ամա վերջում մի ջուխտ չայի գդալ ու մի քանի բան դո-  
ղացավ...

— Ձե՛, խաղեյին ջան, սա գողանալ չի: Վոր եղպես  
բան անի, կըգամ կոնիցը կբռնեմ ու Բուռը կըգցեմ:

— Հա՛, վոր ձեռը հալալ է՝ մարդ կդառնա:

— Իմ դարդն ել են ա, աղա ջան, վոր մարդ դառ-

նա. լեզու սովորի, գրել կարդալ սովորի, նստիլ-վեր կե-  
նալ սովորի, մարդ ճանաչի, վոր աշխարհումն ինձ նման  
խեղճ ու զուրկ չմնա... Ինքն ել աչքաբաց երեսա յա,  
մեր գեղական շիրիումն ել գրածանանչ ա ելել, գրի սեն-  
ու սխալտակը ջոկում ա: Ամա աղաչանքս են ա, վոր լավ  
մտիկ անեք, դարիւր երեսա յա, քորիա յա...

Բաղաղը Համբոյին միամտացրեց ու դուրս գնաց բար-  
ձրը ձենով հրամայելով—«Ձայ բերեք, հաց բերեք սրանց  
համար...»:

Հեր ու վորդի նստած էյին քաղաղ Արտեմի խոհանո-  
ցում:

— Դե, հիմի դու գիտես, Գիքոր ջան, տեսնեմ՝ ինչ  
տեսակ տղա յես դուրս գալի... Հենց պետք է անես,  
վոր... յես ի՞նչ գիտեմ... ո՞վ տեր աստված... մոնչաց  
Համբոն ու չիբուխը լցրեց: Այն ինչ Գիքորը չորս կողմն եր  
դիտում:

— Ապի, սրանք բուխարի չունե՞ն:

— Ձե՛, սրանցը փեջն ա, ա՛յ են ա փեջը...

— Կալ ել չունե՞ն:

— Սրանք քաղաքացի յեն, գեղացի հո չեն, վոր կալ  
կալեն:

— Բա վո՞րտեղից են հաց ուտում:

— Փողով առնում են ուտում: Հացն ել են փողով առ-  
նում, յեղն ել, կաթն ել, մածունն ել, փետն ել, ջուրն  
ել...

— Վա՛...

— Բա՛, սրան Թիֆլիզ կասեն: Դու հալա դոչաղ կաց,  
դեռ շատ բան կիմանաս:

— Ապի, սրանք ժամ ունե՞ն:

— Ունեն բա՛ս, սրանք ել մեղ նման հայ քրիստոնյա-  
յեն: Մտիկ արա հա՛—ձեռնաքաշություն չանես: Կարելի  
յա քեզ փորձելու համար փող վեր կըցեն, մոտենաս վոչ:  
Թե վերցնես ել, տար ասա—«խանո՛ւմ, ես ի՛նչ փող ա, ես-  
տեղ վեր ընկած եր. աղա՛, ես բանն եստեղ գտա», թե  
չե...

— Եստեղ ել պրիստավ կա՞ վոր...

— Կա բա՛ս... Վախտ ու անվախտ դես դեն չընկնես,



ձեռք ընկած փողը քող ու փուչ չանես, հազար ու մի պա-  
կասություն ունենք: Քեզ ել լավ պահի, գիշերները բայ  
չըլես, մրսես վոչ... Մի մին յեկողի հետ գիր դարկի...—  
մերթ-մերթ չիբուխը բերանից հանելով վորդուն խրա-  
տում եր Համբոն: Այն ինչ Գիքորը ննջում եր:

— Հացի կտորանքն ու քարթուն կտան, կերակուրի  
թերմացքը կտան, շատ անգամ ել իրենք կուտեն քեզ տալ  
չեն, բան չկա, ծառայի կարգն ե դա... Որեք են կմըթ-  
նեն անց կիկնան...

Շարունակում եր հերն իր խրատը, բայց Գիքորը հո-  
րը թինկը տված քնել եր արդեն:

Նն յերկու որը նա ենքան բան եր տեսել, ես ու են  
կողմը նայել, վոր հոգնել եր բոլորովին:

Մրդով լիքը խանութները, դեղերի նման դարսած  
գույնզգույն չիթերը, տեսակ-տեսակ խաղալիքները, ու-  
սումնարան գնացող կամ դարձող յերեսանների խմբերը,  
իրար յետևից սլացող կառքերը, ուղտերի շարքերը, կա-  
նաչի բարձած ավանակները, թաբախները գլխներին կին-  
տոները... ես ամենի դուռն ու գնդոցը, աղմուկն ու ա-  
ղաղակը իրար խառնված դժվրժում եր նրա գլխում: Յեվ  
նա հոգնել եր ու հորը թինկը տված քնել:

Ես ժամանակ բազազն ու իր կինը վիճում եյին ներսը:  
Կինը տրտնջում եր, վոր ծառան խամ եր, նոր սարիցն յե-  
կած, վայրենի: Իսկ մարդն ուրախ եր, վոր մի քանի տա-  
քով անվարձ ծառա յեր գտել:

— Կը սովորի, հո եղպես չի մնալ,— ասում եր նա  
կնոջը:

— Կը սովորի վորդի, սիրտդ շուռ մի բերի,— խըն-  
դրում եր բազազի պառավ մայրը:

Բայց տիկինն Նատոն չեր համոզվում: Նա արտաս-  
վելով անիծում եր իր բախտը:

Գիքորը մենակ նստած եր բազազ Արտեմի խոհանո-  
ցում: Նա արդեն ծառայության մեջ եր:

Խազեյինի հին գլխարկը մինչև ականջները կոխած  
գլուխը, հին վոտնամանները վոտներին, մի մավի բլուզ

եւ հագին, եսպես վոտից գլուխ փոխված, նա նստած եր  
խոհանոցում ու միտք եր անում, թե ընչի յեկավ իրենց  
գյուղից, վորտեղ ե ընկել, հիմի ինչ պետք ե անի...

Ես ժամանակ ներս մտավ տիկինն Նատոն:

Գիքորը տեղը նստած եր:

Տիկինը մի բան ասավ: Գիքորը լավ չլսեց, թե չհաս-  
կացավ:

— Քե՞զ չեմ ասում, տո արջի քոթոթ:

Գիքորը չիմիտեց, քրտնեց. մին ուղեց հարցնի թե  
ինչ ե ասում, մին ել սիրտ չարավ: Աղջիկ պարոնը բար-  
կացած գուրս գնաց:

— Ը՛հ, հողեմ ձեր գլուխը, վոր վայրենի յեք ու գա-  
լիս եք մարդի գլխի խաթա դառնում... Յես բան եմ աս-  
ում, սա տեղիցն ել ժաժ չի դալի, ձեն ել չի հանում...

— Վերջացավ,— անցավ Գիքորի մտքովը: Բայց ի՞նչ  
շուտ վերջացավ... ինչ վատ վերջացավ... Հիմի յես ի՞նչ  
անեմ... Հերս ել գնաց...

Յեվ ամեն բան վերջացած եր համարում, յերբ իրեն  
իրեն խոսելով ներս մտավ սև շորերով բարի պառավը:  
բազազի մերը:

— Վոր աղջիկ պարոնը ներս ե գալի տեղիցդ ինչի՞  
չես կանգնում, վորդի,— խրատում եր նա Գիքորին, վոր  
բան են հարցնում ձեն հանի... Վո՞նց կըլի եղպես...

Պառավին դեղի եյին ասում:

Դեղին սովորեցնում եր Գիքորին, թե ինչ պետք ե  
անի, ինչպես սամովաբը գցի, վոտնամանները սրբի,  
չոտկը բռնի, ամանները լվանա...

Բացի պառավ դեղին՝ ամենքը նեղացնում եյին նրան:

Բազազի «գուլքանի աչկերտներն» ել չարունակ ծաղրում  
եյին նրան, «քիքի» եյին կանչում, քիթը քաշում, գլխին  
խփում, գլխարկը կոխում ականջները:

Բայց ես բոլորը տանելի բաներ եյին:

Անտանելին են եր, վոր նա չեր կարողանում քաղցին  
դիմանալ: Իրենց տանը, յերբ սովում եր, գնում եր տաշ-  
տից հաց եր առնում, կճուճիցը պանիր եր հանում, ու-  
տելով գնում խաղալու, կամ թե չե՝ փեչն եր դնում, դը-  
նում հանդը: Յերբ ուզում եր՝ մի ծառի տակի կամ աղբրի  
վրա նստում եր ուտում:

Հիմի եստեղ ուրիշ տեսակ եր: Ինչքան ել սոված լի-



ներ՝ պետք է սպասեր մինչև ճաշի ժամանակը դար, եւ եւ ամենքն ուտեցին, հետո ինքը: Եդ անիծած ժամանակն եւ եւրան ուշ եր դալի, վոր խեղճի սիրտը քամ եր ընկնում, թրթռում:

Մին, յերկու, տասը համբերելուց յետը նա սկսեց չորս կողմն աչք ածել խոհանոցում, թե արդյոք մի բան չի՞ գտնիլ ուտելու, վոր սիրտը կանգնեցնի, մինչև ճաշի ժամանակը դա:

Սկզբում ինչ գտնում եր—չոր հացի փշրանք, կրծած վոսկոր թե ուրիշ բան, դցում եր բերանը: Մի քիչ հետո մտածեց խոհանոցի պահարանները վորոնել: Ապա թե սովորեց կերակուրի պղնձից կիսեփ մսի կտոր դուրս քաշել...

Բայց յեթե նկատեցի՞ն...

Ինչ վատ բան դուրս կը գա՞ր...

Յեթե նկատեցի՞ն...

Հապա ի՞նչ անես...

Թողնե՞ս, փախչե՞ս...

Յեւ վիճորն սկսեց մտածել փախչելու մասին:

Բայց վո՞նց փախչես, վո՞ր կողմը փախչես. մենա՛կ, ճամփա չըզիտես, մարդ չես ճանաչում... Իսկ հերը... Եւրան չարչարվեց, խոսեց, խրատեց «որեր են, վորդի, կը մթնեն անց կը կենան»...

Չանգը տվին:

Գիճորը վեր թռավ: Ասել էյին, թե յերբ զանգը տալիս են, գնա տեսնի՛ ով է, ինչ է ուզում: Նա դուրս յեկավ, պատշգամբից նայեց, տեսավ՝ մի պարոն ու մի քանի տիկին դռան առաջը կանգնած:

— Եդ ո՞վ եք, հե՛յ, — ձայն տվավ վերելից:

Ներքեից վերև նայեցին:

Տիկիները ծիծաղեցին, իսկ պարոնը ափսոսանքով հարցրեց:

— Աղջիկ պարոն մի՞տն է:

— Ի՞նչ եք անում, — հարցրեց Գիճորը:

Ներքե ծիծաղն ավելի սաստկացավ:

— Քեզ հարցնում են՝ տա՞նն է, թե չե, — բարկացավ պարոնը:

— Բան ունե՞ք:

Ես աղմուկի վրա տիկինը դուրս յեկավ:

— Քրքրվես դու, գնա դուռը բաց արա, շո՛ւա, — ճչաց ու սկսեց անիծել Գիճորին և իր ամուսնուն: Բայց շուտով հյուրերը յերևացին և նա ժպտալով դիմավորեց:

— Ա՛ր բարե, բարե... Ես վո՞ր խաչիցն եր, ի՞նչպես է վոր մտաբերեցիք...

— Ես վո՞րտեղից եք գտել, — վոտից գլուխ Գիճորին չափելով հարցրեց պարոնը, իսկ տիկիները շարունակ ծիծաղում էյին:

— Ի՞նչ եք նախանձում, կուգեք ձեզ տանք, — կատապի տվավ տիկինն ու հյուրերը խնդալով ներս մտան:

Գիճորին շտապով մի տեղ ուղարկեց ու նրանց յետև վից իսկույն ներս մտավ և տիկին Նատոն:

Իրար առողջություն հարցնելուց յետը հյուրերն սկսեցին պատմել իրենց ներս մտնելու պատմությունը, և դուրս յեկավ ահագին պատմություն:

— Ո՞Ք, սիրտս մաշել է, — գանգատվում եր տիկին Նատոն. — թե իմանա՞ք՝ ինչ եմ քաշում յես դրա ձեռիցը: Ասում եմ՝ դուրս անենք կորչի, բայց թե Արտեմի բնավորությունը դիտեք ելի, ասում է, մեղք է գեղացի յերեխա յե, թող կենա, մի կտոր հաց է, ուտի, կսովորի... Ախր ել յե՞րբ... սիրտս մաշեց...

— Ո՛հ, ո՛հ, ո՛հ, եդ ծառաների բանն ել մի ասի, — Ես ու եւ կողմից սկսեցին բողոքել տիկին հյուրերը:

Մի կես ժամ խոսեցին դեսից-դեգնից, ծառաներից, քաղաքի նորություններից: Հենց եդ խոսակցության ժամանակ ներս մտավ քրտնած Գիճորը:

— Աղջիկ պարոն մի՞րդը բերի:

— Հա, լավ, գնա՛, — հրամայեց տիկինը կարմրելով, իսկ հյուրերն սկսեցին ծիծաղել:

— Աղջիկ պարոն, խաղեյինն ասում եր՝ բալը թանգա, հարկավոր չի...

Ես խոսքերի վրա հյուրերից վոմանք պոռթկացին ու թաչկինակով բերաններին հուպ տվին, վոմանք ել տան: Թե իրավ բալը շատ թանգ է, ես ժամանակին ով է բալն թե իրավ բալը շատ թանգ է, ես ժամանակին ով է բալն ասում: Ապա սկսեցին հանդիմանել, թե ի՞նչ հարկավոր առնում: Ապա ուտելու համար չե՞ն յեկել, ի՞նչ են նեղություն քաշում...



Տանտիկինը մինչև ականջադոթերը կարմրած, աշխատում էր մի կերպ յեղածն ուղղի:

— Ով գիտի ինչ է ասել, չի հասկացել ես հիմարը:

— Ով սուտ ասի գետինը մըտնի, յերդվեց Գիքորը, ու ամեն բան լրացավ:

Հյուրերին ճամփու ղնելուց յետը տիկին Նատոն բարկացած, բարձր-բարձր խոսելով վեր եր քաղում մրգի սեղանը: Նա հայհոյում էր Գիքորին, մեկ-մեկ թվում էր, թե ինչեր է անում նա, անիծում էր իր բախտը, իր ամուսնուն:

— Գա՛, խամ է, վորդի, կտվորի, վորդի... Ինչ ես սիրող շուռ բերում... Ախ աստո՛ժ, ի՞նչի չես հոգիս առնում, — հառաչում էր պառավ դեղին:

— Յերանի մի իմանամ՝ մարդու սրտի ես նեղացած ժամանակը դու ինչ ես խոսում... Սամ է, դե զնացեք դուք չինեցեք, յես հո ձեր գերին չեմ, — ձենն ավելի բարձրացնելով պատասխանեց պառավին հարսը ու շարունակեց իր տրտունջն ու անեծքը մինչև ամուսինը տուն դար:

Ամուսնու վտանձայնը վոր լսեց, սկսեց արտասվել, ավելի բարձր խոսել ու ամաններն իրար գլխով տալ:

— Ասում եմ դուրս արա կորչի. յես ծառայի բանն ել կանեմ, թե խնայում ես՝ փող տաս, կարգին ծառայ բռնես... Լավ է մարդ ծառայի տեղ ել քաշ գա, քան թե ամեն ոք եսենց սիրտը շուռ բերի... Իմ թշնամին հո չե՞ս...

— Ի՞նչ է պատահել, — հարցրեց բազազը՝ տան մեջ տեղը կանգնելով:

— Ի՞նչ պետք է պատահի. ես եր մնացել, վոր խալխի մոտ ել մարդ գետինը մտնի, ես ել արի՞ր. ել ի՞նչ պատահի, վրա թռավ տիկինը ու պատմեց բալի պատմությունը:

— Վա՛հ, — բացականչեց բազազը:

— Ախ աստո՛ժ, — հառաչում էր բարի պառավը՝ դեռ ու դեն ընկնելով:

Բազազը Գիքորին ձեն տվեց:

Թմփթմփացնելով Գիքորը ներս ընկավ:

— Մոտիկ արի, — կանչեց բազազը:

Գիքորը վախեց նրա գույնից, մնաց տեղը կանգնած: Քեզ ասում եմ՝ մոտիկ արի...

Գիքորն ես անգամ շարժվեց, բայց դարձյալ մնաց տեղը կանգնած:

— Տո՛, արջի քոթոթ, յես քեզ ասում եմ՝ աղջիկ պարոնին ասա, դու գալիս ես ղոնախներին ասում, թե բալը թանգ ե՞ր...

— Յես... յես... աղջիկ պարոնին... — ուզում էր արդարանա Գիքորը, բայց խոսքը բերանում՝ ապտակը հասավ, աչքերը կայծակին տվին. գլուխը դիպավ կողքի պատույն ու վեր ընկավ: Հենց ընկած տեղն սկսեց բազազը վտառել անդադար կրկնելով — «Բալը թանգ եր, հը՞... բալը թանգ եր, հը՞...», — աչքերը միշտ չռած անկյունում կծկված Գիքորի վրա, վոր դողալով ու ցավազին մրմընջում էր:

— Վա՛յ, նանի ջան, վա՛յ, նանի ջան, վա՛յ...

Տեսան տանը չի կարողանում ծառայի՝ խանութ տարան Գիքորին: Ննտեղ ապրանք պետք է տային մուշտարիները հետ տանելու, չիթ պետք է ծալեր, խանութը սրբեր, իսկ պարապ ժամանակը մուշտարի կանչեր:

Յեվ ահա Գիքորը հաց է տանում խանութը: Կերակրամանը ձեռքին, մաշված ու տփուլյն, մեծ-մեծ վտանա մանները քաշ տալով անց է կենում կամուրջով: Նայեց ներքև: Քարվանսարանների բարձր պատերին դարկելով ծառս եր լինում Գուռը, վորվորվում, պտըտվում ու ճընշվելով խեղդվում, խուլ թշնամ կամուրջի տակին:

Ափից մոտիկ պտըտում էր մի կանաչ նավակ: Յերկու հոգի կային նրա մեջ. մինը ուռկան էր ձգում, մյուսը նավն եր կառավարում:

«Ա՛յ հիմի կհանի», ասաց Գիքորն ու կանգնած նայում էր ձկնորսներին: Ուռկանը դատարկ դուրս յեկավ:

— Ես մինն իմ բախտիցը. — ասավ Գիքորն ուռկանը ձգելիս: Գիքորի բախտը դատարկ դուրս յեկավ:

— Ես մինն ել մեր Զաննի բախտիցը:

Ես ել դատարկ դուրս յեկավ:

— Ես մինն ել Գալոյի բախտիցը: Գալոն ել եր անբախտ:



— Ես մինն ել բաս...

Բայց եղ ժամանակ մոտիկ քարվանսարայի դռանը աղմուկ բարձրացավ: Մի պարսիկ կապիկ եր պար ածում յերգելով:

Ա՛յ արի, արի, մեյմուն,  
Ճիպոտդ սարի, մեյմուն  
Պառավի պես կուզի կուզ,  
Ջահելի պես պարի, մեյմուն:

Ժողովուրդը հավաքվել եր գլխին ու վազում էյին չորս կողմից: Գիքորն ել վազեց: Աշխատեց կանգնած ժողովրդի արանքը մտնի, առաջ անցնի, չկարողացավ: Վիզը ձգեց, պճեղների վրա կանգնեց ու ճգնում եր անպատճառ տեսնի, թե ինչ ե կատարվում մեջտեղը:

— Ի՞նչ ես ներս խծկվում, տո լածիրակ, գնա քո բանին,— ասավ մի կինտո ու զարկեց գլխին:

Գիքորը հանկարծ սթափվեց ու վազեց դեպի խանութը:

Իրիկունը Գիքորը կուչ եր յեկել խոհանոցում: Դեռ արտասուքը չեւ ցամաքել նրա յերեսին, դեռ այրվում էյին խաղեյինի ապոականների տեղերը, դեռ նոր եր լռել աղջիկ պարոնի ձենը— չվշվացնելով ներս մտավ Վասոն, բազազի աչկերտը: Գիքորին նկատելով՝ նա խսկուչն կանգ առավ ու մասխարա դեմքին լրջություն տալով սպառնալի հարցրեց.

— Կյուբո՞ւմն ուշացար, տո արջի քոթոթ, թե գուրբերնատի՞ մոտ վռազ գործ ունեյիր...

Գիքորը գլուխը չեւ բարձրացնում:

— Ասա մի տեսնեմ ե, տո՛...

Գիքորը լուռ եր:

— Չե՞ս իմանում, տո՛. վո՞րտեղ եյիր ե, վոր եսոր ինձ քաղցած սպանեցիր. վոր մեռնեյի՞ հետո՞...

Եսպես խոսելով կամաց կամաց մոտեցավ, մի քիչ կանգնեց ու հանկարծ զարկեց Գիքորի գլխին: Գիքորը յերկու ձեռքով գլուխը պաշտպանեց ու սեղմվեց պատին: Վասոն պատրաստվում եր մի ուրիշ ձևի հարված ել հասցնելու, բայց դուրսը բարձրացավ խաղեյինի ձայնը: Գալիս եր:

— Ապա տես հիմի քեզ ի՞նչ ե անում,— սպառնաց Վասոն:

«Հիմի ինձ կսպանեն», անցավ Գիքորի մտքովը, ու խեղճի հոգին տապ արավ:

Խաղեյինը արդեն բավականին ծեծել եր խանութում, այժմ միայն հրամայեց հաց չլտան, վոր իմանա թե ինչ բան ե քաղցածությունը: Վտանգն անցավ:

Գիքորը հանգստացավ, թեև լսում եր աղջիկ պարոնի ձայնը, վոր ճչում եր.— Ախր ընչի՞ յես պահում, դուրս արա կորչի ելի, դուրս արա կորչի՛...

Գիքորը կծկվեց վերմակի մեջ, գլուխը կոխեց տակը, տապ արավ:

«Լուսնյակ գիշեր, բուրբուկին քուն չունեմ,  
Ինձ տեսնողը կարծում ե թե տուն չունեմ,  
վա՛յ տուն չունե՛մ...»

Իր յերգը յերգելով Վասոն հաց եր ուտում: Գիքորը վերմակի տակից յերբեմն զգուշ ծիկրակում, թաքուն նայում եր նրան, կրկին աչքերը ծածկում: Նա եւ ուրը հաց չեւ դրել բերանը. ծեծվել ու լաց եր յեղել, այժմ ել քաղցած պառկեց, ու քունը չեւ տանում:

— Հը՞, վո՞նց ա,— սոված քունդ չի՞ տանում հա՛, եղպե՛ս... նկատեց չարածճի Վասոն ու մի կտոր հաց ու պանիր տվավ Գիքորին:— Դե, առ, տեղի տակին թաքուն կեր, խաղեյինը չիմանա:

Գիքորը հափշտակեց հաց ու պանիրը՝ գլուխը կոխեց տեղի տակը, թաքուն ուտում եր ու մտածում: Մտածում եր իրենց տան վրա, եւ ուրերի վրա, յերբ ազատ խաղում եր հանդերում ու լիասիրտ հաց ուտում, մտածում եր եւն յերեկոների վրա, յերբ հերն ու մերը կովում էյին իրեն քաղաք բերելու համար... Մերը լաց եր լինում, չեւ ուզում...

— Ա՛խ, նանի ջան, ի՛նչ լավ եր սիրտդ իմացել,— հառաչում եր Գիքորը տեղի տակին ու հաց ու պանիրն ուտում ախանջը սրած, թե խաղեյինը հո չի գալի:

Իսկ առավոտը կանգնած եր խանութի դռանը:



Սանութի դռանը կանգնած ձեն եր տալիս Գիքորը, մուշտարի յեր կանչում ու բարձր ձենով գովում իրենց ապրանքը:

— Կանչի ե', տո', ինչ ես մնջվել, մնացել կանգնած: Բերանումդ հո ջուր չըկա՞:

— Ե'ստի համեցե՛ք... Ե'ստի համեցե՛ք... — կանչում եր Գիքորը:

Ներսը ծիծաղից թուլանում էյին:

Նրան սովորեցրել էյին, վոր մուշտարի քաշի դեպի իրենց խանութը: Յեվ նա հաճախ բռնում եր ես կամ են անցորդի փեշից, կոպիտ ու համառ սկսում եր քաշել դեպի խանութը, ու բաց չեր թողնում, մինչև վոր մարդը դուրս եր գալիս համբերությունից: Գալիս եր դարձյալ իր տեղը կանգնում ու կանչում:

Ամառվա տոթ որերին, խանութի դռանը յերկար կանգնելուց հոգնած, նա յերբեմն նստած քնում եր խանութի առաջին դարձած չթերի վրա:

Եղ ժամանակ չարածձի ընկերները կամ հարևանները բռնոթի էյին բռնում նրա քթի տակը:

Նա փուշտալով վեր եր թռչում: Շողից թմրած վաճառականները զվարճանում էյին: Իսկ խաղեյինը կուշտ ծիծաղելուց հետո ձայն եր տալիս. — քնում ե'ս, տո, արջի քոթոթ, կանչի ե'...

— Ե'ստի համեցե՛ք, Ե'ստի համեցե՛ք, — ձեն եր տալի Գիքորը:

Մի որ ել Գիքորը յերբ մուշտարի յեր կանչում՝ դիմացից յերկու գյուղացի դուրս յեկան:

— Ա'յ տղա, իսկի ճանաչեցի վոչ, ես ինչ բան եր, — զարմացած բացականչեց գյուղացիներից մինը ու դարձավ ընկերին:

— Բաղո, դու կճանաչեյի՞ր...

— Յես աչքերիցը կճանաչեյի, — պարծեցավ ընկերը:

Ճշմարիտ վոր Գիքորը շատ եր փոխվել, շատ եր մաշվել: Ինքն ել եր փոխվել, չորերն ել: Դժար եր ճանաչելը:

— Ա'յ տղա, ես կարգին մարդ ա դառել... հալա սրա չորերին, սրա շնորհքին... — հիանում էյին գյուղացիները:

— Համբոյի հողը մեր գլխին. տես, նա իր տղին վորտեղ հասցրեց, մեր տղերքը ենտեղ խող են արածացնում...

Այն ինչ Գիքորը իրար յետեից հարցնում եր.

— Իմ մերը վո՞նց ա... մեր յերեխեքը վո՞նց են... Իմ հերն ընչի՞ չեկավ... մեր կովը ծնե՞լ ա թե՛ չե... մեռ գեղումն ո՞վ ա մեռել...

— Ամենն ել լավ են, շատ բարով կանեն, — պատասխանեցին գրուղացիք. — են ա Սուքնանց Ղուկասը մեռավ, մին ել Պուճուրանց պառավը, մնացածը լավ են:

— Բա իմ հերն ինչի՞ չի գալի:

— Քու հերը լավ ուզում ա, ամա վո՞նց գա: Ինքը մենակ մի մարդ ա, սաղ տան ջափեն վրեն...

— Բա բան չեն դարկե՞լ...

— Ինչ ունեն, վոր ինչ դարկեն, դու ձեր տան բանը գիտես վո՞չ: Ես տարի ել հացը բարակ եր, խեղճ հերդ գոռով ծերը ծերին ա հասցնում: Նրանցից ի՞նչ ես ուզում: Թե ունիս, դու դարկի. հրեն խարջ են ուզում — ձեռին դուռ չունի:

— Հո մեր տանիցն ոքմի չի՞ հիվանդացել:

— Չե', են ա ձեր Ծաղիկ կովը Միրզանց գոմի փեկովը ներքե ընկավ սատկեց:

— Ծաղիկը սատկե՞ց...

